ԲԻԶՆԵՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մենագրություն

Կարեն Հովհաննեսի
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

2024
ԵՐԵՎԱՆ

Երաշխավորվել է հրատարակության
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
Գիտական խորհրդի կողմից 17.12.2024 թվականին

ԲԻԶՆԵՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մենագրություն

Կարեն Հովհաննեսի
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
Հեղինակային հրատարակություն
2024

ՀՏԴ 658.114:346.26
ԳՄԴ 65.29+67.404.91
Մ 223

Հեղինակ՝ ***ԿԱՐԵՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ***
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
Գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների համակարգման բաժնի պետ, դատական փորձագետ:

Գրախոսներ՝ ***ԼԻԱՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ***
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ:

ԱԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Գավառի պետական համալսարանի Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ:

Մամիկոնյան Կ.Հ.
Մ 223 **Բիզնեսի իրավական կարգավորման խնդիրները**: Մենագրություն/ Կ.Հ. Մամիկոնյան.- Եր.: Հեղ. հրատ., 2024.- 144 էջ:

Մենագրությունում քննարկվում են տնտեսական հանցագործությունների կանխարգելման համատեքստում Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորման առնչությամբ մի շարք խնդիրներ, որոնք, գործարարության զարգացմանը խոչընդոտող գործոնների շարքում հանդես գալով, միևնույն ժամանակ՝ կապված լինելով երկրի տնտեսական և սոցիալական իրավիճակների փոփոխություններից, դատական փորձագիտության լույսի ներքո ներկայումս պահանջում են լուծումների համար նոր մեթոդական մոտեցումներ: Այդուամենայնիվ, ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխումներն իրենց հերթին համընթաց կերպով կողմնորոշում են տնտեսական հանցագործությունների վարույթներով դատական տնտեսագիտական փորձաքննությունների նշանակման նոր հիմքեր, պայմաններ, ինչը նաև համարժեք կարգով ստեղծում է հետազոտություններում առաջադրված հարցերի պարզման նպատակով կիրառման համար մշակվող մեթոդական նոր մոտեցումների անհրաժեշտություն: Ներկայացվածին վերաբերելի իրավական կարգավորումների հստակեցումները, հնարավորություն կտան տնտեսագիտական փորձագիտական հետազոտությունների իրականացման տեսանկյունից բարելավել ինչպես միասնական մեթոդաբանության ձևավորումը, այնպես էլ՝ արժանահավատ արդյունքների ապահովման շարունակական կատարելագործման գործընթացը:

ISBN 978-9939-0-5168-0

ՀՏԴ 658.114:346.26
ԳՄԴ 65.29+67.404.91
© Մամիկոնյան Կ.Հ., 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 4

§ 1. Բիզնեսի հոգեբանություն. կամ՝ ձեռնարկատիրության վարման նոր կանոններ տնտեսական հանցագործությունների կանխարգելման համատեքստում 6

§ 2. Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորումներում հստակեցումների անհրաժեշտությունը .18

§ 3. Պետական մասնակցությամբ ընկերությունների գույքի ոչ արդյունավետ կառավարման հարցերը.....32

§ 4. Վարկային պայմանագրի խախտման հետևանքները..... 41

§ 5. Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հետաձգված հաշվառման մեխանիզմի կիրառման հիմնավորումը.....56

§ 6. Հարկման դրույքաչափերի հավասարակշռության սկզբունքը և դրա կիրառման հնարավորությունը ՀՀ հարկային համակարգում.....77

§ 7. Ընկերությունների կապիտալում ֆիզիկական անձանց մասնակցությունից ստացված շահաբաժինները հարկումից ազատելու հայեցակետերը..... 102

§ 8. Անկանխիկ դրամարկղային գործառնությունների ոլորտում խնդիրները և իրավական կարգավորումների փոփոխությունների անհրաժեշտությունը..... 123

Օգտագործված գրականություն 135

Նախաբան

Սույն մենագրության շրջանակներում վերլուծության են ենթարկվել տնտեսագիտական փորձագիտական հետազոտությամբ կազմակերպության անվճարունակության հատկանիշների որոշման ուղղությամբ գոյություն ունեցող արդիական մի շարք խնդիրներ՝ իրավական կարգավորումների և առաջարկվող մասնագիտական մեթոդական մոտեցումների առանձնահատկությունների համատեքստում, ինչը հնարավորություն կտա բարելավել դատական փորձաքննություններում միասնական գիտահեն մոտեցումների ձևավորման և արժանահավատ արդյունքների ապահովման շարունակական կատարելագործման գործընթացը: Այդուհանդերձ, պետք է ընդունել, որ կարգավորող օրենսդրական դաշտի բարեփոխումներն իրենց հերթին համընթաց կերպով կողմնորոշում են տնտեսական հանցագործությունների վարույթներով դատական փորձաքննությունների նշանակման նոր հիմքեր, պայմաններ, նաև համարժեք կարգով հիմք դառնում հետազոտություններում առաջադրված հարցերի պարզման նպատակով կիրառման համար մշակվող նոր մեթոդական ցուցումների:

Հանրահայտ է, որ երկրի տնտեսական անկայունությունը, բարձր հարկային բեռը ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման և վարման բարենպաստ ընթացքն ապահովելու առումով ծանր բալաստ են համարվում, որին անուղղակի կերպով ավելացվում է նաև բիզնեսի իրավական կարգավորման առկա խնդիրները, հատկապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հարկային օրենսգրքերում, ինչպես նաև որոշ օրենքներում ձևակերպված առանձին դրույթների խրթինությունն ու օրենսդրական հաճախակի փոփոխությունները, որոնք էլ ձեռնարկատիրական գործունեությանը վերաբերելի օրենսդրությունն իրավական կարգավորման տեսանկյունից դարձնում են անկայուն: Մասնավորապես, ՀՀ հարկային օրենսգրքի հաճախակի փոփոխություններով պայմանավորված՝ տնտեսվարող

սուբյեկտներն էական դժվարություններ են կրում նոր իրավական կարգավորումներին հարմարվելու առումով. որոշ դեպքերում վերջիններիս կիրառումը բավական երկար ժամանակ տնտեսվարողների կողմից ընթանում է խախտումներով, ինչն իհարկե հանգեցնում է անցանկալի հետևանքների: Հաճախակի փոփոխությունները տնտեսվարողներին հնարավորություն չեն տալիս կազմելու կապիտալի կառավարման միջնաժամկետ կամ երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր, ինչպես նաև՝ ճիշտ կառավարել ռիսկերը և կանխատեսել եկամուտների գեներացումը:

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական համալիր փորձագիտական հետազոտություններում ընկերության կապիտալի վերաբերյալ վերոնշյալ խնդրի պարզման մեթոդաբանության առնչությամբ քննարկումները ներկայումս կարևոր են, քանի որ կապիտալի արդյունավետ և նպատակային կառավարումը (ներդրումը, շրջապտույտը, եկամուտների գեներացումը, վերաներդրումը) անմիջականորեն ազդում է ինչպես ընկերության պարտավորությունների մարման հնարավորությունների և ֆինանսական կայունության բացահայտման, այնպես էլ բաժնետերերի շահերի պաշտպանության և կազմակերպության հետագա զարգացման նպատակների վրա:

§ 1. Բիզնեսի հոգեբանություն. կամ՝ ձեռնարկատիրության վարման նոր կանոններ տնտեսական հանցագործությունների կանխարգելման համատեքստում

Տնտեսական հանցագործությունների կանխարգելումը պետական տնտեսական քաղաքականության իրականացման ռազմավարության կարևորագույն սկզբունքներից է: Հայաստանի Հանրապետությունում անկախ պետականության սկզբնավորումից ի վեր բիզնեսի միջավայրն ուղղորդվել է, կարելի է ասել, «առավելագույնս ձգտել շահույթի ստացմանը, և՝ որ այդ նպատակի համար բոլոր միջոցներն արդարացված են» հիմունքներով: Ինչ խոսք, ներկայումս առավել ևս պարզ է դարձել, որ վերոնշյալ ուղենիշն ի սկզբանե վնասել է հասարակությանը՝ գլխավորապես հարվածելով պետության շահին: Այսինքն, կախված ժամանակաշրջանի տեխնոլոգիական վերազինման աստիճանից և իրականացվող վերահսկողական մեխանիզմների արդյունա-վետությունից, համարժեքորեն զարգացել է տնտեսական հանցագործությունների կատարման բնույթը և շոշափելի ծավալների հասցրել պետությանը պատճառված վնասի ու հասարակության վրա վերջինիս ազդեցության չափը:

Տնտեսական օրինաչափություններից մեկը կարելի է դիտարկել այն, երբ տնտեսվարող սուբյեկտն իր առջև նպատակադնում է՝ տնտեսության զարգացմանը համահունչ ապահովել ժամանակակից գործարար միջավարի կազմակերպումը, որի գործոններից առնվազն պետք է համարվեն՝

ա) արդյունավետ կառավարման համակարգի ստեղծումը, որը կաշխատի արագ ու արդյունավետ, բարձր վերահսկողությամբ ու ավելի քիչ ծախսատարությամբ,

բ) կայուն կորպորատիվ վարկանիշը և մրցակցային առավե-լությունների ձեռք բերումը,

գ) հուսալի գործընկերային կապերի ստեղծումը:

Նշված գործոնների վերլուծությունը, թեկուզ և ոչ մասնագիտորեն՝ դիտարկվելով հոգեբանության շրջանակներում,

ընդհանուր առմամբ, տանում է «անձի» դերի բարձրացմանը վերը նշված գործարարության նպատակներին հասնելու համար, ինչպես նաև՝ ձեռնարկատիրական խնդիրների լուծման կամ որոշումների կայացման բարդ իրավիճակների դեպքում անձնական գործողությունների հնարավորինս ուղղորդմանը:

«Բիզնես և անձ» հասկացությունն ամբողջական վերցված, լինելով տնտեսական հարաբերությունների անբաժանելի մաս, բարոյահոգեբանական առումով պահանջում է նաև պարբերաբար ներդրումներ և շարունակական հետաքրքրություն գործարար միջավայրի վրա իր ազդեցության կատարելագործման նկատմամբ՝ այդպիսով պահանջելով ուսումնասիրությունների առանձին ոլորտ, ինչպիսին է բիզնեսի հոգեբանությունը:

Բիզնեսի հոգեբանությունն ի սկզբանե առաջացել է սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման արդյունքում, մասնավորապես՝ հոգեբանության, սոցիոլոգիայի և տնտեսագիտության համակցումից: Բիզնեսի հոգեբանությունը հոգեբանության ժամանակակից գիտության և պրակտիկայի մի ոլորտ է, որը հանդես է գալիս որպես կամուրջ՝ կապելով հոգեբանությունը բիզնեսի գործնական դրսևորումների հետ: Այն ուսումնասիրում է բիզնեսի բազմակողմ և բարդ երևույթները, գործիքներ տրամադրում գործարար միջավայրի և հասարակության միջև արդյունավետ փոխգործակցության համար, գնահատում է ընկերության նպատակները, ռազմավարությունը, աշխատակիցների ունակությունները, բացահայտում այն ուղենիշերը, որոնցով հնարավոր է բարելավել և արդյունավետ դարձնել բիզնեսը: Ըստ որոշ հեղինակների՝ «*Այս նոր ուղղության կայացումը հոգեբանական գիտության մեջ պատասխան է փոքր և միջին բիզնեսի և դրա ներկայացուցիչների առջև ծառացած բազմաթիվ այն խնդիրներին, որոնք պահանջում են պրոֆեսիոնալ հոգեբանների մասնակցություն: Հենց սոցիալ-տնտեսական նոր*

հարաբերությունների զարգացումը բերում է նրան, որ գործնական հոգեբանությունն ակտիվորեն ներգրավվում է բիզնես տիրույթ[1]:

Բիզնեսի հոգեբանության գործընթացի առարկան է համարվում բիզնես միջավայրի տեղեկատվության ըմբռնումն ու գիտակցումը, ճանաչողության ընկալումը, տարբեր ոչ ստանդարտ, ինչպես նաև կոնֆլիկտային իրավիճակներում արդյունավետ ուղիներ փնտրելը, մարդու անընդհատ ձևավորվող և զարգացող մտավոր գործընթացների ճանաչումն ու մարդկային փոխազդեցության կառավարումը: Պետք է ըմբռնել ընկերությունների կառավարիչների, շահագրգիռ այլ կողմերի և աշխատողների միջև ծագած խնդիրների արդյունավետ լուծման ուղիները, աշխատողների գիտակցական առանձնահատկությունները, դրսևորվող վարքագծերը, և, ընդհանուր առմամբ, մարդկանց միջև հարաբերությունների առանձնահատկությունները՝ բիզնեսի էթիկայի վրա ազդող մոտեցումների, ինչպես նաև թիմում բարենպաստ մթնոլորտի և վստահության փոխհարաբերությունների ստեղծման նպատակով:

Հարկ է նշել, որ բիզնեսի հոգեբանությունը դեռս ամբողջովին ձևավորված գիտություն չէ, և գտնվելով իր զարգացման փուլում, առանձին գիտական փաստեր է փոխառնում այնպիսի հոգեբանության ոլորտներից, ինչպիսիք են տնտեսական հոգեբանությունը, աշխատանքի հոգեբանությունը, սոցիալական հոգեբանությունը, ինչպես նաև՝ կախված բիզնեսի տեսակից և միջավայրից անհրաժեշտաբար ուսումնասիրում է հոգեբանության այլ ոլորտների օբյեկտներ: Այնուամենայնիվ, հարկ է առանձին դիտարկել բիզնեսի հոգեբանության և վերը նշված հոգեբանության ոլորտների միջև ընդհանրական մոտեցումները:

Տնտեսական հոգեբանություն. ուսումնասիրում է տնտեսական և մարդկային հոգեբանական վարքագիծը, դրանց

---

[1] Психология бизнеса. Теория и практика : учебник для магистров / под общ. ред. Н. Л. Ивановой, В. А. Штроо, Н. В. Антоновой. — М. : Издательство Юрайт, 2017. — 509 с. Щербатых Ю. В. Психология предпринимательства и бизнеса: Учебное пособие. — СПб.: Питер, 2008. — 304 с./, էջ 7:

օրինաչափությունները, մեխանիզմները, որոնք ազդեցություն ունեն տնտեսական գործունեության՝ ապրանքների և ծառայությունների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման վրա: Տնտեսական հոգեբանության նպատակն է ուսումնասիրել տնտեսական իրականությունը գնահատելու հոգեբանական մոտեցումը, նրա վրա ազդելու, ինչպես նաև համապատասխան դրույթներն ու հիմունքները մշակելու համար: Տնտեսական հոգեբանության ուսումնասիրություններով զբաղվել են այնպիսի հայտնի հեղինակներ, ինչպիսիք են՝ Ջ.Կատոնան, Վ.Ֆ.ՎանՌայը, Ա.Լ.Ժուրավլյովը, Վ.Պ.Պոզնյակովը, Յու.Վ.Շչերբատիխը, Ն.Լ.Իվանովը և այլոք:

Պետք է ընդունել, որ բիզնեսի զարգացումը հիմնված չէ միայն տնտեսական առաջընթացն ապահովող օրենքների և ձեռնարկատիրության վարման կանոնների պահպանման վրա, երբեմն մեծ դեր են խաղում կառավարիչների հուզական և հոգեբանական գործոնները: Շատ ժամանակ անխոհեմ տնտեսական որոշումները կայացվում են ոչ այնքան տրամաբանության, որքան զգացմունքների ազդեցության ներքո՝ անկանխատեսելիությունն արհամարելու, գործընկերների և մրցակիցների տնտեսական վարքագիծը չուսումնասիրելու արդյունքում, ինչն էլ անմիջականորեն իր ազդեցությունն է թողնում բիզնես գործընթացների ընթացքի վրա:

Աշխատանքի հոգեբանություն. հոգեբանության այն ոլորտն է, որն ուսումնասիրում է աշխատանքային գործունեության հոգեբանական բնութագրերի և աշխատանքային հմտությունների զարգացման օրինաչափությունները՝ կախված սոցիալտնտեսական և արտադրական հատուկ պայմաններից, աշխատանքի գործիքներից, աշխատանքային ուսուցման մեթոդներից և աշխատող անձի հոգեբանական որակներից՝ ձևավորելով աշխատանքի նկատմամբ համապատասխան վերաբերմունք: Աշխատանքի հոգեբանության ուսումնասիրություններով զբաղվել են այնպիսի հայտնի հեղինակներ, ինչպիսիք են՝ Ա.Ս.Գուրմանը և

Ա.Մ.Ռազինը, Վ.Ա.Շամիսը, Վ.Գ.Ասեևը, Ա.Վ.Կարպովը, Ե.Ա.Կլիմովը, Յու.Վ.Կոտելովան և այլոք:

Աշխատանքի հոգեբանության ուսումնասիրության օբյեկտը մարդն է, որը խրախուսում, ուղղորդում և կարգավորում է մարդու աշխատանքային գործունեությունը, ինչպես նաև վեր է հանում նրա անհատականության գծերը, որոնց միջոցով էլ իրականացվում է այդ գործունեությունը: Աշխատանքի հոգեբանության առարկան աշխատանքային գործունեության հոգեբանական էությունն է, աշխատողի անձի առանձնահատկությունները, մասնագիտական կարողությունները և նրա փոխազդեցությունը աշխատավայրում մյուս աշխատակիցների և ղեկավարների հետ: Մարդու գործունեության կատարողականությունը մշտապես փոփոխվում է՝ կախված տարբեր գործոնների ազդեցությունից, որոնք աշխատանքային բարենպաստ պայմանների ստեղծման առումով առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում:

Սոցիալական հոգեբանություն. հոգեբանության այն ոլորտն է, որն ուսումնասիրում է մարդկանց կամ նրանց խմբերի վարքի և գործունեության փոխազդեցությունը, հոգեկան երևույթների առաջացման և դրսևորման օրինաչափությունները, որոշում է նրանց սոցիալական խմբերում ընդգրկվածությունը, ինչն էլ հանդիսանում է մարդկանց փոխազդեցության, սոցիալական վերաբերմունքի, անհատի նախատրամադրվածության արդյունք: Այստեղ շատ կարևոր է, թե ինչպես են սոցիալական ճանաչողական խնդիրներն ընկալվում, ինչպիսիք են մարդկանց փոխըմբռնումն ու գնահատումը միմյանց նկատմամբ: Սոցիալա-կան հոգեբանության ուսումնասիրություններով զբաղվել են այնպիսի հայտնի հեղինակներ, ինչպիսիք են՝ Դ.Ջ.Մայերսը, Ռ.Չալդինին, Վ.Ն.Մյասիշևը, Բ.Դ.Պարիգինը, Գ.Մ.Անդրեևան և այլոք:

Սոցիալական հոգեբանությունը փորձում է բացահայտել, թե ինչպես են մարդիկ ներազդում միմյանց վրա տարբեր իրավիճակներում, ինչպես է սոցիալականացումն ազդում նրանց վարքի առանձնահատկությունների վրա, ինչպես է այն ազդում

անհատի հոգեբանացման, անհատի համոզմունքների, բարոյական չափանիշների և սովորույթների վրա:

Այսպիսով, վերլուծելով վերը շարադրվածը, կարելի է ենթադրել, որը բիզնեսի հոգեբանությունն իր մեջ ընդգրկում է հոգեբանության տարբեր ոլորտների ընդհանրացումներ՝ ներառելով տնտեսական և մարդկային հոգեբանական վարքագծի օրինաչափությունները, վարքագծի կանոները, «անձի» հարաբերությունները շրջապատի հետ, աշխատակիցների վարքի և գործունեության փոխազդեցությունը, հոգեկան երևույթների առաջացման և դրսևորման պատճառները, անհատների և անձանց խմբերի միջև հոգեբանական բնութագրերի տարբերությունները, դրանց ազդեցությունը և օրինաչափությունները, որոնք վերջիվերջո ազդում են ընկերություններում տնտեսական որոշումների կայացման և աշխատանքային փոխհարաբերությունների վրա:

Տնտեսական հանցագործությունների բնութագրականներում հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ բիզնես հոգեբանության գիտակներն, ուսումնասիրելով և օգտագործելով գործընկերների և մրցակից կազմակերպությունների հոգեբանական նկարագրերը, աշխատակիցների ինտելեկտուալ, հուզական բնավորությունները, կախված սոցիալ տնտեսական և հոգեբանական վիճակներից, կարողանում են իրենց գործունեության արդյունքում գեր շահույթներ կորզել՝ օգտագործելով աշխատակիցների սոցիալ-տնտեսական և հոգեբանական վիճակը, իսկ գործընկեր կազմակերպություններին՝ չարաշահելով տրված վստահությունը հասցնելով սնանկության եզրին:

Հարկ է նշել, որ բիզնես հոգեբանության առանձին գործիքների կիրառումը ներկայումս մեծ տարածում է ստանում, մասնավորապես՝ բուրգային սխեմաներով գործող և աշխատող ընկերություններում, որոնց գործունեության բնույթը ֆինանսական խախտումների մարմնավորման վառ օրինակ է: Այստեղ տարբեր հոգեբանական ներգործությունների արդյունքում՝ մարդկանց ներգրավելով խոստումների և վստահության ձևավորման միջոցով,

խաբեությամբ կազմակերպում են ֆինանսական բուրգի գործունեություն՝ ստանալով մեծ շահույթներ՝ միևնույն ժամանակ խուսափելով հարկերից:

Այդուհանդերձ, պետք է փաստել, որ բիզնեսի հոգեբանությունը, որպես ձեռնարկատիրության վարման, անձնակազմի կառավարման ու հոգեբանության համատեղում, ներկայացնում է մարդու հոգեբանությունը գործնականում բիզնեսի կազմակերպման նույն գիտահեն հարթությունում: Այն առումով արտահայտվում է, ընդհանուր առմամբ, աշխատողների համար աշխատանքային միջավայրը բարելավելու, ճիշտ կառավարչական որոշումներ ընդունելու կամ որոշումների վրա ազդելու և ձեռնարկատիրական գործունեության արդյունավետությունը բարձրացնելու մեջ:

Այստեղ միաժամանակ կարելի է զուգահեռներ մեջբերել կոմերցիոն հոգեբանության հայեցակարգի բնութագրից. նախ այն ամենից առաջ ենթադրում է գործընկերոջ, մատակարարի, գնորդի վրա բարենպաստ տպավորություն թողնելու կարողությունների համակարգ: Այս համատեքստում պետք է նշել, որ գործարարի հաջողությունը կախված է ոչ միայն ընդհանուր մասնագիտական պատրաստվածությունից, այլ նաև կոմերցիոն հոգեբանության իմացությունից: Կոմերցիոն հոգեբանության հետ սերտորեն կապված են էթիկայի (էթիկետի) հասկացությունները: Էթիկան մարդու բարոյական վարքի նորմերի կամ նրա բարոյական վարքի սկզբունքների համակարգ է: Մարդկային բարոյական վարքագծի այս նորմերում կարող են ներառվել ազնվությունը, պատրաստակամությունը, նվիրվածությունը, վեհանձնությունը, հավատարմությունը սեփական խոսքին և այլն[2]:

Ինչ վերաբերում է տարբեր ազգերի մոտ ձեռնարկատիրության վարման և բիզնես փոխհարաբերությունների հաստատման հոգեկերթվածքի կամ լեզվամտածողության առանձ-

---

[2] Коммерческая деятельность: Учебник / Ф. Г. Панкратов, Н. Ф. Солдатова. — 13-е изд., перераб. и доп. — М.: Издательско-торговая корпорация «Дашков и К°», 2012. — 500 с./, էջ 35-36:

նահատկություններին, ապա պատմականորեն, ըստ ամենայնի, տարբեր մոտեցումներ կարելի է վերհանել, օրինակ.

- Ամերիկացի գործարարների հետ աշխատանքը պահանջում է առավել օպերատիվություն և ձևակերպումներում հստակություն: Ավելի հավանական է հանդիպել շիտակ մարդկանց, ովքեր գնահատում են ազնվությունն ու անկեղծությունը մարդկանց մեջ, արագ անցնում են զրույցի բուն էությանը և ժամանակ չեն վատնում ձևականությունների վրա:
- Անգլիացի գործարարներն ունեն արդարության բարձր զգացում, հետևաբար ձեռնարկատիրության վարման ընթացքում հավատ են դավանում արդար խաղի նկատմամբ և չեն հանդուրժում խորամանկությունն ու խաբեությունը: Ուստի, բանակցությունների ընթացքում հազվադեպ կարելի է լսել ասվածի կատեգորիկ և անմիջական գնահատականներ, փոխարենը՝ օգտագործում են «հնարավոր է», «միգուցե», «ինձ թվում է», «կարծում եմ» և այլ արտահայտություններ:
- Ֆրանսիացի գործարարներն ուշադրությամբ պատրաստվում են առաջիկա բանակցություններին: Նրանք սիրում են մանրակրկիտ ուսումնասիրել ներկայացված առաջարկների բոլոր կողմերն ու հետևանքները: Արդյունքում, նրանք նախօրոք որոշում են իրենց բանակցային դիրքորոշումը, ապա համառորեն պաշտպանում են այն՝ չընդունելով փոխզիջումներ: Ֆրանսիացիներն ավելի նրբակիրթ են, քան քաղաքավարի, թերահավատ և հաշվենկատ, խորամանկ և հնարամիտ, և միևնույն ժամանակ՝ խանդավառ, սրամիտ և առատաձեռն: Երբեմն նրանք ցուցաբերում են վերաբերմունքի պարզություն, երբեմն նրանք ամբարտավան են: Եթե Անգլիայում խոսելու արվեստը հաճախ հանգում է լռելու ունակությանը (անգլիացիները դա տեսնում են զսպվածության և կոռեկտության մեջ), ապա Ֆրանսիայում, որտեղ սիրում են ճարտարախոսել և բառերով փայլել, լուռ մարդը տարակուսանք է առաջացնում և նույնիսկ՝ արհամարհանք:
- Գերմանացի գործարարներն առանձնանում են ճշտապահությամբ, աշխատասիրությամբ, խնայողությամբ,

ռացիոնալությամբ, կազմակերպվածությամբ, խոհեմությամբ և կարգապահություն հաստատելու ցանկությամբ: Շփման ընթացքում գերմանացի գործընկերների հարգանքին կարող են արժանանալ միայն այս հատկանիշներն ընդօրինակողները, ինչը և բարենպաստ ազդեցություն է ունենում բանակցությունների ընթացքի և հետագայում որոշումների կայացման վրա:

- Չինացի գործարարները երբեք որոշումներ չեն կայացնում առանց պայմանադիր բոլոր ասպեկտները մանրակրկիտ ուսումնասիրելու: Սկզբնական փուլում նրանք փորձում են որոշել բանակցողներից յուրաքանչյուրի կարգավիճակը, նրանց հոգեբանական առանձնահատկություններն ու նախասիրու-թյունները: Ըստ այս երկրում տիրող տեսակետների՝ բիզնեսը, դիվանագիտությունը և պատերազմը շատ ընդհանրություններ ունեն: Ամենուր պետք է ուշադիր լինել մանրուքների նկատմամբ, ամենուր պետք է կառուցել ռազմավարություն և նրբանկատ և հետևողական լինել մարտավարության մեջ: Հետևաբար, բանակցությունների առաջին փուլում չինացի գործարար շրջանակների ներկայացուցիչները հիմնականում ուսումնասիրում են իրենց հակառակորդներին (գործընկերներին)՝ չբացելով սեփական խաղաքարտերը և խուսափելով հստակորեն սահմանել համատեղ բիզնեսի գներն ու պայմանները:

- Ճապոնացի գործարարներն առանձնանում են աշխատասիրությամբ, խմբային նորմերին ու ավանդույթներին մնալով հավատարիմ, զարգացած գեղագիտական զգացումով, կարգապահությամբ, պարտքի զգացումով, քաղաքավարությամբ և ինքնատիրապետմամբ[3]:

Ինչպես երևում է՝ զարգացած երկրներում գործարար հարաբերությունների կառուցման ազգային հոգեբանական առանձնահատկությունների հիմքում ընկած է կարգապահությունը,

[3] Business Psychology in Practice: Edited by PAULINE GRANT, /Whurr Publishers 2005/ էջ 252-259:

քաղաքավարիությունը, նրբանկատությունը, ազնվությունն ու արդարամտությունը:

Բիզնեսի հոգեբանության ուսուցումը և հրապարակայնացումը, մասնավորապես՝ մարդկային կապիտալի առանցքային դերի մասին, ձեռնարկատիրության վարման և որոշումների կայացման հոգեբանական սկզբունքների, անձնակազմի արդյունավետ կառավարման լավագույն փորձի և անձի հոգեկերթվածքի գնահատման միջավայրերի վերաբերյալ յուրովի կարևորություն են ներկայացնում յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար, քանզի բիզնեսի հոգեբանության ուսումնասիրությունների սահմանները, տվյալ իրականությանը հատուկ հիմնախնդիրներով և առանձնահատկություններով, ժամանակին զուգընթաց ընդլայնվում են[4]:

Սակայն և, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, բիզնեսի հոգեբանությունը կարող է օգտագործվել ինչպես ձեռնարկատիրության վարման գրեթե բոլոր ասպեկտները բարելավելու համար, այնպես էլ տնտեսական հանցագործությունների կատարումը վաղաժամ կանխելու նպատակով: Այս առումով, կարծում ենք, հատկանշական են վաղուց հայտնի, սակայն և այժմեական կանոնների ընդունումը և ներառումը բիզնեսի կազմակերպման ներկայիս օրակարգ, որով և բիզնեսի ստեղծման պահից ընկերության հիմնադիրների, մասնակիցների, կառավարիչների, շահագրգիռ այլ անձանց և անձնակազմի գործողություններում հնարավոր է ներդնել տնտեսական հանցագործությունների կատարումը վաղաժամ կանխելու առումով նոր հոգեկերտվածք՝ բարելավելով Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրության վարման աշխարհընկալումը, մասնավորապես՝

---

[4] 1)Thinking, Fast and Slow (Hardcover) by Daniel Kahneman (shelved 19 times as business-psychology) published 2011.

2) McKenna, Eugene F., Business psychology and organizational behaviour : an introductory text / Eugene McKenna. 2012 Psychology Press (2020– 6th ed).

1. Բիզնեսի կազմակերպման մեջ պետք է լինել օրինապաշտ, կարգապահ և սկզբունքային.
2. Ձեռնարկատիրությունն անհրաժեշտ է վարել գրագետ և բարեվարք հաղորդակցության միջոցով.
3. Եկամուտների վերահսկման և պլանավորման ժամանակ պետք է խուսափել ժլատություն, ագահություն, դրամապաշտություն (ընչաքաղցություն) ցուցաբերելուց.
4. Աշխատել թիմային սկզբունքով, մասնավորապես՝ ծանր իրավիճակներում դժվարագույն խնդիրների լուծման ժամանակ ոգևորել և հավատ ներշնչել աշխատակիցներին.
5. Շահույթի ավելացմանը զուգահեռ վերանայել աշխատակիցների աշխատավարձերի և պարգևավճարների վճարման համակարգերը, քանզի աշխատակիցներին վճարվող եկամուտը՝ աշխատանքի բարելավմանը շահադրդելու առումով համարվում է առաջնային շարժառիթ.
6. Անձնակազմի կառավարման սկզբունքներում առաջնային տեղ հատկացնել աշխատակիցների մասնագիտական և մարդկային որակների գնահատմանը, ինչպես նաև նրանց սոցիալական հոգածությանը, քանզի մարդն իրեն գնահատված զգալով, բարձրացնում է իր աշխատանքի արդյունավետությունը.
7. Ազնվություն ցուցաբերել գործընկերների, համասեփականատերերի նկատմամբ, նրանց հետ համագործակցել իրենց լավ մտահղացումների շուրջ, գնահատել առաջարկված գաղափարները և նորույթները.
8. Պետական շահը հավասարեցնել ձեռնարկատիրության շահին, եկամուտների ստացման թափանցիկությունը և շահույթը չթաքցնելը դիտարկել առաջին պլանում.
9. Բարեխղճորեն վճարել պետական հարկերը, պարտաճանաչ կերպով կատարել փոխատուների և պայմանադիրների հանդեպ ունեցած պարտավորությունների մարումները:

Ինչ խոսք, վերը թվարկվածներն առավելապես բիզնեսի հոգեբանության ոլորտի դրույթներ ընդունելով, պետք է

տնտեսական հանցագործությունների կանխարգելման համատեքստում անհրաժեշտաբար դիտարկել որպես ձեռնարկատիրության վարման սկզբունքային կանոններ, քանզի նոր աշխարհընկալման ներգործությունը և այս առումով գործողությունների համակարգման վաղ փուլում տնտեսական հանցագործությունների կանխումը, ընդհանուր առմամբ, նվազեցնում է հանցագործությունների կատարումը: Այսինքն, վերստին կարելի է ամրապնդել այն ընդունված կարծիքը, որ հանցագործության կանխարգելումը շատ ավելի արդյունավետ է, քան հանցագործության դեմ պայքարի այլ մեթոդներ:

§ 2. Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորումներում հստակեցումների անհրաժեշտությունը

Ժամանակակից տնտեսական հարաբերությունների պայմաններում կտրուկ տնտեսական փոխակերպումները նոր մարտահրավերներ են առաջադրում ձեռնարկատիրությանը, ինչը ենթադրում է, որ տնտեսվարող սուբյեկտները պետք է շարունակաբար կատարելագործեն իրենց գործունեության կազմակերպման ուղիները, բացահայտեն ու օգտագործեն ոլորտի ներուժը լիարժեք: Սակայն գոյություն ունեն նաև բիզնեսի իրավական կարգավորման խնդիրներ, որոնք էլ գործարարության զարգացմանը խոչընդոտող գործոնների շարքում հանդես գալով, մշտապես պահանջում են նորանոր լուծու մներ՝ կապված երկրի տնտեսական և հասարակության սոցիալական իրավիճակների փոփոխություններից:

Առանց փոքր և միջին ձեռնարկատիրության անհնար է շուկայական տնտեսության լիարժեք գործունեությունը և զարգացումը, քանի որ փոքր ձեռնարկատիրությունը հեշտությամբ հարմարվում է անընդհատ փոփոխվող շուկայական պայմաններին, ստեղծում մրցակցային միջավայր, ինչպես նաև՝ հիմք է ստեղծում քաղաքակիրթ շուկայական հարաբերությունների զարգացման համար: Առկա սոցիալական հիմնախնդիրները լուծելու նպատակով անհրաժեշտ է, որ ներդրվեն պետական կարգավորման առավել արդյունավետ տնտեսական լծակներ: Այսուամենայնիվ, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման դինամիկ պարամետրերը կախված են տարածաշրջանային տնտեսության իրավիճակի փոփոխություններին պետական համապատասխան մարմինների ժամանակին և համարժեք արձագանքից:

Հանրահայտ է, որ երկրի տնտեսական անկայունությունը, աղքատության բարձր շեմը, ոչ նպաստավոր աշխարհագրական

դիրքը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման դժվարությունները, իրացման շուկաների փոքր լինելը և գերհագեցվածությունը, ֆինանսական ռեսուրսների դժվար հասանելիությունը, ինչպես նաև բարձր հարկային բեռը ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման և վարման համար ծանր բալաստ են համարվում, որին անուղղակի կերպով ավելացվում է նաև բիզնեսի իրավական կարգավորման խնդիրները, օրենսդրությունում սահմանված անկայուն դրույթներն ու հաճախակի փոփոխությունները:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման առումով նախ անհրաժեշտ է ընդգծել, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը արտադրական գործընթացներում նախապայման է համարվում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար: Տեղեկատվական տեխնոլոգիաները գնալով ավելի են ներգրավվում տարբեր բիզնես գործընթացներում՝ նոր ծառայությունների և ապրանքների ստեղծումից մինչև արդյունքների վերլուծություն և ռազմավարության օպտիմալացում: Բիզնեսի և տեղեկատվական տեխնոլոգիաների ինտեգրման առավելությունները հսկայական են, այդ թվում՝ ռեսուրսների արդյունավետ օգտագործման, ավտոմատացման, նախագծման և զարգացման, ծախսերի կրճատման, հաճախորդների սպասարկման, հեղինակության բարելավման և այլ ուղղություններով[5]:

Ինչ վերաբերում է վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացմանը, ապա վերջինս պայմանավորված է ժամանակի ընթացքում աճող մարտահրավերներով: Այս խնդիրների շարքում կարելի է առանձնացնել հետևյալները.

- բնակչության աճին համարժեք էներգոռեսուրսների բավարարման խնդիրը,
- էներգետիկ անվտանգության խնդիրը,
- բնապահպանական անվտանգության խնդիրը և այլն:

[5] Աղբյուրը՝ URL:https://ibs.ru/media/rol-informatsionnykh-tekhnologiy-dlya-biznesa-v-2023-godu/.

Վերականգնվող էներգիայի աղբյուրների զարգացումը տնտեսության արդիականացման կարևորագույն գործոններից է: Արդիականացման գործընթացի հաջող իրականացմանը նպաստում է նորարարական արտադրության տարածումը, նոր տեխնոլոգիաների զարգացումը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը[6]:

Յուրաքանչյուր երկրի առանձին տարածաշրջաններ ունեն ավանդաբար զարգացած գյուղատնտեսական ոլորտներ: Պետք է ասել, որ հենց արտադրական կազմակերպությունների ձևերի բազմազանությունն ու դրանց փոխազդեցությունն են որոշում ժամանակակից գյուղատնտեսական տնտեսության բազմազանությունը, ինչպես և՝ համագործակցության ու ինտեգրման գործընթացների զարգացման անհրաժեշտությունը: Ագրոարդյունաբերական համալիրը հիմնված է ագրոինտեգրման վրա, որը սերտորեն կապում է գյուղատնտեսական ձեռնարկություններին և կազմակերպություններին, որոնք ներգրավված են ապրանքների մթերման, առևտրի և դրանց պահպանման մեջ: Ի դեպ, համաշխարհային ժամանակակից պրակտիկան վկայում է, որ ագրոարդյունաբերական համալիրի առաջանցիկ զարգացման տեմպերը մեծապես պայմանավորված կլինեն կոոպերացիայի և ինտեգրման առավելությունների օգտագործմամբ[7]:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ այս առումով ձեռնարկատիրության ոլորտի օժանդակման, մրցունակության բարձրացման և զարգացման համար անհրաժեշտ է կարևորել մի քանի ռազմավարական ուղղություններ, որոնցում կան քննարկման արժանի իրավական կարգավորման հետևյալ խնդիրները.

1. *Հարկային օրենսդրության կայունության ապահովում:* Տնտեսվարող սուբյեկտների համար բացի բարենպաստ օրենսդրական դաշտի առկայությունից, ոչ պակաս էական

---

[6] Егорова М.С., Вестник науки Сибири / 2013. № 3 (9) (URL:http://sjs.tpu.ru).

[7] Федотова Г.В., Сибагатулина Л.М., Кооперация и интеграция в агропромышленном комплексе / Финансовая аналитика: проблемы и решения, 29 (2016) 14–22 (URL:http://fin-izdat.ru/journal/fa/).

նշանակություն ունի նաև օրենսդրական կայունությունը: Հարկային օրենսգրքի հաճախակի փոփոխություններով պայմանավորված՝ տնտեսվարող սուբյեկտներն էական դժվարություններով են հարմարվում նոր իրավական կարգավորումներին. որոշ դեպքերում դրանց կիրառումը բավական երկար ժամանակ տնտեսվարողի կողմից ընթանում է խախտումներով, ինչը հանգեցնում է անցանկալի հետևանքների: Հաճախակի փոփոխությունները տնտեսվարողներին հնարավորություն չեն տալիս կազմել միջնաժամկետ կամ երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր, ինչպես նաև ճիշտ կառավարել ռիսկերը և կանխատեսել եկամուտները:

Տարբերություններ կան նաև հարկային օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջների միջև, որոնք գործնականում անհամապատասխանություններ են առաջացնում հաշվապահական հաշվառման վարման ժամանակ:

Այսպես, ընդհանուր առմամբ ընդունված է համարել, որ հաշվապահական հաշվառման նպատակը՝ ֆինանսական հաշվետվություններից օգտվողներին օբյեկտիվ տեղեկատվություն տրամադրելն է կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակի և դրա փոփոխությունների մասին, իսկ հարկային հաշվառման նպատակը՝ ՀՀ հարկային օրենսգրքին համապատասխան հարկերի հաշվարկումն է, ինչը ենթադրում է ձեռնարկատիրական գործունեությունից հարկման ենթակա եկամուտները հարկային հաշվարկներում ճիշտ արտացոլելելը և հարկի համապատասխան դրույքաչափը կիրառելը: Հարկ է նշել, որ ՀՀ հարկային օրենսգրքում շահութահարկի հարկային բազայի որոշման նպատակով նախատեսված է հաշվապահական հաշվառման մի քանի էական առանձնահատկություններ. խոսքը գնում է նույն օբյեկտի վերաբերյալ հարկային և ֆինանսական տարբերակված հաշվառման ուղղություններով ստացվող տարբեր ցուցանիշների մասին, դրանք են.

- Հարկային և հաշվապահական հաշվառման տեսանկյունից շահույթի և վնասի տարբեր ցուցանիշները. հայեցակարգային առումով ֆինանսական և հարկային հաշվառումներում ակտիվների և պարտավորությունների չափման հասկացություններն ու սահմանումները տարբեր են, ինչն ակնհայտորեն հանգեցնում է ըստ դրանց հաշվարկված եկամուտների և ծախսերի, և, որպես հետևանք՝ հարկային և ֆինանսական տեսույթներից բխող շահույթի և վնասի տարբեր ցուցանիշների.

- Հիմնական միջոցների մաշվածության հետ կապված տարբեր ցուցանիշները, մասնավորապես՝

1) ակտիվների ամորտիզացիոն ժամանակաշրջանները,

2) մաշվածության հաշվառումը,

3) մաշվածության տարբեր եղանակները,

4) տրանսպորտային միջոցի կամ հաստոցի մաշվածությունը և այլն:

ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն հարկ վճարողի հարկային բազան որոշելիս որոշակի տեսակի ծախսերի գծով համախառն եկամտից չեն նվազեցվում սահմանված գումարները գերազանցող ծախսերը: Մինչդեռ ֆինանսական հաշվառման մեջ այս նույն ծախսերը կարող են ամբողջությամբ նվազեցվել եկամտից: Իրականում հարկային հաշվառման մեջ կարող են չնախատեսվել այնպիսի նվազեցումներ (ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ), որոնք այդպիսիք կհամարվեն ֆինանսական հաշվառման տեսանկյունից և այլն[8]:

2. *Ներքին և արտաքին շուկաների հասանելիության բարձրացում:* Հարկ է անդրադառնալ նաև այն իրողությանը, որ փոքր ներքին շուկայի պայմաններում ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքը և ենթակառուցվածքներում առկա թերություններն ու բացթողումները խոչընդոտ են համարվում ապրանքների արտահանումը խթանելու գործում: Բացի այդ,

[8] Мамиконян К.О., Вопросы методологии финансово-экономической экспертизы: Методическое пособие / К.О. Мамиконян. - Ер.: авт. изд., 2022.- 115 с., էջ՝ 57-59:

որոշակի հումքի ներկրման համար անհրաժեշտ է նվազեցնել մաքսային վճարների չափը, քանի որ երբեմն ավելի մատչելի է ներմուծել պատրաստի արտադրանքը, քան Հայաստանում այդ արտադրանքի արտադրման համար անհրաժեշտ հումքը: Արդյունքում տեղական արտադրանքը կարող է կորցնել իր մրցունակությունը:

Պետք է արձանագրել, որ միևնույն ժամանակ արտաքին շուկաներում հայաստանյան տնտեսվարողների ապրանքների մրցունակությունը ցածր է՝ որակի համապատասխան ստան-դարտները չապահովելու պատճառով: Այս առումով իրավակարգավորումները պետք է հստակեցվեն, ինչպես նաև խստացվեն՝ առաջին պլան մղելով որակի միջազգային ստանդարտացմանը մասնակցության և այդ ստանդարտների տեղայնացման գործընթացները:

Երկակի նշանակության ապրանքների հետ կապված խնդիրը նույնպես արդիական է: Բազմաթիվ դեպքերում մաքսային ծառայողների կողմից կասկած է հարուցվում, որ ներմուծվող ապրանքը կարող է ունենալ երկակի օգտագործման կամ կիրառման նպատակ (օրինակ՝ ենթադրվում է, որ ներմուծված յուղանյութերը, սարքավորումները կամ դրանց պահեստամասերը կարող են օգտագործվել ռազմական նպատակներով): Այնուհետև ապրանքների երկակի նշանակությունը գնահատելու համար սկսվում է զննման համապատասխան գործընթաց, որը սակայն բիզնեսի կազմակերպման տեսանկյունից, ըստ էության, ժամանակի կորուստ է համարվում, ինչը և խոսում է այն մասին, որ ապրանքների երկակի օգտագործման թույլտվության կամ մերժման համար ընթացակարգերը և չափանիշները պետք է հնարավորինս հստակեցվեն կամ լրացվեն նորերով:

3. *Ֆինանսների հասանելիության բարելավում:* Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զգալի մասն իր շահութաբերության ապահովումը որոշակիորեն տեսնում է նաև վարկավորման ցածր տոկոսադրույքների պայմաններում: Վերջինս նշանակում է, որ եթե պետության տնտեսական

ռազմավարությունում փոքր և միջին ձեռնարկատիրությունը դասակարգվել է որպես երկրի տնտեսական առաջընթացի և հասարակության բարեկեցության ապահովման շարժիչ ուժ, ապա պետության կողմից պետք է մեխանիզմներ մշակվեն նաև վարկավորման տոկոսադրույքի նվազեցման ուղղությամբ[9]:

Տնտեսության զարգացման առաջին նախապայմաններից է՝ մարդկանց, բիզնեսի և պետության միջև փոխվստահություն ձևավորելը: Փոխվստահությունն իրենից ենթադրում է ներդրողների և պետության միջև արդար ու բաց բանակցություն, որը պետք է հիմնվի օրենսդրական կայունության և վերջինովս էլ պայմանավորված՝ տնտեսական կանխատեսելիության վրա: Այս ամբողջով հանդերձ՝ պետության զարգացման գրավականը պետք է փնտրել հատկապես փոխվստահության մեջ:

Հայտնի է, որ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում կարևորագույն խնդիրներից են ֆինանսավորման և վարկավորման հարցերը, որոնք անխուսափելիորեն պահանջում են նաև պատշաճ իրավական կարգավորման գործընթացի իրականացում: Վարկատուի և վարկառուի միջև անհամաձայնությունը, որն առաջանում է վարկային պայմանագրի կատարման ընթացքում տեղի ունեցած վարկի և տոկոսների մարմանն ուղղվող գումարների չվճարումների (սահմանված ժամկետում չվճարվածի) պարագայում վարկատուի կողմից պայմանագրով սահմանված տուժանքի (տուգանքի, տույժի) հաշվարկման դեպքերում, կախված է վարկատուի կողմից մինչև պայմանագրի գործողության վերջնաժամկետը ժամանակացույցով նախատեսված վճարման ենթակա գումարների նկատմամբ տուժանքի հաշվարկման, ինչպես նաև՝ վարկի մարման վերջնաժամկետից հետո ընկած ժամանակահատվածի համար վճարման ենթակա վարկի մայր գումարի նկատմամբ տոկոսների հաշվարկման պայմանագրով կամ օրենսդրությամբ սահմանված սկզբունքների կիրառության

[9] Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Կարեն Հովհաննեսի Մամիկոնյան.- Եր.: 2019.- 138 էջ, 10-րդ էջում:

հետ[10]: Սակայն կարող է պարզվել, որ վարկի գումարը նշված պայմանների համաձայն 1 տարվա ընթացքում սառեցման (վարկառուի կողմից չվճարման) դեպքում՝ տուժանքների կիրառումն իրականում վարկատուին կբերի 2.9 - 3.8 անգամ (նվազագույնն ընտրելով միայն տույժերի գումարը) ավելի շատ եկամուտ, քան այդ նույն վարկի գումարը նույն ժամանակահատվածով առավելագույն տոկոսադրույքով տրամադրման պարագայում: Նշվածը նույնպես մտածելու տեղիք է տալիս այն առումով, որ փոխադարձ վստահություն հաստատելու համար պետք է ոչ թե խստագույնս պատժել ֆինանսավորման կարիք ունեցող վարկառու ընկերությանը, այլ օգնել, որպեսզի նա ֆինանսապես կայունանա:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով նախատեսված դրույթի, սահմանափակումները սահմանված են պայմանագրով որոշված տուժանքի չափի առնչությամբ, մասնավորապես. 1) պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած ԲՏՀԴ-ի քառապատիկը, 2) պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը[11]: Ի դեպ, վերոնշյալ տուժանքի չափի վերաբերյալ սահմանափակումներին նույնաբովանդակ դրույթներ բացակայում են և՛ Ռուսաստանի Դաշնության և՛ Բելառուսի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքերում, որն, ինչ խոսք, խորհելու տեղիք է տալիս:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ընդգծել նաև, որ ի տարբերություն երկրորդ դրույթի, որտեղ պարզորոշ կերպով համեմատությունը կատարվում է դրամական գումարի հետ, ներկայացված առաջին դրույթում «տուժանքի տարեկան

---

[10] Կարեն Մամիկոնյան, Վարկային պայմանագրի խախտման հետևանքները և հարցերը ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում / Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2022 4-6 (274-276):

[11] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդված:

առավելագույն չափի» որոշման մեխանիզմն այդքան էլ ընբռնելի չէ:

4. *Օրենսդրության կարգավորման շրջանակներում սեփականության իրավունքի ներդրման և իրացման նորմատիվների բարելավում*: Փոքր և միջին բիզնեսի գործունեության իրավական հիմքերը հիմնականում սահմանվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ հարկային օրենսգրքով, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքներով: Այս խնդրի ներքո թերևս անհրաժեշտ է քննարկել հատկապես «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) երկու բացեր:

Առաջին. Օրենքի 18-րդ հոդվածի համաձայն. «2. *Եթե ընկերության կանոնադրությանը համապատասխան, մասնակցի բաժնեմասի (դրա մասի) օտարումը երրորդ անձանց հնարավոր չէ, իսկ ընկերության մյուս մասնակիցները հրաժարվում են այն գնելուց, ապա ընկերությունը պարտավոր է մասնակցի պահանջով ձեռք բերել մասնակցի բաժնեմասը*»:*«3. Ընկերությունը պարտավոր է սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով մասնակցին վճարել բաժնեմասի (դրա մասի) արժեքը*»[12]: Համաձայն Օրենքի 23-րդ հոդվածի՝ բաժնեմասի արժեքը որոշվում է՝ «*ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա*»[13]: Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ ընկերության բաժնեմասի գնման դեպքում Օրենքը հստակ չի սահմանում այն մեխանիզմները, որոնց հիման պետք է որոշվի ընկերության բաժնեմասի շուկայական արժեքը: Ստացվում է, որ մասնակցի

---

[12] «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, 18-րդ հոդված:

[13] «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, 23-րդ հոդված:

բաժնեմասի (դրա մասի) օտարումը երրորդ անձանց եթե հնարավոր չէ, իսկ ընկերության մյուս մասնակիցները հրաժարվում են այն գնելուց, ապա Օրենքի համաձայն ընկերությունը ձեռք է բերելու այդ բաժնեմասը՝ մասնակցին վճարելով կազմակերպության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվություններում արտացոլված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության համապատասխան չափին համամասնորեն: Տնտեսագիտության տեսակետից վերը նշվածը անտրամաբանական է, քանի որ այս մեխանիզմի գործողությունը որևէ կերպ չի առնչվում ընկերության զուտ ակտիվների արժեքի հետ[14]:

Երկրորդ. Օրենքի 33-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն՝ «*Ընդհանուր ժողովն ...., կարող է որոշում ընդունել ավելացնելու ընկերության կանոնադրական կապիտալը՝ ընկերության մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով: Այդ որոշմամբ պետք է սահմանվի լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեքը, ինչպես նաև սահմանվի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացնում է նրա բաժնեմասի անվանական արժեքը: Նշված հարաբերակցությունը չի կարող մեկից և ընկերության զուտ ակտիվների ու կանոնադրական կապիտալի հարաբերությունից մեծ լինել*»[15]:

Պետք է արձանագրել, որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ պահանջներն ու սկզբունքները ընկերության մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման գործընթացի մեթոդաբանության կիրառման առումով դժվարություններ են առաջ բերում, մասնավորապես՝ կապված դրանց մաթեմատիկորեն ձևակերպման և բանաձևային տեսքով

---

[14] Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Կարեն Հովհաննեսի Մամիկոնյան.- Եր.: 2019.- 138 էջ, 86-87 էջերում:

[15] «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք, 33-րդ հոդված:

ներկայացման հետ: Բերված դրույթում միանշանակ չի ըմբռնվում հետևյալ կարևոր ձևակերպումը. «….*ինչպես նաև սահմանվի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացնում է նրա բաժնեմասի անվանական արժեքը*»:

Այստեղ հարկ է մեջբերել Ռուսաստանի Դաշնության համանուն (թարգմանաբար) Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սկզբունքայնորեն նույնաբովանդակ համարվող դրույթին, որում նշված միտքը համապատասխան կերպով է ձևակերպվում. «….*, а также установлено единое для всех участников общества соотношение между стоимостью дополнительного вклада участника общества и суммой, на которую увеличивается номинальная стоимость его доли*»[16]:

Այսինքն, հայերենում ճիշտ է ձևակերպել հետևյալ կերպ. «….*ինչպես նաև սահմանվի* ***<u>մասնակցի</u>*** *լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով* ***ավելանում*** *է նրա բաժնեմասի անվանական արժեքը*»:

Փաստորեն, հաշվի առնելով վերոգրյալը, լրացուցիչ ավանդների ներդրմամբ կանոնադրական կապիտալի ավելացման գործընթացում ենթադրվում է, որ մասնակցի բաժնեմասի չափը (ԲՉ), որը նա կունենա ընկերության կանոնադրական կապիտալում, կկազմի.

$$\text{ԲՉ}(\%) = \frac{(\text{ԲԱԱ} + \text{ԼԱ})}{(\text{ԼԱԸԱ} + \text{ԿԿ})} \times 100 \qquad (1)$$

որտեղ՝

ԲԱԱ-ն՝ մասնակցի բաժնեմասի անվանական արժեքն է,

ԼԱ-ն՝ մասնակցի կողմից կատարված լրացուցիչ ավանդի արժեքն է՝ ԲԱԱ×Գ, որտեղ՝

[16] Федеральный закон "Об обществах с ограниченной ответственностью" (с изм. и доп., вступ. в силу с 01.09.2024).

Գ-ն՝ մասնակցի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական, հարաբերակցությունն է, որով ավելանում է նրա բաժնեմասի անվանական արժեքը՝ ԼԱԲԱ/ԿԿ (սահմանվում է ընկերության մասնակիցների կողմից),

ԼԱԲԱ-ն՝ լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեքն է,

ԿԿ-ն՝ ընկերության կանոնադրական կապիտալը:

<u>Օրինակ.</u>

Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կազմում է 100,000դր., որից 1-ին մասնակցի բաժնեմասնակցությունը կանոնադրական կապիտալում կազմում է 80% (անվանական արժեքը 80,000դր.), իսկ 2-րդ մասնակիցի բաժնեմասնակցությունը կանոնադրական կապիտալում կազմում է 20% (անվանական արժեքը 20,000դր.):

Ընդհանուր ժողովը որոշում է կայացրել կանոնադրական կապիտալի 50,000 դրամով ավելացման մասին, և այսինքն, նշված գումարը մասնակիցների լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեքն է: Ընկերության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներդնելու լրացուցիչ ավանդ, սակայն որն, ըստ հիմնադիրների և մասնակիցների միջև համաձայնության, չպետք է գերազանցի լրացուցիչ ավանդների այդ ընդհանուր արժեքը:

Միասնական հարաբերակցությունը կկազմի՝ 50,000/(100,000)=1/2, կամ՝ 0.5:

Մասնակիցներից յուրաքանչյուրի բաժնեմասնակցությունը կհաշվարկվի հետևյալ կերպ.

- *1-ին մասնակցի բաժնեմասի չափը = (80,000+80,000×0.5) / (100,000+50,000)=80%*
- *2-րդ մասնակցի բաժնեմասի չափը = (20,000+20,000×0.5) / (100,000+50,000)=20%*

Ինչ վերաբերում է ընկերության կանոնադրական կապիտալում երրորդ անձի ներգրավմանը, ապա ընկերության բոլոր մասնակիցների համար բաժնեմասնակցություններն այս դեպքում կհաշվարկվեն հետևյալ կերպ.

$$ԲՉ(\%) = \frac{(ԲԱԱ)}{(ՆԱ + ԿԿ)} \times 100 \qquad (2)$$

որտեղ՝ ՆԱ-ն՝ երրորդ անձի կողմից ներդրված ավանդն է:

Ի դեպ, նաև հարկ է նշել, որ Օրենքում սահմանված վերը **նշված դրույթները կոչված են ապահովելու ներդրում չկատարող մասնակիցների իրավունքների պաշտպանությունը**:

5. *Բիզնեսի ոլորտի զարգացմանն աջակցող տարածաշրջանային կառույցների ստեղծում*: Բարենպաստ միջավայր ստեղծելու համար առանձնահատուկ նշանակություն ունի տարածաշրջանային աջակցության ծրագրի մշակումը, որը պետք է գործարկվի համապատասխան նոր իրավական նորմերի հիման վրա, ինչպես նաև՝ փոքր ձեռնարկատիրության զարգացումը, որի իրականացումը որոշակի նպատակներ պետք է հետապնդի, մասնավորապես՝ այն պետք է ուղղված լինի.

– փոքր ձեռնարկատիրության վերաբերյալ դրական հասարակական կարծիքի ձևավորմանը,

– տարածաշրջանի տնտեսության առաջնահերթ ոլորտներում ինովացիոն գործընթացների ընդլայնման շահերի կենտրոնացմանը,

– տարածաշրջանում սեփականատերերի շերտավորմանը,

– տարածաշրջանի շուկաներ ապրանքներով և ծառայություններով ապահովմանը[17]:

Վերոնշյալի համատեքստում հարկ է պնդել, որ պետական մարմինների հիմնական խնդիրը ոչ միայն փոքր և միջին ձեռնարկություններին ֆինանսական աջակցության ցուցաբերումն է, այլ նաև ձեռնարկատիրական գործունեության զարգացման որակապես նոր հարթակների կազմակերպումը, ինչը պետք է հիմնված լինի համագործակցության նոր սկզբունքների և մեթոդների վրա՝ այդպիսով ստեղծելով բիզնեսի զարգացման

[17]Романенко Е.В., Малое предпринимательство в омской области / Российское предпринимательство, 2008, № 11 (1).

պայմաններ և խթաններ[18]: ի դեպ, այս ուղղությամբ իրավական կարգավորման խնդիրները լայն իմաստով են արտահայտվում՝ որպես տեղում չվերահսկվող առևտրային գործառնություններ:

6. *Ձեռնարկատիրոջ «ազատություն»*: Ընդունված է համարել, որ ձեռնարկատիրության զարգացմանը նպաստող ամենաարդյունավետ լծակներից մեկը՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողի «ազատականության» ապահովումն է. այսինքն՝ նկատի ունենալով, որ նրա սեփականության իրավունքի պաշտպանությանը, փոխանցմանը, այդ իրավունքի արդյունավետ իրացմանը և ազատ ու արդյունավետ գործող շուկայի կայացմանն առնչվող խնդիրները պետք է արագ և օբեկտիվ կերպով իրենց լուծումները գտնեն, որն էլ իհարկե կախված է հիմնականում պետական աջակցության համակարգերից: Այս տեսանկյունից, պետք է ընդլայնվեն ձեռնարկատիրությանը ցուցաբերվող ֆինանսական, իրավական և տեխնոլոգիական աջակցության ծավալները, նաև անընդհատ վերաներմուծվեն դրանց տրամադրման գործիքակազմերն ու ընթացակարգերը[19]:

Կրկին հարկ է նշել, որ տնտեսության զարգացման ներկա փուլում քաղաքակիրթ պայմանների և գործարար միջավայրի ձևավորման գործընթացում ի վերջո ծանրակշիռ նշանակություն ունի պետության կարգավորիչ դերի ամրապնդումը: Կարևոր է նաև ընդգծել, որ թեև պետությունը պետք է ապահովի տնտեսական և քաղաքական ազատության պաշտպանությունը, միևնույն ժամանակ ձեռնարկատիրական գործունեությունը պետք է մնա «անձեռնմխելի», քանի որ վերջինս քաղաքացիների ազատ գործունեությունն է[20]:

---

[18] Актуальные вопросы развития местного самоуправления в России и за рубежом. Сборник статей / Под ред. А.В. Мадьяровой и др.– М., 2009. – 380 с.

[19] Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Կարեն Հովհաննեսի Մամիկոնյան.- Եր.: 2019.- 138 էջ, 4 էջում:

[20] Мамиконян К.О., Пути совершенствования методологии финансово-экономической экспертизы: Методическое пособие. / Publisher: LAP LAMBERT Academic Publishing / 2019 International Book Market Service Ltd., p. 88, 73 էջում:

§ 3. Պետական մասնակցությամբ ընկերությունների գույքի ոչ արդյունավետ կառավարման հարցերը

Անկախության հռչակումը 1990 թվականին ենթադրում էր, որ Հայաստանի Հանրապետությունում պետք է ձևավորվեր շուկայական տնտեսություն, և պետք է լուծվեր մի հիմնախնդիր՝ առաջին հերթին հիմքում դնելով մասնավոր սեփականության իրավունքը: Հանրային (պետական) սեփականությունից անցումը շուկայական հարաբերությունների և դրանց հետագա զարգացումը պետք է երկու հիմնական ճանապարհների զուգակցմամբ իրականացվեր.

- պետական սեփականության վերափոխումը մասնավորի կամ կոլեկտիվ սեփականության,
- մասնավոր սեփականատերերի միջոցներով մասնավոր սեփականության կայացում:

Նախապատվությունը տրվեց պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհմանը և ապապետականացմանը[21]: Հայաստանի Հանրապետությունում պետական գույքի մասնավորեցման գործընթացը սկսվեց 1990-ական թվականներից: Մասնավորեցման ենթակա օբյեկտների ցանկը, մասնավորեցվող պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գույքի ցանկը, պետական գույքի մասնավորեցման ձևը, հաշվառման, գնահատման առանձնահատկությունները և այլ գործառույթներ սահմանվել են օրենքներով և կառավարության որոշումներով, որոնցով ընդունված օրենսդրական կարգավորումները մինչ օրս փոփոխվում և կատարելագործվում են:

Ըստ «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ով ներկայացված տվյալների 2017-2020 թվականներին մասնավորեցման առաջարկվող պետական բաժնեմաս ունեցող

[21] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 171:

ընկերությունների, մասնավորեցման օբյեկտների (այդ թվում՝ մասնավորեցման նախորդ ծրագրերում ընդգրկված) թիվը կազմել է 49 բաժնետիրական ընկերություն: Հարկ է նշել, որ բացի վերոնշյալ ծրագրից վերջին 20-ամյակում գործել են պետական գույքի մասնավորեցման ծրագրեր՝ «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի մասին» և «Պետական գույքի մասնավորեցման 2006-2007 թվականների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կարգավորման շրջանակներում[22]: Հատկանշական է, որ ծրագրում ընդգրկված՝ մասնավորեցվող պետական գույքի ընտրության սկզբունքներից են՝

1) պետական մասնակցությամբ ընկերությունների ոչ արդյունավետ կառավարումը,

2) պետական մասնակցությամբ ընկերությունների ոչ մրցունակ լինելը:

Պետական գույքի մասնավորեցման, ուղղակի եղանակով վաճառքի, պետությանը պատկանող բաժնետոմսերի առք ու վաճառքի հետ կապված գործարքների ենթադրյալ չարաշահումների և օրենսդրական իրավակարգավորումների շրջանցման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների շրջանակներում պարզվել է, որ պետական գույքը (սեփականության իրավունքով պետությանը պատկանող գույք, այդ թվում՝ ընկերությունների՝ պետությանը պատկանող բաժնետոմսեր, ինչպես նաև գույքի առանձին տարրեր) կամ այն ընկերությունների գույքը, որոնց միակ բաժնետերը հանդիսացել է պետությունը, ընդհուպ մինչև պետության համար կարևոր նշանակություն ունեցող ռազմավարական օբյեկտները, որոշ դեպքերում դիտարկվել են որպես ընկերության գործադիր մարմնի կողմից ամբողջապես տնօրինվող գույք, և օտարման գործընթացն իրականացվել է՝ շրջանցելով «Պետական գույքի մասնավորցման

[22] «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենք, հոդված 4:

(սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի պահանջները: Անրաժեշտ է հիշատակել նաև, որ հիմնականում վերոնշյալ գործարքներն իրականացվել են օրենքով սահմանված գնահատման պարտադիր պահանջի խախտումներով, որոշ դեպքերում էլ պետական մասնակցությամբ ընկերությունների (ընկերություն, որի բաժնետոմսերի 50 կամ ավելի տոկոսը պետական կամ համայնքի սեփականությունն է) գույքն օտարվել է որպես բաժնետիրական ընկերության գույք, և արդյունքում պետությանը պատկանող 50 և ավելի տոկոս (ընդհուպ մինչև 100 տոկոս) բաժնետոմսերը կորցրել են իրենց արժեքը, ընկերությունները ճանաչվել են սնանկ և լուծարվել[23]:

Հարկ է նշել, որ գործող իրավական ակտերի համաձայն պետական գույքի օտարման գործարքների համար պարտադիր պահանջ է գույքի գնահատման գործընթացը: «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանվում էեն հետևյալ դրույթները. «*Պետական գույքի օտարման ժամանակ գույքի (բացառությամբ չկառուցապատված առանձին հողամասի) վաճառքի գինը հաշվարկվում է՝ ելնելով գույքի գնահատված արժեքից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգով*», ինչպես նաև «*Պետական գույքն օտարվում է ուղղակի եղանակով՝ 1) գործարար (ներդրումային) ծրագիր ներկայացրած նախօրոք հայտնի գնորդին. 2) տվյալ գույքի վարձակալին, ընդ որում վարձակալներն ունեն գնման նախապատվության իրավունք*»[24]:

Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշմամբ հաստատված «Մասնավորեցվող և օտարվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման» կարգով սահմանված պահանջների համաձայն՝ «*Պետական մասնակցությամբ առևտրա-*

---

[23] ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետների 2023թ.-ի վերլուծական հաշվետվություններ:

[24] «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ՝ 21-րդ և 22-րդ:

յին կազմակերպությունների բաժնետոմսերի (բաժնեմասի) գնահատման ժամանակ գնահատման են ենթակա իրավաբանական անձանց հաշվապահական հաշվեկշռում արտացոլված՝ ա) ակտիվները, բ) պարտավորությունները: Հիմնական միջոցները ենթակա են գնահատման գործունեություն իրականացնող անձանց կողմից ….: Անշարժ գույքը ենթակա է գնահատման՝ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Անշարժ գույքի՝ սույն կետի համաձայն գնահատումը կիրառվում է բացառապես իրավաբանական անձանց պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը գնահատելու նպատակով ….»[25]:

Հարկ է նշել նաև, վերոնշյալ կարգով սահմանվում է նաև, որ պետական մասնակցությամբ ընկերությունների մեկ բաժնետոմսի գնահատված մեծությունը որոշվում է գնահատված ակտիվների մեծությունը նվազեցնելով պարտավորությունների (բացառությամբ հաշվապահական հաշվեկշռի «Ակտիվներին վերաբերող շնորհներ» տողի արժեքի) մեծության չափով և բաժանելով բաժնետոմսերի քանակի վրա:

Փորձագիտական հետազոտությունների արդյունքների վերլուծությամբ կարելի է հանգել այն հետևության, որ հիմնականում շրջանցվել են հենց վերոնշյալ իրավակարգավորումները: Մասնավորապես, այս համատեքստում առանձնացվել և դիտարկվել են հետևյալ փաստերը.

- Պետական գույքի օտարման գործընթացները «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան պահանջների պահպանմամբ չեն իրականացվել, մասնավորապես՝ նշված դեպքում օտարվող պետական գույքի հարցը պետք է դրվեր քվեարկության բաժնետերերի ընդհանուր ժողովում, ինչի արդյունքում էլ պետք է

[25] «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշում, կետեր 3, 4, 14:

համապատասխան որոշում կայացվեր[26]: Այստեղ հարկ է հաշվի առնել, որ խոշոր գործարքների դեպքում, որոնց արժեքը կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը, ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 3/4-ի սեփականության իրավունքով պետությանը պատկանելու պարագայում՝ ի դեմս կառավարման հանձնված պետական գույքի կառավարման համապատասխան պետական և տարածքային կառավարման մարմինների, տրամաբանական է, որ ընդհանուր ժողովի կողմից կայացվելիք վերոնշյալ հարցերի վերաբերյալ որոշումները կանխորոշելի էին խոշոր բաժնետիրոջ օգտին: Ի դեպ, ընկերության գույքի հետ կապված գործարք կնքելու մասին որոշումը, եթե գույքի արժեքը կազմում է ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի մինչև 25 տոկոսը՝ կայացնում է գործադիր մարմինը, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսի դեպքում՝ որոշումը կայացնում է խորհուրդը[27]:

- Անշարժ գույքի վաճառքի կայացած գործարքի գնից ավելի բարձր գնով օտարման պարագայում հնարավոր է, որ կազմակերպությունները կրած կորուստներից և խաթարված բնականոն գործունեությունից զերծ մնային՝ իրենց ֆինանսական կայունությունն ապահովելու նկատառումից ելնելով (սակայն այս պարագայում չի բացառվում նաև, որ այլ գնորդների բացակայությամբ պայմանավորված ավելի բարձր գնով օտարում տեղի ունենալ չէր կարող):

- Հատկանշական է նաև այն, որ գույքի գնահատված արժեքի առկայության պարագայում, գույքի վաճառքի գնի հաշվարկման հետ կապված «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան պահանջը որոշ դեպքերում չի պահպանվել, այն է՝ վաճառքի գինը՝ գույքի գնահատված արժեքից ելնելով չի հաշվարկվել[28]:

---

[26] «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 60 և 61:

[27] «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 61.2:

[28] «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 21:

- Ընկերությունների կողմից օտարված գույքերի գնահատման գործընթացների ընթացքում կիրառված գիտականորեն հիմնավորված մեթոդների համապատասխանության, այդ գույքերի այլ գնորդներին հնարավոր վաճառքների ու իրատեսական գների ճշտման առումով շատ դեպքերում անհրաժեշտ էր նաև իրականացնել դատաապրանքագիտական փորձաքննություն՝ ընդունելով նաև, որ խորհրդատվական բնույթով պայմանավորված անշարժ գույքի շուկայական արժեքը հաշվարկային դրամական մեծություն է և հանդես է գալիս որպես առավել հավանական գին[29]:

Վերոշարադրյալի արդյունքում պետք է ամրագրել, որ առանձին դեպքերում պետության համար կարևոր նշանակության կառույցներն օտարվել են իրական կամ շուկայական արժեքներից ցածր արժեքներով, հետևաբար, վերոհիշյալ իրավակարգավորումները կիրարկման առումով թերի են, ինչի հետևանքով էլ առաջ են եկել մի շարք խնդրահարույց իրավիճակներ, մասնավորապես.

1. Պետական մասնակցությամբ ընկերության գույքը չդիտարկելով պետական գույք՝ օտարվել էլ որպես բաժնետիրական ընկերության գույք՝ առանց օրենսդրությամբ նախատեսված գնահատման կարգի պահանջները կատարելու:

2. Անկախ գնահատող կազմակերպության կատարած գնահատումները եղել են խնդրահարույց, մասնավորապես՝ հնարավոր է, որ մեծ արժեք ունեցող գույքի շուկայական արժեքի որոշման հարցում եղել են սուբյեկտիվ մոտեցումներ կամ կոռուպցիոն դրսևորումներ:

3. Գնահատման գործընթացն անցնելուց հետո պետական մասնակցությամբ ընկերությունների գույքն օտարվել է գնահատված գնից անհամեմատ ցածր գնով՝ տվյալ ժամանակահատվածում այլ գնորդ չլինելու պատճառաբանմամբ:

---

[29] «ՀՀ-ում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 24-ի N 1355-Ն որոշում:

4. Պետության 100 տոկոս բաժնեմասնակցությամբ ընկերություններին պատկանող գույքը, որը կառավարման է հանձնվել պետական համապատասխան մարմնին, գնահատման և օտարման գործարքների, ինչպես նաև խոշոր գործարքների պարագայում, որոնք կատարվում են կառավարության որոշման համաձայն, դիտարկվել է որպես բաժնետիրական ընկերության գույք՝ առանց մասնավորեցման գործընթացն օրենքով սահմանված կարգով անցնելու:

5. Պետական գույքի տնօրինման, մասնավորեցման և օտարման գործարքների պարագայում օրենսդրության տարընթերցումներով պայմանավորված արհեստականորեն առաջացվել են հակասություններ, և պետական բաժնեմասնակցություն ունեցող, ընդհուպ մինչև պետության 100 տոկոս բաժնետոմսերի սեփականատեր լինելու պարագայում բաժնետիրական ընկերությունների գույքը չի դիտարկվել որպես պետական գույք:

6. Պետական մասնակցությամբ ընկերությունների գրեթե ամբողջ գույքն օտարվել է, որի հետևանքով բաժնետոմսերն արժեզրկվել են, որոշ դեպքերում նաև առաջացնելով կանխամտածված սնանկության հատկանիշներ, ընկերությունները ճանաչվել են սնանկ և լուծարվել:

Ի դեպ, կանխամտածված սնանկության հատկանիշներով կատարված տնտեսական հանցագործությունների համատեքստում հարկ է նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ընկերության պարտավորությունների համար լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն է նախատեսված այն բաժնետերերի կամ այլ անձանց գործունեության (անգործության) համար, ովքեր ունեն ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություն, և համարվում են ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները ընկերությանը որոշակի գործողություններ

կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում: Կանխամտածված սնանկության պարագայում տրամաբանական է, որ պատասխանատվության քննության առումով առաջին հերթին քննարկվում են ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի), ով տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները և գործարքներ է կնքում ընկերության անունից, կամ բաժնետոմսերի 3/4 և ավել տոկոս քվեարկող բաժնետոմսերի տիրապետող սեփականատերի գործողությունները:

Այդուամենայնիվ, պետական գույքի մասնավորցման վերաբերյալ օրենսդրության պահանջների տարընթերցումները և շրջանցումները հիմնականում գալիս են պետական գույքի կառավարման մասով որոշակի առումով ոչ ճիշտ սկզբունքների ամրագրման և արդյունավետության չափորոշիչների թերի լինելուց: Այս առումով հարկ է առանձնացնել նորմատիվային մի շարք դրույթներում նոր սկզբունքների և չափորոշիչների մշակման անհրաժեշտությունը, որոնք, ընդհանուր առմամբ, վերոնշյալ իրավիճակներից հետագայում խուսափելու նպատակով հատկապես նպաստելու են պետական գույքի կառավարման ոլորտում հետևյալ սկզբունքների իրագործման իրատեսական ու արդյունավետ ճիշտ իրավակարգավորումների համար.

1. Պետական գույքի կամ պետական մասնակցությամբ ընկերության գույքի և այլ ակտիվների հետ կապված գործառնությունների իրականացման շրջանակներում, հիմք ընդունելով նշված ոլորտի օրենսդրական դաշտում կիրարկվող իրավակարգավորումների նոր պահանջներ, անհրաժեշտ է, որպեսզի հնարավորինս կարճ ժամանակահատվածում կառավարության նախաձեռնությամբ իրականացվի Հայաստանի Հանրապետությունում ամբողջական պետական գույքի պարտադիր նախնական գնահատում (վերագնահատում), որպեսզի ամբողջովին պետական գույքի արժեքը համապատասխանեցվի իրական արժեքին:

2. Պետական գույքի գնահատումն անհրաժեշտ է իրականացնել Հայաստանի Հանրապետությունում Գնահատման ընդհանուր ստանդարտի համաձայն, իսկ իրական արժեքի չափումը՝ «Իրական արժեքի չափում» Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ (ՖՀՄՍ) 13-ով սահմանված սկզբունքների համաձայն[30]:

3. Հնարավորության և իրատեսության սահմաններում մասնավորեցման ենթակա ամբողջ պետական գույքը օրենսդրության պահանջների համաձայն, իրական արժեքով գնահատված, անհրաժեշտ է փոխանցել արդեն իսկ գործող և հատկապես այդ նպատակով նոր կազմակերպվող ընկերությունների կառավարմանը:

4. Անհրաժեշտ է նվազագույնը հատուկ հաշվետվական վերահսկողություն կիրառել պետական գույքը տնօրինող ընկերությունների գործունեության նկատմամբ՝ կապված այդ գույքի օգտագործման կամ շահագործման հետ:

[30] Մամիկոնյան Կ.Հ., Փորձագիտություն և ակտիվների գնահատում /Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան - 2023. - 223 էջ/, էջեր՝ 80-91:

§ 4. Վարկային պայմանագրի խախտման հետևանքները

Տնտեսության զարգացման առաջին նախապայմաններից է՝ մարդկանց, ձեռնարկատիրության և պետության փոխվստահությունը: Փոխվստահությունը ներդրողների շահերի տեսակետից ծնում է ներդրումների նախաձեռնություն, ֆինանսավարկային կազմակերպությունների տեսակետից՝ տնտեսության վարկավորում, պետության տնտեսական քաղաքականության տեսակետից՝ մակրոտնտեսական իրական կայունացում: Փոխվստահությունը նաև իրենից ենթադրում է ներդրողների և պետության միջև արդար ու բաց բանակցություն, որը հիմնվում է օրենսդրական կայունության և վերջինովս էլ պայմանավորված՝ դրա կանխատեսելիության վրա: Այս ամբողջով հանդերձ՝ պետության զարգացման գրավականը պետք է փնտրել հատկապես փոխվստահության մեջ:

Վարկատուի և վարկառուի միջև անհամաձայնությունը, որն առաջանում է վարկային պայմանագրի կատարման ընթացքում տեղի ունեցած վարկի և տոկոսների մարմանն ուղղվող գումարների չվճարումների (սահմանված ժամկետում չվճարվածի, կետանցով վճարվածի) պարագայում վարկատուի կողմից պայմանագրով սահմանված տուժանքի (տուգանքի, տույժի) հաշվարկման դեպքերում, իրենից ենթադրում է վարկատուի կողմից մինչև պայմանագրի գործողության վերջնաժամկետը ժամանակացույցով նախատեսված վճարման ենթակա գումարների նկատմամբ տուժանքի հաշվարկման, ինչպես նաև վարկի մարման վերջնաժամկետից հետո ընկած ժամանակահատվածի համար վճարման ենթակա վարկի մայր գումարի նկատմամբ տոկոսների հաշվարկման պայմանագրով կամ օրենսդրությամբ սահմանված սկզբունքների կիրառության հետ:

Այստեղ է, որ ֆինանսատնտեսագիտական փորձագիտական հետազոտությունների շրջանակներում նախաձեռնողի կողմից առաջադրվող հարցերն իրենց բնույթով հիմնականում հանգում են

հետևյալ ձևակերպմանը. «*Վարկային պայմանագրի շրջանակներում՝ որոշակի ժամանակահատվածում ժամանակին չվճարված վարկի գումարի և հաշվարկված տոկոսների նկատմամբ պայմանագրով նախատեսված վարկի տրման պայմանների համաձայն որքա՞ն տոկոս, տուգանք և տույժ է ենթակա հաշվարկման*»:

Հարկ է ընդգծել, որ փորձագիտական հետազոտությունն իրականացնելու համար անհրաժեշտ է, որպեսզի նախաձեռնողն ապահովի հետևյալ փաստաթղթերը՝ վարկային պայմանագիրը և դրան կից մարումների գրաֆիկը, պայմանագրի կատարման վերաբերյալ քաղվածքները, վճարումների անդորրագրերը, վարկառուի կողմից վարկատուին փոխանցված գումարների վերաբերյալ տեղեկանքները, պարտավորությունների հաստատման փոխադարձ ակտերը և այլ վերաբերելի փաստաթղթեր:

Անդրադառնալով մարումների հերթականության հարցին՝ պետք է արձանագրել, որ այս կապակցությամբ վարկային պայմանագրերում հիմնականում սահմանվում է հետևյալ դրույթը. «*Վարկառուի ստացված վարկը վերադարձնելու և դրա տոկոսների գծով ժամկետանց պարտք առաջանալու դեպքում նշված պարտքի մարման համար վարկառուի կողմից վճարվող գումարներն սկզբում ուղղվում են տուգանքի, հետո տույժերի վճարմանը, տոկոսների գծով պարտքի սպասարկմանը, այնուհետև՝ հիմնական պարտքի գումարի մարմանը*»: Հետևաբար, դժվար չէ պատկերացնել, որ տուժանքների հաշվարկմամբ՝ պարտավորությունների առաջացման պարագայում կուտակվում են բավականին մեծ գումարներ: Այսինքն, պարտքի (վարկի և տոկոսների) գումարի ու տուժանքների հարաբերակցությունն այս առումով ավելի է փոքրանում:

Այդուհանդերձ, փորձագիտական հետազոտությունների կատարման ընթացքում առաջացած հարցերը վերլուծելու նպատակով անհրաժեշտ են իրավիճակային պայմաններ. ըստ այդմ, դիցուք վարկային պայմանագրում ներառված «Կողմերի

պատասխանատվությունը» պարագրաֆում սահմանվել են հետևյալ պայմանները.

«*1. Վարկը ժամանակին չմարելու դեպքում վարկառուն վարկատուին միանվագ վճարում է տուգանք՝ վարկի տվյալ պահին մարման ենթակա գումարի 5 տոկոսի չափով (բայց ոչ պակաս քան 10,000 ՀՀ դրամը) և ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք, որը հաշվարկվում է ժամկետանց վարկի գումարի նկատմամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքով (այսուհետ նաև՝ ԲՏՀԴ):*

2. Վարկի գումարը և հաշվարկված տոկոսները ժամանակին չվճարելու դեպքում վարկառուն վարկատուին ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տույժ՝ վարկի և հաշվարկված տոկոսների մարման ենթակա գումարի օրական 0.2 տոկոսի չափով: Տոկոսների, տուգանքների և տույժերի հաշվարկը կատարվում է մինչ հաշվարկված բոլոր պարտավորությունների ամբողջությամբ կատարումը»:

Այստեղ հարկ է արձանագրել, որ պայմանագրի ավարտի ժամկետից հետո մինչև պարտավորությունների ամբողջական մարման օրն ընկած ժամանակահատվածի (կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը) համար մարման ենթակա վարկի մայր գումարի մնացորդի նկատմամբ տոկոսի այլ չափ հստակ նախատեսված չէ:

Հարկ է հիշել, որ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 47 (ՎԱՐԿ) գլխի 887 հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթի. «*Վարկային պայմանագրից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 46 (Փոխառություն) գլխում նախատեսված կանոնները, եթե այլ բան նախատեսված չէ սույն գլխի կանոններով և վարկային պայմանագրով*»[31]:

[31] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 47 հոդվածի 2-րդ մաս:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «*Եթե փոխառուն սահմանված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը:*

Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առոչինչ է ….»[32]:

Իրավանորմերի համեմատության նպատակով հարկ է մեջբերել Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) քաղաքացիական օրենսգրքի 811-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գրեթե նույնաբովանդակ դրույթը (թարգմանություն). «*Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ փոխառության պայմանագրով, այն դեպքերում, երբ փոխառուն ժամանակին չի վերադարձնում փոխառության գումարը, այդ գումարին տոկոսներ են վճարվում սույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չափով, այն օրվանից, երբ այն պետք է վերադարձվեր մինչև փոխատուին վերադարձնելու օրը՝ անկախ սույն օրենսգրքի 809-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տոկոսների վճարումից*»[33]:

Իսկ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 809-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (թարգմանություն)՝ «*Եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ փոխառության պայմանագրով, փոխատուն իրավունք ունի փոխառության օգտագործման դիմաց փոխառուից տոկոսներ ստանալ պայմանագրով սահմանված չափով և կարգով: Պայմանագրում փոխառության օգտագործման դիմաց տոկոսների չափի վերաբերյալ պայմանի բացակայության դեպքում դրանց*

---

[32] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մաս:

[33] Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 811-րդ հոդվածի 1-ին մաս:

չափը որոշվում է համապատասխան ժամանակահատվածներում գործող Ռուսաստանի Բանկի հիմնական դրույքաչափով»[34]:

Անդրադառնալով Բելառուսի Հանրապետության (ԲՀ) քաղաքացիական օրենսգրքի 762-րդ գրեթե նույնաբովանդակ հոդվածին՝ պետք է նշել, որ վերջինս տարբերվում է հետևյալ ձևակերպմամբ (թարգմանություն)՝ «…*Պայմանագրում տոկոսների չափի վերաբերյալ պայմանի բացակայության դեպքում դրանց չափը որոշվում է փոխառուի կողմից պարտքի կամ դրա մի մասի գումարի վճարման օրվա դրությամբ Բելառուսի Ազգային բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքով*»[35]:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված չափով տոկոսներին անդրադառնալու պարագայում կարելի փաստել, որ այդ տոկոսների գանձումը կիրառվում է փոխառության պայմանագրով սահմանված փոխառության գումարի վերադարձման ժամկետի ավարտից հետո ընկած ժամանակաշրջանի (կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրն ընկած ժամանակահատվածի) համար: Հիշյալ նորմատիվ դրույթով սահմանվել է. «*Ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների*:

---

[34] Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 809-րդ հոդվածի 1-ին մաս:

[35] Բելառուսի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 762-րդ հոդված:

Սույն կետով նախատեսված կարգը գործում է, եթե վնասի հատուցման կամ տոկոսի այլ չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով»[36]:

Ի դեպ, այս նորմատիվ դրույթի կիրառման առնչությամբ առկա է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008թ.-ի նախադեպային որոշումը՝ թիվ 3-241 (ՎԴ) քաղաքացիական գործի վերաբերյալ[37]:

Այստեղ ևս՝ իրավանորմերի համեմատության նպատակով հարկ է մեջբերել ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը, ըստ որի (թարգմանություն)՝ «*Դրամական միջոցների ապօրինի պահման, դրանց վերադարձից խուսափելու, դրանց այլ կետանցով վճարման դեպքում պարտքի գումարի դիմաց ենթակա են վճարման տոկոսներ: Տոկոսների չափը որոշվում է համապատասխան ժամանակաշրջաններում գործող Ռուսաստանի Բանկի հիմնական դրույքաչափով: Այս կանոնները կիրառվում են, եթե օրենքով կամ պայմանագրով այլ չափով տոկոսներ սահմանված չեն*»[38]:

Իսկ ԲՀ քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (թարգմանություն)՝ «*Ուրիշի դրամական միջոցների օգտագործման՝ դրանք ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու համար կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ դրամական միջոցների գումարին վճարվում են տոկոսներ:*

Տոկոսների չափը հաշվարկվում է դրամական պարտավորության կամ դրա մասի կատարման օրվա դրությամբ ԲՀ Ազգային բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքով, բացա-

---

[36] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մաս:

[37] Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 27.03.2008թ.-ին թիվ 3-241 (ՎԴ) քաղաքացիական գործով կայացված որոշում:

[38] Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մաս:

ռությամբ դատական կարգով պարտքի գանձման դեպքերի, երբ դատարանը բավարարում է վարկառուի պահանջները՝ ելնելով որոշման ընդունման օրվա դրությամբ ԲՀ Ազգային բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքից:

Այս կանոնները գործում են, եթե օրենսդրությամբ կամ պայմանագրով տոկոսների այլ չափ նախատեսված չէ»[39]:

Բերված նորմատիվ դրույթների համեմատական վերլուծության արդյունքում հարկ է արձանագրել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենքսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պահանջների, ՌԴ և ԲՀ քաղաքացիական օրենսգրքերի համապատասխան դրույթներով **տոկոսների հաշվարկման ժամանակահատվածին անդրադարձ չի կատարվում**:

ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 395-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն (թարգմանություն)՝ «*Այն դեպքում, երբ կողմերի համաձայնությամբ դրամական պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար նախատեսված է տույժ, ապա սույն հոդվածով նախատեսված տոկոսները գանձման ենթակա չեն, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով*»[40]: Նշված նորմատիվ դրույթի հետ կապված կրկին հարկ է արձանագրել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենքսգրքի 411-րդ հոդվածով սահմանված պահանջների, այստեղ կողմերի միջև կնքված *պայմանագրի գործողության ժամկետին անդրադարձ չի կատարվում*:

Այդուհանդերձ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսները վերաբերում են փոխառության պայմանագրով սահմանված փոխառության գումարի վերադարձման ժամկետի ավարտից հետո

---

[39] Բելառուսի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի 1-ին մաս:

[40] Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 395-րդ հոդվածի 4-րդ մաս:

ընկած ժամանակաշրջանին (կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրն ընկած ժամանակահատվածին):

Ստացվում է, որ եթե պայմանագրում վարկի մարման ժամկետի ավարտից հետո առկա չմարված վարկի գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսի չափ նախատեսված չէ, ապա կետանցի օրվանից սկսած մինչև պարտավորությունների դադարման օրն ընկած ժամանակահատվածի համար այդ գումարի նկատմամբ տոկոսները պետք է հաշվարկվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված՝ ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքով (ԲՏՀԴ-ով), այսինքն, կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ 12%÷365=0.0328 տոկոսով (ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի «Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանելու մասին» 2010թ.-ի նոյեմբերի 9-ի թիվ 283-Ն որոշման համաձայն բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվել է 12 տոկոս, և մինչ օրս անփոփոխ է)[41]:

Անդրադառնալով տոկոսների չափին և հաշվարկման կարգին՝ հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասով նշված դրույթի համաձայն՝ *«Փոխառության պայմանագրում հստակ պետք է սահմանվեն տոկոսների չափը և հաշվարկման կարգը: Փոխառության պայմանագրի կնքման պահին տոկոսների չափը չի կարող գերազանցել ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը»*, այսինքն՝ տրվող փախառության տոկոսների առավելագույն չափը ներկա պահին կազմում է 24%=(2×12%)[42]:

Հարկ է նշել նաև, որ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վերոգրյալ դրույթները, ինչպես նաև «Սպառողական

---

[41] «Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանելու մասին» ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2010թ.-ի նոյեմբերի 9-ի թիվ 283-Ն որոշում:

[42] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մաս:

կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «*Կրեդիտավորման պայմանագիրը առնվազն ներառում է՝ …. 5) սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների), դրանց կիրառման դեպքերի և կարգի վերաբերյալ նշումներ*»[43] նախատեսված պահանջը, վերը բերված օրինակի պայմաններում վարկառուի կողմից վարկային պայմանագրով սահմանված վճարները ժամանակին չկատարելու կամ ոչ լրիվ չափով կատարելու դեպքում վարկատուի կողմից պայմանագրով նախատեսված տուժանքի, այն է՝ «*Տուգանքի վճարում՝ վարկի տվյալ պահին մարման ենթակա գումարի նկատմամբ որոշակի տոկոսի չափով և ուշացման յուրաքանչյուր օրվա համար տուգանքի վճարում՝ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված ԲՏՀԴ-ով*», ինչպես նաև պայմանագրով նախատեսված տուժանքի, այն է՝ «*ուշացման յուրաքանչյուր օրվա համար տույժի վճարում՝ վարկի և հաշվարկված տոկոսների մարման ենթակա գումարի օրական որոշակի տոկոսի չափով*» կիրառումը, սույն աշխատանքի շրջանակներում՝ ֆինանսավարկային արդար հարաբերությունների տեսանկյունից, պարտավորության խախտման հետևանքներին անհամաչափ է դիտարկվում:

Բերված պայմաններից ելնելով, կարելի է եզրակացնել, որ վարկային պայմանագրով սահմանված մարման ժամանակացույցի ամսաթվերից կետանցի յուրաքանչյուր օրվա համար միևնույն վճարման ենթակա վարկի մայր գումարի նկատմամբ գործնականում լինում են դեպքեր, երբ պատասխանատվություն է սահմանվում միաժամանակ երկու տարբեր տուժանքներով. մի դեպքում՝ տուգանք ԲՏՀԴ-ի չափով, մյուս դեպքում՝ տույժ որոշակի տոկոսադրույքի չափով: Նշված իրավիճակում տուժանքը դատական կարգով պակասեցվում է համաձայն ՀՀ քաղա-

[43] «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մաս:

քացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով նախատեսված դրույթի՝ մինչև 08.01.2018թ.-ը գործող խմբագրությամբ՝ «*Եթե վճարման ենթակա փոխանցումն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն*», իսկ նոր խմբագրությամբ՝ «*3. Դատարանը կամ ֆինանսական համակարգի հաշտարարը պարտապանի պահանջով պակասեցնում է վճարման ենթակա կամ վճարված պայմանագրով որոշված փոխանցման չափը, եթե փոխանցումն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, և՝….*» որոշակի պայմանների դեպքում[44]:

Իրավանորմերում ներկայացված դրույթների համեմատության նպատակով հարկ է մեջբերել ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 333 հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը (թարգմանություն). «*Եթե վճարման ենթակա փոխանցումն ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, ապա դատարանն իրավունք ունի նվազեցնել փոխանցումը,* իսկ տոկոսագումարի վերաբերյալ նույն օրենսգրքի 395-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթի համաձայն (թարգմանություն). «*Եթե վճարման ենթակա տոկոսագումարը ակնհայտորեն անհամաչափ է պարտավորության խախտման հետևանքներին, ապա դատարանը, պարտապանի դիմումի համաձայն, իրավունք ունի նվազեցնել պայմանագրով նախատեսված տոկոսները, բայց ոչ պակաս, քան սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափի հիման վրա որոշված չափը*»[45]:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 881-րդ հոդվածով նախատեսված՝ սահմանված ժամկետում չվերադարձված փոխառության գումարի նկատմամբ Օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսների

---

[44] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդված:

[45] Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքի 33 հոդվածի 1-ին մաս, 395-րդ հոդվածի 6-րդ մաս:

հաշվարկման պահանջի և նույն հոդվածով սահմանված՝ *«Փոխառության պայմանագրում այլ պայմաններով տոկոսներ վճարելու վերաբերյալ համաձայնությունն առոչինչ է»* նորմատիվ դրույթի պահանջի կիրառմանը, ապա պարտավորությունների առաջացման իրավիճակներում՝ ֆինանսավարկային հարաբերությունների տեսանկյունից սույն աշխատանքի շրջանակներում դիտվում է տրամաբանական: Այսուհանդերձ, հարկ է անդրադառնալ ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից տարվող, որոշ դեպքերում նաև կոշտ պատասխանատվության միջոցների կիրառման քաղաքականությանը: Պետք է նշել, որ պայմանագրով նախատեսված տուժանքները, ինչպես քննարկվեց վերը բերված օրինակում, պարտավորությունների խախտման հետևանքներին անհամաչափ կարող են դիտարկվել, ինչն առանձին իրավիճակներում կարող է բարդացնել վարկառուի գործունեությունը՝ իր մոտ ֆինանսական վիճակի հետ անհամատեղելի պարտավորությունների առաջացմամբ:

Իրավացիորեն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով նախատեսված կարգով սահմանափակումներ են սահմանվել պայմանագրով որոշված տուժանքի չափի առնչությամբ, մասնավորապես՝ 1) *պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած ԲՏՀԴ-ի քառապատիկը*, և 2) *պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը*[46]: Ի դեպ, վերը բերված տուժանքի չափի վերաբերյալ սահմանափակումներին նույնաբովանդակ դրույթներ բացակայում են և՛ ՌԴ և՛ ԲՀ քաղաքացիական օրենսգրքերում, որն, ինչ խոսք, խորհելու տեղիք է տալիս: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ընդգծել նաև, որ ի տարբերություն երկրորդ դրույթի, որտեղ պարզորոշ կերպով համեմատությունը կատարվում է դրամական գումարի առումով, ներկայացված առաջին դրույթում «տուժանքի

[46] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդված:

տարեկան առավելագույն չափի» որոշման մեխանիզմն այդքան էլ ընբռնելի չէ: Նախ, հարկ է մեջբերել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տուժանք հասկացությունը, այն է. «*Տուժանք (տուգանք, տույժ) համարվում է օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում ….*»[47]:

Կարելի՞ է արդյոք ենթադրել, որ **վարկը ժամանակին չմարելու դեպքում տուգանքի**՝ վարկի տվյալ պահին մարման ենթակա գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսի (մեր օրինակում՝ 5%) և ուշացման յուրաքանչյուր օրվա համար ժամկետանց վարկի գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքի (օրական ԲՏՀԴ-ն 12%/365=0.0328%), ինչպես նաև՝ **վարկի գումարը և հաշվարկված տոկոսները ժամանակին չվճարելու դեպքում տույժի**՝ վարկի և հաշվարկված տոկոսների մարման ենթակա գումարի նկատմամբ օրական տոկոսի (բերված օրինակում՝ 0.2 %) ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 48 (4×12%) տոկոսը: Առաջին տարբերակում՝ եթե դիտարկում ենք կիրառվող տոկոսադրույքների գումարը, ապա անհամադրելիությունը կարծես ակնհայտ է դառնում: Երկրորդ տարբերակում՝ տարեկան կտրվածքով կիրառված տուժանքների չափը դրամական գումարի տեսքով պետք է համեմատել տարվա ընթացքում մարման ենթակա վարկի գումարի նկատմամբ ԲՏՀԴ-ի քառապատիկի՝ 48%-ի հաշվարկմամբ ստացված դրամական գումարի հետ:

Համադրելիությունը ստուգելու նպատակով ներկայացվող օրինակում կատարված հաշվարկում տարվա կտրվածքով վճարման ենթակա վարկի գումարը ընդհանուր 1,200,000 ՀՀ դրամ է՝ առանց տոկոսների դիտարկման (ամսական վճարման

[47] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մաս:

ենթակա է 100,000 ՀՀ դրամ), որի նկատմամբ էլ կիրառվելու են բերված օրինակում տուժանքի պայմանները: Դիցուք վարկառուն վարկային պայմանագրով նախատեսված ժամանակացույցով վճարումներն ուշացրել է տարվա ընթացում առավելագույն խախտմամբ, այն է՝ բոլոր 12 ամիսների ընթացքում որևէ վճարում չի իրականացրել (տե՛ս ներակայացված հաշվարկային աղյուսակը):

Աղյուսակ 1.

Տուժանքների և տոկոսների հաշվարկ

Վարկի գումարը՝ 1,200,000 ՀՀ դրամ			**Խախտման պայմաններում հաշվարկվող**			**Սովորական պայմաններում՝ տարեկան առավելագույնը 24%-ով**		
Ուշացման օրեր	***Ամսաթիվ***	***Վարկի գումար***	***Տուգանք***		***Տույժ***	***Ընդամենը մարում***	***Վարկի մարում***	***Տոկոսների մարում***
			5%	***0.03%***	***0.20%***			
	12.2023	100,000						
365	01.2024	100,000	5,000	11,972	73,000	113,472	89,012	24,460
334	02.2024	100,000	5,000	10,955	66,800	113,472	90,826	22,646
303	03.2024	100,000	5,000	9,938	60,600	113,472	94,690	18,782
275	04.2024	100,000	5,000	9,020	55,000	113,472	94,608	18,864
244	05.2024	100,000	5,000	8,003	48,800	113,472	97,082	16,390
214	06.2024	100,000	5,000	7,019	42,800	113,472	98,515	14,957
183	07.2024	100,000	5,000	6,002	36,600	113,472	100,941	12,531
153	08.2024	100,000	5,000	5,018	30,600	113,472	102,581	10,891
122	09.2024	100,000	5,000	4,002	24,400	113,472	104,671	8,801
91	10.2024	100,000	5,000	2,985	18,200	113,472	107,020	6,452
61	11.2024	100,000	5,000	2,001	12,200	113,472	108,987	4,486
30	12.2024	*612,900*	5,000	984	6,000	113,259	111,068	2,191
ԸՆԴԱՄԵՆԸ		***1,812,000***	***60,000***	***77,900***	***475,000***	***1,361,451***	***1,200,000***	***161,451***
		ԸՆԴԱՄԵՆԸ	***612,900***					

Նկատենք, որ ներկայացված օրինակում ստացված թվերի միջև ինչ որ առումով համադրելիությունն առկա է, քանի որ տարեկան կտրվածքով մարման ենթակա գումարի նկատմամբ ԲՏՀԴ-ի քառապատիկի՝ 48%-ի հաշվարկմամբ ստացված 576,000 (1,200,000×48%) ՀՀ դրամ և հաշվարկային աղյուսակով տուժանքների առավելագույն կիրառմամբ ստացված 612,900 ՀՀ դրամ գումարներն ըստ ամենայնի համեմատելի են: Բերված հաշվարկը թույլ է տալիս մեկ այլ համեմատություն ևս կատարել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 879-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն առավելագույն տոկոսադրույքով՝ 24%-ով տրամադրված վարկի գումարի նկատմամբ անուիտետային եղանակով հաշվարկված տոկոսային եկամուտը 12 ամսվա կտրվածքով հաշվարկային աղյուսակում կազմում է՝ 161,451 ՀՀ դրամ: Այսինքն, վարկատուի տրամադրած 1,200,000 ՀՀ դրամ վարկի գումարը նշված պայմանների համաձայն 12 ամսվա ընթացքում սառեցման (վարկառուի կողմից չվճարման) դեպքում՝ տուժանքների կիրառմամբ փաստորեն բերում է 2.9-3.8 անգամ (նվազագույնն ընտրելով միայն տույժերի գումարը) ավելի շատ եկամուտ, քան այդ նույն վարկի գումարը նույն ժամանակահատվածով առավելագույն տոկոսադրույքով տրամադրման պարագայում:

Ստացվում է, որ վարկատուի համար շատ ավելի ձեռնտու է տուժանքներ հավաքագրելը, քան տոկոսներ գանձելը, իսկ բռնագանձվող գրավի առարկաների մասով ստվերային գործարքների վրաբերյալ սույն աշխատանքում հասկանալիորեն անդրադարձ չի կատարվում: «Ինչու՞ է այսպե՛ս փողը թանկ ՀՀ ֆինանսական շուկայում». այս հարցադրումն արդեն 30 տարի է ինչ գոյություն ունի մեր իրականությանում, որի պատասխանը կարծես թե պարզ է, սակայն՝ ո՛չ վստահեցնող: Պետք է հասկանալ, որ վստահություն ձեռք բերելու համար պետք է ոչ թե խստագույնս պատժել վարկառուին, այլ՝ օգնել նրան ոտքի կանգնելու:

Այսուհանդերձ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածով նախատեսված՝ «*պայմանագրով որոշված տուժանքի*

տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած ԲՏՀԴ-ի քառապատիկը» դրույթը բավականին անորոշ է և տարիմաստ մեկնաբանությունների տեղիք է տալիս, հետևաբար՝ անհրաժեշտություն ունի և՛ հստակեցման և՛ սահմանափակումների խստացման: Հարկ է նաև արդարամտորեն արձանագրել, որ նման իրողությունն իրապես անհամադրելի է Հայաստանի Հանրապետության ներկայիս զարգացող ֆինան-սական շուկայի սկզբունքներին և հատկապես՝ տնտեսական քաղաքականության սոցիալական բովանդակությանը:

§ 5. Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հետաձգված հաշվառման մեխանիզմի կիրառման հիմնավորումը

Հանրահայտ է, որ ստվերային տնտեսության կրճատումը, ձեռնարկատիրության խթանումը և, ընդհանուր առմամբ, տնտեսական միջավայրի բարելավումն ու զարգացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի տվյալ երկրի տնտեսական միջավայրում համարժեքորեն գործեն հատկապես հարկային համակարգի մեխանիզմները:

ԱԱՀ-ի ներդրումը զարգացած երկրների հարկային համակարգերում սկսվում է անցյալ դարի երկրորդ կեսից՝ այն բանից հետո, երբ այն տեսականորեն մշակվեց Ֆրանսիայում 1954 թվականին: Պատմությունը չգիտի մեկ այլ հարկի օրինակ, երբ հարկն այդքան արագ տեսական ոլորտից անցել է գործնականի և գերիշխող դիրք զբաղեցրել սպառման հարկերի մեջ աշխարհի շատ երկրների բյուջեներում: Հիմնական սկզբունքն իհարկե այն է, որ ԱԱՀ-ն հավաքվում է ապրանքների արտադրության, առևտրի (շրջանառության) և ծառայությունների մատուցման յուրաքանչյուր փուլում, ապրանք ձեռքբերողը կամ ծառայությունից օգտվողը անուղղակի կերպով ենթարկվում են հարկման, իսկ վերջնական վճարողը դառնում է սպառող քաղաքացին:

ԱԱՀ-ի կիրառումը՝ որպես անուղղակի հարկ պարտադիր պայման է թե՛ եվրամիության (ԵՄ) անդամ, թե՛ եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) անդամ բոլոր պետությունների համար, ներկայումս ավելի քան 160 երկրներում կիրառվում է ԱԱՀ-ն, և, բացի այդ, ցանկացած երկրի հարկագանձման ծավալներում այն գերակշիռ մաս է կազմում:

Պաշտոնական վիճակագրության համաձայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների 90 տոկոսից ավել բաժին է ընկնում հարկային եկամուտներին, որի կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը պատկանում է ավելացված արժեքի հարկին (այսուհետ՝ նաև ԱԱՀ), որը վերջին

տարիներին տատանվում է 33-36 տոկոսի սահմաններում: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ-ն հանդիսանում է ներմուծման վրա հիմնված տնտեսություն ունեցող երկիր և հավաքագրված ԱԱՀ-ի ծավալների 50%-ից ավելին բաժին է ընկնում ներմուծմանը:

Ստորև հակիրճ կերպով ներկայացվել են մի շարք զարգացած երկրներում ձեռնարկատիրական գործունեության հարկման ընդհանուր համակարգերը և հարկման դրույքաչափերը. իսկ թե ինչու՞ զարգացած երկրների օրինակով՝ պետք է արձանագրել, որ հենց զարգացած երկրներն են համաշխարհային տնտեսության մեջ առաջատար դիրքեր զբաղեցնում, միևնույն ժամանակ նրանք արտադրում են համախառն ներքին արդյունքի գրեթե 3/4 մասը և ստեղծում աշխարհի տնտեսական, գիտատեխիկական ներուժի մեծ մասը: Կարծում ենք, որ առաջանցիկ տեմպեր արձանագրելու համար Հայաստանի Հանրապետությունը պետք է հետամուտ լինի առաջին հերթին զարգացած երկրներում տարիների փորձով ամրապնդված տնտեսական գործուն մեխանիզմների՝ սեփական տնտեսությունում ներդրման գործընթացներին:

Մեծ Բրիտանիայում ԱԱՀ-ն գանձվում է կազմակերպությունների կողմից վաճառվող ապրանքների և մատուցվող ծառայությունների համար: Կազմակերպությունները պարտադիր համարվում են ԱԱՀ վճարող, եթե նրանց շրջանառությունը գերազանցում է 90,000 ֆունտ ստեռլինգը: Կամավոր սկզբունքով կազմակերպությունները կարող են համարվել ԱԱՀ վճարող, եթե նրանց շրջանառությունը 90,000 ֆունտ ստեռլինգից պակաս է: ԱԱՀ հարկման օբյեկտ են համարվում՝

- ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը,
- ապրանքների վարձակալությունը և փոխառությունը,
- կազմակերպության ակտիվների վաճառքը,

- ապրանքների փոխանակումը և այլն[48]:

Մեծ Բրիտանիայում ապրանքների ներմուծման ժամանակ ևս գանձվում է ԱԱՀ և հաշվետվու ժամանակաշրջանների տվյալների հիման վրա իրականացվում հարկի հաշվանցում[49]: Սակայն հատկանշականն այն է, որ Մեծ Բրիտանիայի հարկային համակարգում գործում է նաև հետաձգված ԱԱՀ-ի հաշվառում, երբ ԱԱՀ-ի հաշվառումը և վճարումը ներմուծման ժամանակ չի իրականացվում՝ այս կերպ չազդելով կազմակերպության դրամական միջոցների հոսքերի վրա: Այսինքն, ըստ էության, կազմակերպությունները հարկի վճարումներ նախապես չեն կատարում[50]:

Մեծ Բրիտանիայում կիրառվում է ԱԱՀ-ի երեք դրույքաչափ՝

1) 20 տոկոս - ստանդարտ դրույքաչափ, կիրառվում է ապրանք-ների և ծառայությունների զգալի մասի նկատմամբ[51],

2) 5 տոկոս - նվազեցված դրույքաչափ, կիրառվում է որոշ ապրանքների և ծառայությունների նկատմամբ, օրինակ՝ ծխելը դադարեցնելուն նպաստող արտադրանքներ՝ նիկոտինային պատյաններ և մաստակ,

3) 0 տոկոս - զրոյական դրույքաչափ, օրինակ՝ բարեգործական խանութների կողմից նվիրաբերված ապրանքների վաճառքի դեպքում կիրառվում է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ[52]:

Ինչ վերաբերում է կորպորատիվ հարկին, որը նույնացվում է շահութահարկի հետ, ապա հարկ է նշել, որ Մեծ Բրիտանիայում 2023-2024 ֆինանսական տարիների համար գործում են երկու դրույքաչափեր՝ 19 տոկոս և 25 տոկոս[53]: Դրույքաչափերը

---

[48] Աղբյուրը՝ URL: https://www.gov.uk/how-vat-works/print/.

[49] Աղբյուրը՝ URL: https://www.gov.uk/guidance/vat-imports-acquisitions-and-purchases-from-abroad?step-by-step-nav=849f71d1-f290-4a8e-9458-add936efefc5/.

[50] Աղբյուրը՝ URL: https://www.gov.uk/guidance/check-when-you-can-account-for-import-vat-on-your-vat-return/.

[51] Աղբյուրը՝ URL: https://www.gov.uk/vat-rates/.

[52] Աղբյուրը՝ URL: https://www.gov.uk/guidance/rates-of-vat-on-different-goods-and-services/.

[53] Աղբյուրը՝ URL: https://www.gov.uk/guidance/corporate-tax/.

կիրառվում են ըստ կազմակերպության կողմից ձևավորած շահույթի: Այն դեպքում, երբ կազմակերպությունը ստացել է մինչև 50,000 ֆունտ ստեռլինգ, ապա հարկվում է կորպորատիվ հարկի 19 տոկոս «փոքր շահույթի» դրույքաչափով: Իսկ երբ կազմակերպությունը ստացել է 50,000 ֆունտից մինչև 250,000 ֆունտ ստեռլինգ շահույթ, ապա նա կարող է ստանալ հարկային արտոնություն՝ սահմանային օգուտ (marginal relief), որն ապահովում է կորպորատիվ հարկի դրույքաչափի աստիճանական բարձրացում «փոքր շահույթի» 19 տոկոսից մինչև հիմնական 25 տոկոս դրույքաչափով հարկումը: Իսկ 250,000 ֆունտ ստեռլինգից բարձր շահույթի դեպքում կազմակերպությունները հարկվում են կորպորատիվ հարկի 25 տոկոս հիմնական դրույքաչափով[54]:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում ԱԱՀ չի կիրառվում: Իրականում ԱԱՀ-ն էությամբ նույնն է, ինչ որ ԱՄՆ-ում կիրառվող վաճառքի հարկը. այն ավարտվում է հարկելով աշխատանքի, շահի և այլ ավելացված արժեքների գումարները, որոնք էլ միասին վերջնական ամբողջ վաճառքի գումարելիներ են: Ի դեպ, ժամանակ առ ժամանակ ԱԱՀ-ի գաղափարը՝ որպես լրացուցիչ հասույթներ հայթայթելու եղանակ, Միացյալ Նահանգներում ժողովրդականություն է վայելում: Այն հրապուրիչ է, քանի որ ԱԱՀ-ն հարկ է հիմնված սպառման վրա[55]:

ԱՄՆ-ի 45 նահանգների և Կոլումբիայի շրջանի համար բյուջետային եկամտի հիմնական աղբյուր համարվում է վաճառքի և օգտագործման հարկը: Վաճառքի հարկի դրույքաչափը կախված կոնկրետ նահանգից, այն պետական մակարդակում տատանվում է 2,9 տոկոսից մինչև 7.25 տոկոս: Որոշ նահանգներում կիրառվում են նաև տեղական տարբերակներ, որոնց միջոցով տեղական

---

[54] Աղբյուրը՝ URL: https://www.gov.uk/corporation-tax-rates/.

[55] Փոլ Ա. Սամուելսոն, Ուիլյամ Դ. Նորդհաուս, Տնտեսագիտություն, II, Միկրոտնտեսագիտություն – Եր., «Ապոլոն», 1996, 464 էջ, /Հայաստանի ամերիկյան համալսարան/, էջ 328:

իքնակառավարման մարմինները սահմանում են հարկի լրացուցիչ տոկոս[56]:

ԱՄՆ-ի թվով 5 նահանգներում միջինացված նահանգային և տեղական վաճառքի հարկի դրույքաչափերն են. Լուիզիանայում՝ 9,56 տոկոս, Թենեսիում՝ 9,55 տոկոս, Արկանզասում՝ 9,45 տոկոս, Վաշինգտոնում՝ 9,38 տոկոս և Ալաբամայում 9,29 տոկոս: Իսկ թվով 5 նահանգներում միջին համակցված ամենացածր վաճառքի հարկի դրույքաչափերն են. Ալյասկայում՝ 1,82 տոկոս, Հավայան կղզիներում՝ 4,50 տոկոս, Վայոմինգում՝ 5,44 տոկոս, Մեյնում՝ 5,50 տոկոս և Վիսկոնսինում՝ 5,70 տոկոս[57]:

ԱՄՆ-ում ներմուծման ժամանակ կազմակերպությունները չեն վճարում վաճառքի հարկ, սովորաբար վաճառքի հարկը վճարվում է ոչ թե ներմուծողի, այլ վաճառողի կողմից: Այն դեպքում երբ վաճառողն ապրանքի վաճառքի պահին վաճառվող ապրանքի արժեքի մեջ չի ներառում հարկի գումար, վերջինիս հաշվառման և վճարման պատասխանատվությունն ընկնում է սպառողի վրա: ԱՄՆ հարկային համակարգի առանձնահատկություններից է նաև այն, որ ֆիզիկական անձիք ինքնուրույն հաշվարկում և վճարում են իրենց հարկերը, ի տարբերություն Հայաստանի Հանրա-պետության, որտեղ հարկերի հավաքագրումն ու վճարումն հիմնականում իրականցնում է հարկային գործակալը՝ եկամտային հարկի մասով, իսկ կազմակերպությունները՝ ԱԱՀ-ի մասով:

Ինչ վերաբերում է կորպորատիվ հարկին, ապա պետք է նաև նշել, որ ԱՄՆ-ում կիրառվում են կորպորատիվ հարկի հետևյալ դրույքաչափերը.

1. մինչև 50,000 ԱՄՆ դոլար հարկվող եկամտի նկատմամբ կիրառվում է 15 տոկոս դրույքաչափ,
2. 50,000 ԱՄՆ դոլարից մինչև 75,000 ԱՄՆ դոլար հարկվող եկամտի նկատմաբ կիրառվում է 25 տոկոս դրույքաչափ,

---

[56] Աղբյուրը՝ URL: https://taxsummaries.pwc.com/united-states/corporate/other-taxes#:~:text=Sales%20and%20use%20tax%20rates,to%20keep%20the%20related%20revenues/.

[57] Աղբյուրը՝ URL: https://taxfoundation.org/data/all/state/2024-sales-taxes/.

3. 75,000 ԱՄՆ դոլարից մինչև 10,000,000-ը ԱՄՆ դոլար հարկվող եկամտի նկատմաբ կիրառվում է 34 տոկոս դրույքաչափ,

4. 10,000,000 ԱՄՆ դոլարը գերազանցող հարկվող եկամտի նկատմաբ կիրառվում է 35 տոկոս դրույքաչափ[58]:

Գերմանիայում ԱԱՀ գանձվում է երկրի տարածքում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների համար, ինչպես նաև ապրանքների ներմուծման ժամանակ: ԱԱՀ չի գանձվում, եթե օրենսդրության համաձայն տվյալ գործարքն ազատված է ԱԱՀ-ից: Գերմանիայում կիրառվում է ԱԱՀ-ի 19 տոկոս ստանդարտ դրույքաչափ: Որոշակի գործարքների իրականացման դեպքում ԱԱՀ-ի դրույքաչափը նվազեցվում է մինչև 7 տոկոս, օրինակ՝ ատամնաբուժական գործունեություն, թատրոնների, ներկայացումների, համերգների և այլ միջոցառումների կազմակերպում[59]:

Գերմանիայում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը ենթակա է հարկման և՛ կորպորատիվ հարկով և՛ առևտրային հարկով[60]: Կորպորատիվ հարկի դրույքաչափը կազմում է հարկվող եկամտի 15 տոկոսը[61], իսկ առևտրային հարկի դեպքում՝ 3,5 տոկոսը[62]: Կորպորատիվ հարկի և առևտրային հարկի տարբերությունը կայանում է նրանում, որ կորպորատիվ հարկը գանձվում է դաշնային կառավարություն կողմից, իսկ առևտրային հարկը՝ քաղաքապետարանի կողմից[63]:

Ֆրանսիայում ԱԱՀ-ի դրույքաչափը կազմում է 20 տոկոս: Կիրառվում է նաև 5,5% դրույքաչափ, մասնավորապես՝

---

[58] Աղբյուրը՝ URL: http://uscode.house.gov/view.xhtml?req=(title:26%20section:11)/.

[59] Աղբյուրը՝ URL: https://www.gesetze-im-internet.de/ustg_1980/__1.html/.

[60] Աղբյուրը՝ URL: https://taxsummaries.pwc.com/germany/corporate/taxes-on-corporate-income/.

[61] Աղբյուրը՝ URL: https://www.gesetze-im-internet.de/kstg_1977/__23.html/.

[62] Աղբյուրը՝ URL: https://www.gesetze-im-internet.de/gewstg/__11.html/.

[63] Աղբյուրը՝ URL: https://www.lexware.de/wissen/buchhaltung-finanzen/gewerbesteuer/#:~:text=Der%20Unterschied%20zwischen%20K%C3%B6rperschaftsteuer%20und,Gewerbesteuer%20ist%20ein%20Verlustr%C3%BCcktrag%20unzul%C3%A4ssig/.

բնակչության առաջին անհրաժեշտության սպառման համար նախատեսված սննդամթերքի և հրուշակեղենի արտադրանքի առաքումների դեպքում: ԱԱՀ-ի անցման շրջանառության շեմը Ֆրանսիայում 10,000 եվրոն է[64]:

Ինչ վերաբերում է կորպորատիվ հարկին, ապա պետք է նաև նշել, որ Ֆրանսիայում կիրառվում է կորպորատիվ հարկի 25 տոկոս ստանդարտ դրույքաչափը[65]:

Կանադայում գործում է վաճառքի հարկ, որն, ըստ էության, դիտվում է որպես սպառողական հարկ: Պայմանավորված մատակարարման վայրից կիրառվում են վաճառքի հարկի հետևյալ դրույքաչափերը.

- 0 տոկոս վաճառքից՝ սահմանված հիմնական սպառողական մթերքների դեպքում,
- 5 տոկոս վաճառքից՝ Ալբերտայում, Բրիտանական Կոլումբիայում, Մանիտոբայում, հյուսիս-արևմտյան տարածքներում, Նունավուտում, Քվեբեկում, Սասկաչևանում և Յուկոնում,
- 13 տոկոս վաճառքից՝ Օնտարիոյում,
- 15 տոկոս վաճառքից՝ Նյու Բրանսվիկում, Նյուֆաունդլենդում, Լաբրադորում, Նոր Շոտլանդիայում և Արքայազն Էդվարդ կղզում:[66] Վաճառքի հարկ գանձվում է ներմուծման ժամանակ ևս:

Ինչ վերաբերում է կորպորատիվ հարկին, ապա պետք է նշել նաև, որ Կանադայում կիրառվում է կորպորատիվ հարկի մի քանի դրույքաչափեր, մասնավորապես՝

- հիմնական դրույքաչափը կազմում է 38 տոկոս, որից նվազեցվում են մարզային զեղչերը՝ 10 տոկոս,

---

[64] Աղբյուրը՝ URL: https://www.legifrance.gouv.fr/codes/article_lc/LEGIARTI000048835114/.

[65] Աղբյուրը՝ URL: https://www.legifrance.gouv.fr/codes/section_lc/LEGITEXT000006069577/LEGISCTA000006162532/#LEGISCTA000006162532/.

[66] Աղբյուրը՝ URL: https://www.canada.ca/en/revenue-agency/services/tax/businesses/topics/gst-hst-businesses/charge-collect-which-rate.html/.

- դաշնային դրույքաչափը կազմում է 28 տոկոս, որից հանվում են արտադրական կամ վերամշակման համար դրույքաչափեր, ընդհանուր՝ 13 տոկոսի չափով,
- դաշնային հարկի զուտ դրույքաչափը կազմում է 15 տոկոս[67]:

Ճապոնիայում գանձվում է սպառման հարկ այն դեպքում, երբ կազմակերպությունն ապրանքներ է մատակարարում, ծառայություններ է մատուցում կամ ապրանքներ է ներմուծում: Սպառման հարկի ստանդարտ դրույքաչափը 10 տոկոս է (7,8 տոկոս՝ ազգային հարկ և 2,2 տոկոս՝ տեղական հարկ): Նվազեցված հարկի դրույքաչափը կազմում է 8 տոկոս, որը վերաբերում է սննդամթերքին և խմիչքներին (բացառությամբ ոգելից խմիչքների և հանրային սննդի ծառայությունների), ինչպես նաև շաբաթը երկու կամ ավելի անգամ լույս տեսնող թերթերի բաժանորդագրություններին: Հարկ է նշել, որ Ճապոնիայում արտահանման դեպքում կիրառվում է հարկի զրոյական դրույքաչափ[68]:

Ինչ վերաբերում կորպորատիվ հարկին, ապա պետք է նշել նաև, որ Ճապոնիայում կիրառվում է կորպորատիվ հարկի է 23,2 տոկոս ստանդարտ դրույքաչափը[69]:

Իտալիայում կիրառվում է ԱԱՀ-ի 22 տոկոս ստանդարտ դրույքաչափ: Նվազեցվող դրույքաչափերը սահմանված են հետևյալ դեպքերում՝

- 4 տոկոս՝ սննդամթերքի որոշ տեսակների, խմիչքների և գյուղատնտեսական ապրանքների և որոշակի պահանջներին համապատասխանող էլեկտրոնային գրքերի և էլեկտրոնային պարբերականների համար,
- 5 տոկոս՝ որոշ առողջապահական ծառայությունների, սննդային խոտաբույսերի վաճառքի, ծովերի, լճերի և գետերի

---

[67] Աղբյուրը՝ URL: https://taxsummaries.pwc.com/canada/corporate/taxes-on-corporate-income/.

[68] Աղբյուրը՝ URL: https://taxsummaries.pwc.com/japan/corporate/other-taxes/.

[69] Աղբյուրը՝ URL: https://www.mof.go.jp/english/policy/tax_policy/tax_system/corporate/index.html/.

տրանսպորտային որոշ ծառայությունների, ինչպես նաև կենտրոնական ջեռուցման ծառայությունների համար,

- 10 տոկոս էներգիայի թվարկված աղբյուրների, թվարկված դեղերի, մանկական կոնկրետ սննդամթերքի (օրինակ՝ կաթի փոշի) և այլ ապրանքների համար[70]:

Հարկ է նշել նաև, որ Իտալիայում կազմակերպությունները վճարում են կորպորատիվ եկամտահարկ՝ հարկվող եկամտի նկատմամբ 24 տոկոս դրույքաչափով, ինչպես նաև տարածաշրջանային արտադրական հարկով՝ 3,9 տոկոս դրույքաչափով[71]:

Բերված տարբեր երկրների ձեռնարկատիրական գործունեության հարկման դրույքաչափերի վերլուծության քողի տակ անհրաժեշտություն է առաջանում բացահայտել հատկապես Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ի գանձման տնտեսական արդյունավետության բնույթը՝ ԱԱՀ վճարող տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների ներմուծման դեպքում զրոյական դրույքաչափի (հետաձգված ԱԱՀ-ի) կիրառության տեսանկյունից, ինչի հիման վրա էլ տալ հարկման ընդհանուր համակարգում տնտեսվարողներին առաջարկվող հարկման դրույքով ծանրաբեռնվածություն գնահատականը՝ հարկային համակարգի արդարության սկզբունքի առավել ցայտուն դրսևորման դիրքերից: Այդ նպատակով նախ հարկ է իրականացնել ԱԱՀ-ի գումարների հաշվանցման արդյունավետության գնահատում՝ ինչպես պետության, այնպես էլ ԱԱՀ վճարող տնտեսվարող սուբյեկտների դիտանկյունից:

ՀՀ նախագահի 04.01.1992թ.-ի «Ձեռնարկություններից, կազմակերպություններից և քաղաքացիներից գանձվող հարկերի մասին» թիվ ՆՀ-49 հրամանագրով որոշ հարկատեսակների, ներառյալ՝ ԱԱՀ-ի վերաբերյալ կիրառության մեջ մտան մի շարք դրույթներ: ԱԱՀ-ի մասին օրենքի բացակայության պայմաններում

---

[70] Աղբյուրը՝ URL: https://taxsummaries.pwc.com/italy/corporate/other-taxes/.

[71] Աղբյուրը՝ URL: https://taxsummaries.pwc.com/italy/corporate/taxes-on-corporate-income/.

կիրառվող 28% դրույքաչափը պատճառ էր դառնում սոցիալական դժգոհությունների ներքո գների թանկացմանը: «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքն առաջին անգամ ընդունվեց 30.01.1993թ.-ին ՀՀ գերագույն խորհրդի կողմից: Բնականաբար, այն զերծ չէր թերություններից, մասնավորապես՝ օրենքի համաձայն հարկվող շրջանառություն դիտվող ապրանքների իրացման և դրանց ձեռքբերման գների տարբերությունը, ինչպես նաև վճարման ժամկետներն ու հարկի կանխավճարային մուծումները և մի շարք ոչ հիմնավոր արտոնությունների կիրառումը պատճառ էր դառնում թույլ տրվող հաշվարկային անճշտությունների: ԱՊՀ անդամ երկրների միջև ապրան-քաշրջանառության դեպքում հարկման մեխանիզմներում նույնպես խնդրահարույց հարցեր էին առաջանում, օրինակ՝ կիրառվում էր «ծագման վայրի» սկզբունքը, որի էությունը կայանում էր նրանում, որ ԱՊՀ անդամ որևէ երկրից ՀՀ տարածք ապրանքներ ներմուծելու դեպքում ՀՀ պետական բյուջեն զրկվում էր համապատասխան մուտքերից, քանի որ ԱԱՀ-ն մուտքագրվում էր արտահանող, այսինքն տվյալ ապրանքի ծագման վայր համարվող երկրի պետական բյուջե:

Այդուամենայնիվ, 01.07.1997թ.-ին ընդունված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով փոխվեցին ԱԱՀ-ի գանձման մեխանիզմները, որով, մասնավորապես՝ ավելացված արժեքի հարկը սահմանվեց որպես անուղղակի հարկ, որը գանձվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, ՀՀ տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Օրենքով նաև հստակեցվեց ԱԱՀ վճարողների շրջանակը, հարկման օբյեկտը, ԱԱՀ-ից ազատումը և ԱԱՀ-ով չհարկվող գործարքները, ԱԱՀ-ի դրույքաչափերը՝ 20 տոկոս (ամբողջ արժեքի նկատմամբ 16.67 տոկոս) և 0 տոկոս (զրոյական): Սահմանվեց նաև ներմուծման դեպքում «նշանակման վայրի» սկզբունքը, որի համաձայն ԱԱՀ-ն ներմուծման փաստի հիման վրա էր գանձվելու ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ և մուտքագրվելու ՀՀ պետական

բյուջե, այլ ոչ թե դրանք իրացնելիս: Հատկանշական էր այն, որ ներմուծման պահին ԱԱՀ-ով հարկումը չէր տարածվում այն ապրանքների վրա, որոնց շրջանառությունն ազատվում էր ԱԱՀ-ից, ինչպես նաև այն ապրանքների վրա, որոնց մասով սահմանվում էր 0 տոկոս մաքսատուրք:

Հենց այստեղ է, որ անհրաժեշտ է արձանագրել. **վերոնշյալ նորամուծությունը որքան էլ որ դրական, այնքան էլ բացասական ազդեցություն է ունեցել Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման, ֆինանսական պլանավորման և, ընդհանուր առմամբ, ակտիվ բիզես միջավայրի ապահովման ու գործարարության առաջընթացի վրա**: Այստեղ նաև պետք է փաստել, որ նույն սկզբունքը գործում է մինչ այժմ՝ ՀՀ հարկային օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ԱԱՀ վճարող տնտեսվարող սուբյեկտների կողմից Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման գործառնության դեպքում: **Փաստորեն, նշված հարկման մեխանիզմի համաձայն տնտեսվարողները մինչև ապրանքի իրացումը վճարում են հարկեր՝ այսպիսով առանց տոկոսայնության սկզբունքի կիրառման վարկավորելով ՀՀ պետական բյուջեն**:

ԱԱՀ-ին վերաբերող սկզբունքային որոշ օրենսդրական և վարչարարական փոփոխություններ հետագայում պայմանավորվեցին հիմնականում Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ-ին) անդամակցելու փաստով: Մասնավորապես, 17.12.2014թ.-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության և եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև անուղղակի հարկերի հաշվարկման

և վճարման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի[72] 7-րդ հոդվածով սահմանված դրույթի համաձայն՝ **ներմուծվող ապրանքների համար հաշվարկված ԱԱՀ-ի գումարը ՀՀ պետական բյուջե են վճարում մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրը ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ**՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ: Իսկ ԵՏՄ անդամ պետություններ ապրանքների արտահանման դեպքում արտահանողն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում փաստաթղթեր (արտահանողի լրացրած հարկային հայտարարագիրը, ինչպես նաև ներմուծողի հարկային մարմնի հաստատած՝ ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը) **ապրանքները ՀՀ տարածքից փաստացի արտահանելու օրվան հաջորդող 180 օրերի ընթացքում**: Այսպիսով, արտահանվող ապրանքների մասով ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափի կիրառությունը և (կամ) ակցիզային հարկից ազատումը հարկային մարմնի կողմից ընդունված է համարվում վերոնշյալ փաստաթղթերը միաժամանակ հարկային մարմին փաստացի ներկայացնելու օրը: Այստեղ նաև պետք է փաստել, որ հարկման վերոնշյալ սկզբունքը մինչ այժմ փոփոխության չի ենթարկվել[73]:

---

[72] Օրենքը կարգավորում է ՀՀ տարածքից ԵՏՄ անդամ պետություններ ապրանքների արտահանման և ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման կարգի առանձնահատկությունները՝ որպես «Եվրասիական տնտեսական միության մասին» 29.05.2014թ.ի պայմանագրի անբաժանելի մաս՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» 18-րդ հավելված:

[73] «Եվրասիական տնտեսական միության մասին» 29.05.2014թ.ի պայմանագրի անբաժանելի մաս՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» 18-րդ հավելված:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ վճարողներին հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարները հաշվարկվում են որպես այդ ժամանակաշրջանում իրականացված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և հաշվանցվող (պակասեցվող) ԱԱՀ-ի գումարների բացասական տարբերություն[74]:

Աղյուսակ 1.

ԱԱՀ-ի տեսակար կշիռը ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ 2021-2023թթ. (մլրդ. դրամ)[75]:

Տարեթիվ	ՀՀ պետական բյուջեի ընդամենը եկամուտները	*Հարկերի և տուրքերի մուտքերը*	*ԱԱՀ-ի մուտքերը*	Հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՀ պետ. բյուջեյի եկամուտներում (%)	ԱԱՀ-ի տեսակար կշիռը ՀՀ պետ. բյուջեի հարկային եկամուտներում (%)
2021	1,684,113.80	1,586,900.20	555,986.40	94.23	35.04
2022	2,063,127.20	1,925,968.70	679,555.60	93.35	35.28
2023	2,358,733.50	2,221,924.80	767,173.50	94.2	34.53

Ինչպես նշվեց, Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով: Ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման դիմաց ԱԱՀ-ի գումարը ներառող հատուցման գումարի մեջ ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16.67 տոկոս դրույքաչափի հաշվարկային մեծությամբ[76]:

---

[74] Մամիկոնյան Կ.Հ, Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2019, 138 էջ:

[75] Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2021 -2023թթ. հունվար-դեկտեմբերին (www.armstat.am):

[76] ՀՀ Հարկային օրենսգիրք, հոդված 63:

Ստորև ներկայացվող գծապատկերում պայմանականորեն ներմուծված նույն ապրանքի վերավաճառքի շղթայի փուլերում ԱԱՀ-ի գումարների հաշվանցման և վճարման մեխանիզմի գործողության էությունն է:



Գծապատկեր 1. ԱԱՀ-ի գումարների հաշվանցման և վճարման համակարգը[77]

Վերը ներկայացված գծապատկերի օրինակով ստորև աղյուսակի միջոցով ցույց տրվում պայմանական տվյալների հիման վրա նույն ապրանքի վերավաճառքի բոլոր փուլերում հավելագնից հաշվարկվող ԱԱՀ-ի և շահութահարկի բաժինը:

[77] Մամիկոնյան Կ.Հ, Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2019, 138 էջ, 51-րդ էջում:

Աղյուսակ 2.

Ընդամենը հավելագնից հաշվարկվող ԱԱՀ-ի և շահութահարկի բաժինը՝ նույն ապրանքի վերավաճառքի շղթայի փուլերում

N	Վաճառքի փուլերը	Հավելագինը	Գինը	Վճարման ենթակա ԱԱՀ (20%, 16.67%)	ԱԱՀ-ի հաշվանցում և վճարում (20%)	Հարկվող շահույթը	Շահութահարկ (18%)	Ընդ. Հավելագնից հաշվարկվող հարկերը և տոկոսը	
1	Ներմուծում		4000	800	200	1000	180	380	38%
	Վաճառք	1000	6000	1000					
2	Ձեռքբերում		5000	1000	100	500	90	190	38%
	Վաճառք	500	6600	1100					
3	Ձեռքբերում		5500	1100	110	550	99	209	38%
	Վաճառք	550	7260	1210					
	Ընդամենը	**2050**	**6050**	**1210**	**410**	**2050**	**369**	**779**	**38%**

Իհարկե, այստեղ պետք է նկատի ունենալ նաև, որ շահութահարկի հաշվարկման դեպքում ստացված եկամտից կատարվում են նաև սահմանված նվազեցումները՝ առկայության դեպքում: Սակայն խոսքը գնում այն մասին, որ հավելագինը, որը առևտրի կամ արտադրության դեպքում սահմանվում է ձեռնարկատիրական գործունեությունից արդյունք ապահովելու նպատակով, միևնույն փուլի ընթացքում հարկման ընդհանուր համակարգում հարկվում է (20+18)=38 տոկոսի չափով:

ԻՆչպես վերը նշվեց՝ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ տարածք ապրանքների ներմուծման դեպքում տնտեսվարողները մինչև ապրանքի իրացումը պետական բյուջե են վճարում են ԱԱՀ՝ այսպիսով անտոկոս վարկ տրամադրելով պետությանը:

Աղյուսակ 3

Ավելացված արժեքի հարկ վճարողներից ներմուծման դեպքում ԱԱՀ-ի գանձման պատճառահետևանքները

	Պետությունը ավելացված արժեքի հարկ վճարողներից ներմուծման դեպքում ԱԱՀ-ն գանձում է հետևյալ իր հիմնական նպատակներն իրագործելու համար	**Ավելացված արժեքի հարկ վճարողներից ներմուծման դեպքում ԱԱՀ-ն գանձելը՝ որպես հետևանք բերում է հարկագանձման արդարության սկզբունքի խախման՝ հետևյալ դիտանկյուններից**
1	Պետությունը կարճաժամկետ ժամանակահատվածի համար ներգրավում է դրամական միջոցներ՝ իր առջև ծառացած խնդիրները լուծելու համար	Տնտեսվարողների միջոցներն անուղղակի կերպով զրկվում են ձեռնարկատիրական գործունեության մեջ դրամական շրջապտույտ կատարելու հնարավորությունից
2	Իրականացվում է հարկի հավաքագրման վերահսկողական գործառույթ	Գանձվող գումարները կանխավճարների կամ անտոկոս վարկերի ձևով տրամադրվում է պետությանը
3	Պլանավորվում և ապահովագրվում է հարկային եկամուտների կայուն հոսքը պետական բյուջե	Հարկ վճարողին պատճառվում է ժամանակի կորուստ՝ պարտավորությունների գծով հաշվանցումներն իրականացնելուց հետո պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը տնտեսվարողի բանկային հաշվին փոխանցելու հետ կապված
4	ԱԱՀ-ի վերադարձի ավտոմատացված համակարգի ներդրմամբ կարող է հեշտացվել ԱԱՀ-ի հաշվանցման գործընթացը:	Գանձումը հանգեցնում է հարկային մարմնի կողմից ավելորդ աշխատատարության և վարչարարական ռեսուրսի ծախսման

Ներկայումս ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված պետական բյուջեից փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է որպես հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարի և սահմանված կարգով հաշվանցվող (պակասեցվող) ԱԱՀ-ի գումարների բացասական տարբերություն: Եթե ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկը ներկայացնելուց հետո

(ԱԱՀ-ի գծով առաջացած պարտավորությունը մարելուց հետո) հարկ վճարողը վերջնարդյունքում ունենում է ԱԱՀ-ի փոխհատուցվող գումար, ապա այդ գումարը հարկ վճարողի գրավոր դիմումի հիման վրա պարզեցված ընթացակարգով կամ իրականացվող ստուգման կամ ուսումնասիրության արդյունքներով հիմնավորվելու դեպքում մուտքագրվում է նրա միասնական հաշվին[78]:

Ստացվում է, որ ՀՀ-ում ԱԱՀ-ն սահմանին գանձելու գործընթացը կարող է խախտել հարկագանձման արդարության սկզբունքը, քանի որ ԱԱՀ-ն, լինելով անուղղակի հարկ և վճարվելով ապրանքները և ծառայությունները վերջնական սպառողի կողմից, սկզբունքայնորեն գանձվում է արտադրության և առևտրի բոլոր փուլերում, բայց ոչ կանխավճարների կամ անտոկոս վարկերի ձևով տրամադրվում պետությանը:

Այդուամենայնիվ, վաճառքի յուրաքանչյուր փուլում գանձված ԱԱՀ-ն ազդում է ապրանքի գնի վրա, որը թերևս արտացոլում է ԱԱՀ-ի էությունը, սակայն «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ԱԱՀ վճարող տնտեսվարող սուբյեկտների համար ՀՀ տարածք ապրանքների ներմուծման դեպքում սահմանին **ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափի կիրառումը կարող է նպաստել գների նվազմանը՝ տեղիք չտալով, ի դեպ, նաև սոցիալական լարումների**:

Վերը ներկայացված արտասահմանյան երկրների հարկային համակարգերի առանձնահատկությունների հետ կապված հարկ է արձանագրել նաև, որ ներմուծման դեպքում տնտեսվարող սուբյեկտների կողմից ԱԱՀ-ի կամ վաճառքի հարկի հետաձգված հաշվառում իրականացվում է Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում: Բացի այդ, դուրս է բերվել և աղյուսակի միջոցով ստորև ներկայացվում է մի շարք զարգացած երկրներում, նաև Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության հարկման դրույքով ծանրաբեռնվածության մասով համեմատական տվյալներ

[78] ՀՀ Հարկային օրենսգիրք, հոդված 74:

(տե՛ս աղյուսակ 4): Համաձայն ստորև ներկայացված աղյուսակի տվյալների, հարկման դրույքով ամենաքիչ ծանրաբեռնվածությունն ունի Ճապոնիան, որից հետո՝ Գերմանիան և Հայաստանը նույն չափով:

Աղյուսակ 4.

Մի շարք զարգացած երկրներում և Հայաստանում ձեռնարկատիրական գործունեության հարկման դրույքով ծանրաբեռնվածության համեմատականը

	ԱԱՀ-ի ստանդարտ դրույքաչափ	Վաճառքի, առևտրի կամ սպառման հարկ	Կորպորատիվ հարկի հիմնական դրույքաչափ	Հարկման դրույքով ծանրաբեռնվա-ծությունը (%)
Մեծ Բրիտանիայում	20		25	45
ԱՄՆ-ում		10	35	45
Գերմանիայում	19	4	15	38
Ֆրանսիայում	20		25	45
Կանադայում		15	38	53
Ճապոնիայում		10	23	33
Իտալիայում	22		24	46
Հայաստանում	20		18	38

Ստորև ներկայացվում է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գործունեության տարեկան հաշվետվություններից քաղված՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ԱԱՀ-ի մուտքերի և հարկ վճարողներին վերադարձված ԱԱՀ-ի վերաբերյալ ամփոփ տվյալների համեմատական վերլուծությունը (տե՛ս ստորև ներկայացված աղյուսակը):

Աղյուսակ 5.

ՀՀ պետական բյուջե ԱԱՀ-ի մուտքերի և հարկ վճարողներին վերադարձված ԱԱՀ-ի հարաբերակցությունը 2020-2023թթ.-ին

ԱԱՀ-ի մուտքերը 2020-2023թթ. (մլրդ. դր.)	*2020թ.*	*2021թ.*	*2022թ.*	*2023թ.*
Ներքին շրջանառությունից	187.8	219.3	236.6	250.2
Երրորդ երկրներից	176.5	199.3	282.9	359

ներմուծումից				
ԵԱՏՄ անդամ երկրներից ներմուծումից	107.3	137.4	160.1	158
ԸՆԴԱՄԵՆԸ	**471.6**	**556**	**679.6**	**767.2**

ԱԱՀ-ի վերադարձ 2020-2023թթ. (մլրդ. դր.)	***2020թ.***	***2021թ.***	***2022թ.***	***2023թ.***
Հարկ վճարողներին է վերադարձվել	**120.1**	**146.7**	**212.8**	**287.4**

Վերադարձվածի մասնաբաժինը ԱԱՀ-ի ընդհանուր մուտքերում	***25.5%***	***26.4%***	***31.3%***	***37.5%***

Ստացվում է, որ համաձայն ՀՀ ՊԵԿ-ի վերջին 4 տարիների տվյալների՝ ԵՏՄ անդամ երկրներից և երրորդ երկրներից ներմուծումների դեպքերում, ինչպես նաև ներքին շրջա-նառությունից **ԱԱՀ-ի ընդհանուր մուտքերում հարկ վճարողներին վերադարձված գումարները միջինում կազմում են 30 տոկոս և ավելի**[79]:

Ստորև ներկայացվում է նաև մի շարք զարգացած երկրներում պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ ԱԱՀ-ի, ինչպես նաև վաճառքի, առևտրի կամ սպառման հարկի տեսակակար կշիռների համեմատական տվյալներ:

Աղյուսակ 6.

Մի շարք զարգացած երկրներում պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ ԱԱՀ-ի, ինչպես նաև վաճառքի, առևտրի կամ սպառման հարկի տեսակակար կշիռը 2021թ.-ի տվյալների համաձայն[80]

Հարկային եկամուտների մեջ ԱԱՀ-ի տեսակակար կշիռը	**Հարկային եկամուտների մեջ վաճառքի, առևտրի կամ սպառման հարկի տեսակակար կշիռը**

[79] ՀՀ պետական եկամուտների գործունեության 2020-2023 թվականների տարեկան հաշվետվություններ:
[80] Revenue Statistics 2023 (www.oecd.org/en.html).

Կանադայում		13%
Ֆրանսիայում	16%	
Գերմանիայում	18%	
Ճապոնիայում		15%
Իտալիայում	16%	
Մեծ Բրիտանիայում	20%	
ԱՄՆ-ում		15.7%

Համաձայն աղյուսակ 6-ում ներկայացված տվյալների, զարգացած երկրների համեմատությամբ Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ի տեսակարար կշիռը բյուջեի հարկային եկամուտներում գրեթե կրկնակի անգամ բարձր տոկոս է կազմում:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ անհրաժեշտ է պարզել, թե ի՞նչ հորիզոններ կամ ինչպիսի՞ հնարավորություններ կան «Բաց թողնում ներքին սպառման համար» ընթացակարգով հիմնականում երրորդ երկրներից (ոչ ԵՏՄ-ից) ներմուծման դեպքում հետամուտ լինելու հետաձգված ԱԱՀ-ի մեխանիզմի կիրառմանը (0-ական դրույքաչափով) հարկմանը: Այդուհանդերձ, հարկ է քննարկել արդեն իսկ վերը բերված հետևյալ փաստարկները.

1. ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությունը հարկման ընդհանուր դրույքաչափով ծանրաբեռնված չէ, այն զարգացած երկրների համեմատությամբ 38 տոկոս նվազագույն ցուցանիշ է կազմում (տե՛ս աղյուսակ 4), սակայն, հաշվի առնելով նաև ՀՀ-ում ԱԱՀ-ի տեսակարար մեծ կշիռը պետական բյուջեի հարկային եկամուտներում, առաջին անհրաժեշտության սպառման ապրանքների և ծառայությունների մասով ԱԱՀ-ի դրույքաչափի որոշակի նվազեցումը դրական ազդակ կհաղորդի համապատասխան տնտեսական ոլորտներին՝ առանձնապես ազդեցություն չունենալով պետական բյուջեի եկամուտների վրա:
2. ԱԱՀ-ի տեսակարար կշիռը ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում կազմում է 35 տոկոս, որը զարգացած

երկրների համեմատությամբ բարձր ցուցանիշ է համարվում (տե՛ս աղյուսակներ 1 և 6),

3. ՀՀ-ում տնտեսվարող սուբյեկտներին վերադարձված գումարների մասնաբաժինը պետական բյուջե գանձված ԱԱՀ-ի ընդհանուր մուտքերում կազմում է 30 տոկոսից բարձր, ինչը խոսում է բավականին մեծ դրամական շրջապտույտի մասին (տե՛ս աղյուսակ 5),
4. Հարկ է քննարկել Հայաստանի Հանրապետություն միայն երրորդ երկրներից ներմուծման պարագան, քանի որ ԵՏՄ-ից ներմուծման դեպքում ԱԱՀ-ն վճարվում է մինչև ներմուծման ամսվան հաջորդող ամսվա 20-ը, որն ինչ-որ առումով մեղմացնում է պետության կողմից անտոկոս սկզբունքով հարկ վճարողից գումարներ հավաքագրելը, սակայն պարտավորությունների հաշվարկների և տնտեսվարողների բանկային հաշիվներին փոխանցման ողջ գործընթացը ներկայումս ժամանակատար է և ռեսուրսներ է պահանջում:
5. Ներմուծման դեպքում հարկերի հետաձգված հաշվարկման մեխանիզմ կիրառվում է թվարկված արտասահմանյան երկրներից Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում:

Այսպիսով, վերը բերված փաստարկները լրացուցիչ կերպով կարող են հիմնավորել ԱԱՀ-ի հետաձգված հաշվառման մոդելում հարկագանձման արդարության սկզբունքի առավել ցայտուն դրսևորումը, քանզի տվյալ դեպքում ԱԱՀ վճարող տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն կունենան **ներմուծման ժամանակ ԱԱՀ-ի վճարմանն ուղղվող միջոցները դրամական շրջապտույտից չհանել, դրանք տնտեսել և միայն վաճառելուց հետաձգված ԱԱՀ-ն հաշվարկել ու տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար վճարել ՀՀ պետական բյուջե**:

§ 6. Հարկման դրույքաչափերի հավասարակշռության սկզբունքը և դրա կիրառման հնարավորությունը ՀՀ հարկային համակարգում

Հարկային բեռը համախառն ցուցանիշ է, որը բնութագրում է հարկերի դերը երկրի բնակչության կյանքում և սահմանվում է որպես հավաքագրված հարկերի ընդհանուր գումարի հարաբերություն ընդհանուր ազգային արտադրանքի արժեքին[81]: Երկրի հարկային համակարգը բնորոշվում է որպես զարգացած, եթե հարկային բեռը բաշխվում է հիմնապես արդարության և արդյունավետության սկզբունքներով: Երբ նշված սկզբունքներից որևէ մեկն ինչ որ չափով նախընտրելի է դառնում, խախտելով նժարների հավասարակշռությունը, փոքրանում է մյուսի լիարժեքորեն կիրառման հնարավորությունը: Հատկանշական են տնտեսագիտության բնագավառում գաղափարական հիմնասյուներից Ա. Սմիթի և Ջ. Քեյնսի կողմից հարկային բեռի հարցում արտահայտած տեսակետները, որոնցից առաջինը՝ հարկային բեռի բաշխման գործընթացում կարևորում էր արդարությունը և հավասարությունը, իսկ երկրորդը՝ գնահատում էր հատկապես արդյունավետությունը՝ այն համարելով հարկային քաղաքականության իրագործման նպատակ:

Հարկային բեռի մակարդակը կախված է պետության վարած հարկային քաղաքականությունից: Ինչպես հայտնի է, գոյություն ունեն հարկային քաղաքականության իրականացման մի քանի ձևեր, դրանցից են՝ **խելամիտ** հարկային քաղաքականությունը, որը բնորոշ է տնտեսական աճի ժամանակաշրջանին սրա նպատակները ներառում են հարկաբյուջետային, տնտեսական և սոցիալական ուղղությունները, **հարմարվողական** հարկային քաղաքականությունը, որն ուղղված է տնտեսական անկման և ճգնաժամի ժամանակաշրջանում տնտեսական կայունության

[81] Брызгалин А.В., Налоговая оптимизация: принципы, методы, рекомендации, арбитражная практика. Москва, 2006, էջ 22:

բարձրացմանը՝ կախված կոնկրետ սոցիալ-տնտեսական պայմաններից, ինչպես նաև **առավելագույն եկամուտների** քաղաքականությունը, որը բնութագրվում է հարկային արտոնությունների նվազեցմամբ, դրույքաչափերի բարձրացմամբ և այլն:

Ի դեպ, **հարկման արդյունավետության գնահատականի հարցը մինչ օրս վերջնական լուծում չի ստանում: Այսինքն, թե հարկատուի եկամտի որ մասի գանձումն է արդյունավետ՝ կան բազմաթիվ մոտեցումներ և հիպոթետիկ հաշվարկներ**: Որոշ հեղինակներ առաջարկում են հարկային բեռը հաշվարկել բացարձակ արժեքով, ինչը փաստացի հավաքագրված հարկերի միագումարի և տնտեսության կոնկրետ ոլորտից ստացված արդյունքի հարաբերակցությունն է, սակայն որոնց տեսակները և համամասնությունները փոփոխության են ենթարկվում՝ կախված առանձին ոլորտներից և նպատակներից: Իհարկե, այս դեպքում բացարձակ հարկային բեռի գործնական կիրառությունը սահմանափակ է՝ դրա արժեքը այլ կազմակերպությունների և պետությունների հետ համեմատելու և հակադրելու վերլուծական հնարավորությունների բացակայության պատճառով: Այդու-ամենայնիվ, **ողջ տնտեսության համար առավել ընդունված է հարաբերական հարկային բեռի քանակական գնահատումը, որը որոշվում է՝ ընդհանրական հարկային եկամուտների մուտքերի և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեծության հարաբերակցությամբ**[82], **իսկ կազմակերպության համար՝ պլա-նային կամ փաստացի վճարված հարկերի ու համախառն եկամտի տոկոսային հարաբերակցության ցուցանիշները**:

Այնուամենայնիվ, հարկային եկամուտների դինամիկան, ինչպես նաև հարկային բեռի հարաբերակցությունը համախառն պահանջարկի նկատմամբ թույլ են տալիս եզրակացնել, որ տնտեսության վրա հարկային ծանրաբեռնվածության զգալի

[82] Александрова Е.А., Подходы к расчету и оценке налоговой нагрузки / Экономический журнал 4 (52), ст. 38-53.

բարձրացումը որոշակի չափով հանգեցնում է հարկերի հավաքագրման կրճատմանը[83]:

2023 թվականի տվյալներով ՀՀ տնտեսության համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) բացարձակ արժեքով կազմել է 9,453.2 մլրդ. դրամ, իսկ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են 2,221.9 մլրդ. դրամ[84]: Այսպիսով, ըստ վերը բերված պաշտոնական ցուցանիշների «հավաքագրված հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը կազմել է 23.5 տոկոս:

Ի դեպ, պետք է նաև նշել, որ նշված մոտեցմամբ հաշվարկներ իրականացնելու դեպքում հարկման իրական վիճակն արտացոլել հնարավոր չէ, եթե հաշվարկին մասնակից չի դարձվում հարկային մուտքերի պահուստ հանդիսացող **հարկային ապառքների** ներուժը, որի հաշվառման և միջազգային համեմատությունների պարագայում պատկերն էապես կարող է փոխվել[85]:

ՀՀ տնտեսվարող սուբյեկտների կողմից 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման վերջնաժամկետում չվճարված կամ չմարված հարկի կամ վճարի գումարը (ապառք) կազմում է 189.4 մլրդ. դրամ, որից հիմնական մասը՝ շուրջ 136.4 մլրդ. դրամը բաժին է ընկնում սնանկ ճանաչված հարկ վճարողներին, իսկ 53.0 մլրդ. դրամ հարկային պարտավորությունները՝ բաժին է ընկնում փաստացի գործունեություն իրականացնող հարկ վճարողներն[86]: Նշված վերջին տվյալը պետական բյուջեի հարկային

---

[83] Voskanyan M.A., Galstyan A.G. Assessment of the Impact of Fiscal Policy on Economic Growth in the Republic of Armenia. Finance: Theory and Practice. 2023;27(4):104–117 (URL:https:// doi.org/10.26794/2587-5671-2023-27-4-104-117).

[84] ՀՀ ՊԵԿ գործունեության 2023թ.-ի տարեկան հաշվետվություն:

[85] Արդյունավետ հարկային քաղաքականության մշակման և իրականացման խնդիրները, Ա.Գ.Սաֆարյան / Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական տեղեկագիր, N2 2013:

[86] Տեղեկատվության ստացման դիմումի ՀՀ ՊԵԿ հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության 17.09.2024թ.-ի թիվ 1/4-3/59010-2024 պատասխան գրություն:

եկամուտներին գումարելու պարագայում **2023 թվականի հարաբերական հարկային բեռի ցուցանիշը՝** *(«հավաքագրված հարկեր + ապառք») / ՀՆԱ* ((2,221.9+53.0)/9,453.2*100) ստացվում է **24 տոկոս**:

Մեր իրականության մեջ հարկերից խուսափելու հիմնական պատճառը ներկայիս տնտեսական պայմաններում ձեռնարկատիրական գործունեության **հարկման բարձր դրույքաչափերն** են. առաջին հերթին դա բացատրվում է նրանով, որ դրանք որոշելիս թերևս դժվար է հաշվի առնել իրական արտադրողական բազայի հնարավորությունները, և երկրորդ հերթին՝ հարկման դրույքաչափերը սահմանվել են արտասահմանյան որոշ երկրներում գործող դրույքաչափերին մոտ, սակայն այլ երկրների համեմատությամբ սոցիալ-տնտեսական վիճակը և հատկապես ըստ շերտավորվածության բնակչության կենսամակարդակը հաշվի առնելը հետազոտական և գիտամեթոդական ասպեկտներում լրջագույն բարդություններ է ենթադրում[87]:

Ջեյմս Միրլիսը[88] իր «An Exploration in the Theory of Optimum Income Taxation» (1971) գիտական հոդվածում առաջարկել է մի մոդել, որտեղ հարկային քաղաքականությունը պետք է հաշվի առնի այն հնարավորությունը, երբ քաղաքացիները կարող են թաքցնել իրենց իրական եկամուտները կամ դիտավորյալ նվազեցնել իրենց ջանքերը, եթե հարկային դրույքաչափերը չափազանց բարձր են: Մոդելը վերաբերում է օպտիմալ հարկման խնդիրներին՝ հաշվի առնելով եկամուտների թաքցնումն ու քաղաքացիների ջանքերի փոփոխությունը՝ ի պատասխան բարձր հարկային դրույքաչափերի: Նշված հոդվածը հանդիսանում է կարևոր աշխատություն, որտեղ նա զարգացնում էր օպտիմալ

---

[87] Кирина Л. С., Горохова Н. А. Налоговый ме-неджмент в организациях. М.: Издательство Юрайт, 2014.

[88] Ջեյմս Միրլիսը բրիտանացի տնտեսագետ է, նեոքեյնսականության ներկայացուցիչ, 1996 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիր է տեղեկատվական ասիմետրիայի ոլորտում իրականացրած հետազոտությունների համար:

հարկման և ինֆորմացիայի ասիմետրիայի հետ կապված գաղափարները: Միրլիսն առաջարկում էր այնպիսի հարկային համակարգ, որը կապահովեր պետության համար բավարար եկամուտներ, սակայն միևնույն ժամանակ չէր ստեղծի խիստ տնտեսական շեղումներ: Միրլիսի օպտիմալ հարկային համակարգը այնպիսի համակարգ է, որը պետությանը տրամադրում է անհրաժեշտ միջոցները՝ առանց ճնշելու տնտեսական ակտիվությունը և հասարակության արտադրողականությունը: Փաստորեն, այն պահանջում է նուրբ հավասարակշռություն հետևյալ երկու սկզբունքների միջև.

– արդարություն՝ հարստության վերաբաշխում և անհավասարության նվազեցում:

– արդյունավետություն՝ աշխատանքի, ձեռնարկատիրության և ներդրումների համար խթանների պահպանում[89]:

Կարելի է ենթադրել, որ բարձր դրույքաչափերը միանգամայն ընդունելի կերպով պարբերաբար կատարում են իրենց գործառույթները բարեկեցության բարձր մակարդակ ունեցող հասարակությունում, սակայն պետք է փաստել, որ շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում դրանք չեն համապատասխանում հարկման համեմատաբար փոքրածավալ բազաներին:

Ինչ վերաբերում է ստվերային տնտեսությանը, ապա, ինչպես հայտնի է, վերջինս չկարգավորված, չհարկված, անօրինական գործունեություն է և մեր իրականության մեջ այն անխուսափելիորեն համաշխարհային տնտեսական ակտիվության որոշակի մասն է կազմում: Ստվերային տնտեսության ազդեցությունը հարկային եկամուտների նվազման վրա անխուսափելի է, և որպես ստեղծված իրավիճակին կարճաժամկետ հակազդեցություն, պետությունը կարող է բարձրացնել հարկման դրույքաչափերը, ինչը սակայն երկարաժամկետ հեռանկարում կարող է հակառակ էֆեկտ ունենալ:

---

[89] Mirrlees J., "An Exploration in the Theory of Optimum Income Taxation", 1971.

Իրականում կան բազմաթիվ պատճառներ, որոնք խրախուսում կամ ստիպում են բիզնեսին ստվերում աշխատել: Այսինքն, շատ դեպքերում դա տեղի է ունենում ոչ թե ընտրությամբ, այլ անհրաժեշտությամբ: Հաճախ կառավարությունները և կազմակերպությունները անմիջական շփման մեջ են մտնում ստվերային տնտեսության հետ, ինչը հանգեցնում է էթիկական և քաղաքական մի ամբողջ շարք տնտեսական երկընտրանքների: Այդուհանդերձ, կարևոր է հասկանալ, թե կոնկրետ ի՞նչն է մղում բիզնեսին որոշակիորեն գործել ստվերում[90]:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են մի քանի երկրներում ստվերային տնտեսության չափերի վերաբերյալ միջինացված տվյալներ:

Աղյուսակ 1

Ստվերային տնտեսության գնահատված չափերը (ՀՆԱ-ից տոկոս)[91]

Երկրներ*	2025թ. (կանխատեսում)	Միջին արժեքը (2011–2025թթ.)
Ավստրալիա	8,89	10,85
Ադրբեջան	58,38	58,05
Բրազիլիա	34,2	34,69
Կանադա	13,8	14,3
Չինաստան	9,9	10,12
Մերձբալթյան երկրներ (միջինը)	24.34	25.89
Հոնկոնգ	13,65	14,05
Հնդկաստան	13,6	16,35

[90] Дробот Е.В., Макаров И.Н.,Оценка факторов и стрессоров теневой экономики: мировой опыт / Теневая экономика № 1’2021 (Январь–март).

[91] Emerging from the shadows The shadow economy to 2025 (ACCA-report 2017 – London,) (URL: https://www.accaglobal.com/gb/en/technical-activities/technical-resources-search/2017/june/emerging-from-the-shadows-the-shadow-economy-to-2025.html):

Ինդոնեզիա	16,17	16,51
Իտալիա	26,37	26,37
Ճապոնիա	7,86	9,5
Ռուսաստան	39,3	39,19
Սինգապուր	14,06	12,86
Թուրքիա	21,55	24,7
Միացյալ թագավորություն	10,83	11,33
ԱՄՆ	6,94	7,59
Ամբողջ աշխարհում	*21,39*	*22,35*

* ***Հայաստանին վերաբերող տվյալներ այս շարքում ներկայացված չեն:***

Ըստ ԱՄՀ աշխատանքային փաստաթղթի 1991-2015թթ. աշխարհի 158 երկրների ստվերային տնտեսությունների ամփոփ վիճակագրական տվյալների համաձայն Հայաստանում ստվերային տնտեսության միջին ցուցանիշը ՀՆԱ-ի մեջ կազմել է 42.6 տոկոս[92]: Ի դեպ, հարկ է նշել նաև, որ ըստ առանձին հետազոտողների հաշվարկների 2019-2023 թվականների տվյալներով ՀՀ-ում ստվերային տնտեսության միջին ցուցանիշը տատանվում է ֆորմալ ՀՆԱ-ի 23-ից 27 տոկոսի միջակայքում[93]:

Այսպիսով, **օբյեկտիվորեն կամ ոչ օբյեկտիվորեն Հայաստանում յուրաքանչյուր ժամանակաշրջանին համապատասխան տնտեսվարող սուբյեկտների մի ստվար զանգված չի կարողանում կրել առկա հարկային բեռը:** Փաստորեն, այս տնտեսվարողների համար ընտրության տարբերակներն են՝ կամ իրականացնել ստվերային գործարքներ, կամ դադարեցնել իրենց գործունեությունը, կամ էլ՝ լինել ազնիվ հարկ վճարող, սակայն

[92] Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) աշխատանքային փաստաթուղթ 2018, «Ստվերային տնտեսությունները ամբողջ աշխարհում. ի՞նչ սովորեցինք մենք վերջին 20 տարիների ընթացքում»:

[93] «ԼՈՒՅՍ հիմնադրամ», ՀՀ ստվերային տնտեսության գնահատումը հարկային համակարգի տեսանկյունից, 15 հունիսի 2020: Մովսիսյան Քնքուշ, «ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» - ատենախոսություն 2024:

կուտակված հարկային պարտավորությունների պատճառով հայտնվել սնանկության գործընթացում: Արդարության համար պետք է նշել, որ կան նաև տնտեսվարողներ այնպիսիք, ովքեր ի վիճակի են, սակայն չեն ցանկանում ամբողջությամբ կրել հարկային բեռը. նշվածը թերևս կախված է տվյալ սուբյեկտների կողմից դրսևորվող բիզնեսի հոգեբանությունից: Պետք է ընդունել, որ բիզնեսի զարգացումը հիմնված չէ միայն տնտեսական առաջընթացն ապահովող օրենքների և ձեռնարկատիրության վարման կանոնների պահպանման վրա, երբեմն մեծ դեր են խաղում կառավարիչների հուզական և հոգեբանական գործոն-ները[94]: Սնանկության գործընթացների հետ կապված հարկ է մեջբերել ՀՀ ՊԵԿ-ի գործունեության որոշ ցուցանիշներ.

Աղյուսակ 2

ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված բավարարված սնանկության դիմումները 2021-2023թթ. ընթացքում[95]

	Տարվա սկզբից աճողական /2021թ./		Աճի տեմպ (%)	***Տարվա սկզբից աճողական /2022թ./***		Աճի տեմպ (%)	***Տարվա սկզբից աճողական /2023թ./***		Աճի տեմպ (%)
ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայաց-ված սնան-կության դիմումնե-րով վճիռ-ներ, որոնք բավարար-վել են	*Քա-նակ*	*Գումար (մլն. դրամ)*		*Քան-ակ*	*Գումար (մլն. դրամ)*		*Քա-նակ*	*Գումար (մլն. դրամ)*	
	340	7,195.3	96%	328	6,063.0	84%	434	9,839.8	162%

[94]Մամիկոնյան Կ., Գալստյան Է., Բիզնեսի հոգեբանություն. կամ՝ ձեռնարկա-տիրության վարման նոր կանոններ տնտեսական հանցագործությունների կան-խարգելման համատեքստում / ՀՀ ԳԱԱ «փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», համար 10. 2023, էջ՝ 122:

[95] ՀՀ ՊԵԿ գործունեության 2022-2023թ.-ի տարեկան հաշվետվություններ, «ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից կատարված աշխատանքների վերա-բերյալ»:

Համաձայն վերը բերված աղյուսակում ներկայացված աճի տեմպի տվյալների 2023թ.-ի ցուցանիշները թերևս հուսադրող չեն, ինչն իհարկե գալիս է սնանկության դեպքերի ավելացումից:

Հարկաբյուջետային քաղաքականությունը, կախված երկրի զարգացվածության աստիճանից, կարող է ունենալ զսպող կամ խթանող բնույթ, մասնավորապես՝ տնտեսական անկումը կանխելու նպատակով իրականացվում է **խթանող** հարկաբյուջետային քաղաքականություն, որի դեպքում ավելացվում են պետական ծախսերը և կրճատվում հարկման դրույքաչափերը, իսկ պետական ծախսերի կրճատման, հարկման դրույքաչափերի բարձրացման պարագայում **զսպող** հարկաբյուջետային քաղաքականությունը հանգեցնում է տնտեսական աճի սահմանափակման:

Համարվում է, որ **տնտեսության ստվերային հատվածի դեմ պայքարի հիմնարար մեթոդներից մեկը՝ հարկային բեռի էական նվազեցումն է, ինչը դրսևորվում է արտոնությունների սահմանման, և հիմնականում՝ հարկման դրույքաչափերի կրճատման միջոցով**:

Ինչպես ընդունված է և հայտնի է՝ հարկաբյուջետային (ֆիսկալ) քաղաքականությունն էական դեր ունի երկրի տնտեսական աճի ապահովման գործում[96]:

Պետական ծախսերի կրճատման պարագայում տեղի է ունենում արտադրության ծավալների պակասեցում, հետևապես նվազում է արձանագրում ՀՆԱ-ի ցուցանիշը: Տրամաբանորեն, **պետական ծախսերի ավելացման և հարկման դրույքաչափերի կրճատման միջոցով պետությունը խթանում է ՀՆԱ-ի աճը**:

---

[96] Vintilă G., Gherghina Ş. C., Chiricu C. Ş. Does fiscal policy influence the economic growth? Evidence from OECD countries. Economic Computation & Economic Cybernetics Studies & Research. 2021;55(2):229–246. (URL:https:// doi.org/10.24818/18423264/55.2.21.14).
Mose N., Do fiscal transfers foster regional economic growth? Financial Internet Quarterly. 2021;17(1):19–27. (URL:https:// doi.org/10.2478/fiqf-2021–0003).

Այսպես, որոշ հեղինակներ իրականացրած հետազոտությունների արդյունքների հիման վրա, ընդհակառակը, հաստատում են, որ հանրային կամ պետական ծախսերը բացասական ազդեցություն են ունենում տնտեսական աճի վրա[97]: Որոշ այլ հեղինակներ գործնական և հետազոտական նշանակության արդյունքների հիման վրա ցույց են տալիս, որ ընդհանուր պետական ծախսերը արդյունավետորեն չեն նպաստում դրական հարկաբյուջետային ազդեցություններին եվրոպական տնտեսության վրա: Հետևաբար, քաղաքականություն մշակողները կարող են խթանել տնտեսական աճը՝ աստիճանաբար կրճատելով հանրային ծախսերը և ձգտելով հավասարակշռված բյուջեների՝ մակրոտնտեսական կայունությունը պահպանելու համար: Պատճառը, մասնավորապես՝ սոցիալական ներդրումների բարձր բաժինն է, որը ճանաչվում է որպես աճին խոչընդոտող գործոն[98]: Կուտասին և Մարտոնը նույնպես համարել են, որ սոցիալական ներդրումների բարձր բաժինը խանգարում է տնտեսական աճի տեմպին[99]: Ի հակադարձում վերը նշվածի, հեղինակներ Ձհանգն ու Ձհանգը գտել են, որ սոցիալական ներդրումները նպաստում են ընդհանուր տնտեսական աճին[100]: Նգուենի, Հանգի և ուրիշների համահեղինակային աշխատանքը մեծ հաջողություն է գրանցել

---

[97] Vintilă G., Gherghina S.C., Chiricu C.S. Does fiscal policy influence the economic growth? Evidence from OECD countries. Economic Computation and Economic Cybernetics Studies and Research. 2021;55(2):229–246. (URL:https://doi.org/10.24818/18423264/55.2.21.14).

[98] Desislava G. Stoilova, Tax Structure and Economic Growth: New Empirical Evidence from the European Union / Journal of Tax Reform. 2024;10(2):240–257. (URL: https://doi.org/10.15826/jtr.2024.10.2.167).

[99] Kutasi G., Marton A., The Optimal Tax Structure from GDP-growth Perspective. Revista Finanzas y Política Económica. 2024;16(1):121–143. (URL:https://doi.org/10.14718/revfinanzpolitecon. v16.n1.2024.6).

[100] Zhang J., Zhang J., How Does Social Security Affect Economic Growth? Evidence from Cross-Country Data. Journal of Population Economics. 2004;17(3):473–500. (URL: https://doi.org/10.1007/s00148-004-0198-x).

Վիետնամում հարկային եկամուտների դրական ազդեցությունը տնտեսական աճի վրա ցույց տալու գործում: Սակայն այս ազդեցությունը բացասական է համարվել հատկապես երկարաժամկետում[101]: Պրադհանը, Արվինը և ուրիշներն իրենց համահեղինակային հետազոտության շրջանակներում եզրահանգում են, որ ինչպես ֆինանսական շուկաների զարգացումը, այնպես էլ հարկման հակվածությունը խթանում են տնտեսական աճը երկարաժամկետում: Ի հակադրություն կարճաժամկետ արդյունքների, որոնք միանշանակ չեն և կախված են ֆինանսական շուկաների զարգացման կոնկրետ չափանիշից[102]: Բոգաչովի, Վիշնևսկու և ուրիշների համահեղինակային աշխատանքում ներկայացվում է, որ հարկային ցուցանիշների (մակարդակ և կառուցվածք) և տնտեսական աճի ցուցանիշների միջև տարբերակելի օրինաչափություններ վիճակագրական վերլուծության միջոցով չեն չհայտնաբերվել: Ըստ էության, հնարավոր չէ միանշանակ եզրակացնել, որ հարկային մակարդակի իջեցումը և/կամ անուղղակի հարկերի մասնաբաժնի աճը ուղղակիորեն նպաստում են ազգային տնտեսական աճին: Հարկերի ազդեցությունը տնտեսական աճի վրա զգալիորեն տարբերվում է զարգացած և զարգացող տնտեսությունների միջև՝ ներկայացնելով բարդ և բազմաշերտ պատկեր[103]: Բալասոիուի, Չիֆուի և ուրիշների համահեղինակային աշխատանքում էմպիրիկ արդյունքները ցույց

---

[101] Nguyen M.L.T., Hang N.P.T., Bui T.N., Ho H.T., Thai T.D., The relationship between tax revenue and economic growth: an empirical study in Vietnam. Afro-Asian Journal of Finance and Accounting. 2023;13(4):434–451. (URL:https://doi.org/10.1504/AAJFA.2023.132957).

[102] Pradhan R.P., Arvin M.B., Nair M.S., Hall J.H., The dynamics between financial market development, taxation propensity, and economic growth: a study of OECD and non-OECD coun¬tries. Quality and Quantity. 2022;56(3):1503–1534. (URL:https://doi.org/10.1007/s11135-021-01192-w).

[103] Bogachov S.V., Vishnevsky V.P., Gurnak A.V., Nekliudova V.D. Modern Tax Trends and Economic Growth in a Turbulent World: Insights from Developed and Developing Economies. Journal of Tax Reform. 2024;10(1):63–83. (URL:https://doi.org/10.15826/jtr.2024.10.1.157).

են տվել, որ կորպորատիվ եկամտահարկը նշանակալիորեն բացասական ազդեցություն է ունենում տնտեսական աճի վրա՝ ինչպես բարձր, այնպես էլ սահմանափակ ֆիսկալ արդյունավետություն ունեցող երկրների համար: Բացի այդ, ֆիզիկական անձանց եկամտահարկը փոխկապակցված է տնտեսական աճի նվազման հետ սահմանափակ ֆիսկալ արդյունավետություն ունեցող երկրների համար: Ուստի, քաղաքականություն մշակողների տեսանկյունից ուղղակի հարկման նվազեցումը կարող է բարձրացնել հասանելի եկամուտները, խթանել սպառումն ու տնտեսական աճը, նպաստել ներդրումներին, որոնք հանգեցնում են աշխատատեղերի ստեղծմանը, բարձրացնել մրցունակությունը և նվազեցնել հարկերից խուսափումը՝ այդպիսով ստեղծելով ավելի արդյունավետ հարկային համակարգ[104]:

Այդուհանդերձ, ինչ որ տեղ նաև հակադարձում կարող է համարվել վերոնշյալ ձևակերպումներին առաջ քաշվող այն համարձակ գաղափարը, ըստ որի՝ **երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի կայուն վերընթացն ապահովելու նպատակով թերևս անհրաժեշտ չէ հարկման դրույքաչափերի հետ կապված ճկունություն ցուցաբերել տնտեսության ակտիվացման կամ անկման տարբեր փուլերում տեղի ունեցող տնտեսական գործընթացներում, այլ անհրաժեշտ է հարկման դրույքաչափերի հավասարակշռության հետագիծ թողնող ռազմավարություն մշակել և գործարկել՝ երկարաժամկետ հեռանկարում այն անփոփոխ թողնելու պայմանով**:

Այս պարագայում հարկ է անդրադառնալ ՀՀ կառավարության ծրագրում ներկայացված հետևյալ դրույթներին. «*Պետության կողմից իրականացվող հարկային քաղաքականությունը պետք է ուղղվի տնտեսության ներդրումային գրավչության բարձրացմանն ու տնտեսական ակտիվության մակարդակի բարելավմանը՝ դրանով իսկ ստեղծելով կայուն*

[104] Balasoiu N., Chifu I., Oancea M. Impact of Direct Taxation on Economic Growth: Empirical Evidence Based on Panel Data Regression Analysis at the Level of EU Countries. Sustainability. 2023;15(9):7146. (URL:https://doi.org/10.3390/su15097146).

նախադրյալներ՝ արտահանման և երկարաժամկետ տնտեսական աճի, հանրային բարիքի վերաբաշխման և հարկաբյուջետային կայունության ամրապնդման համար: .... Երկարաժամկետ տնտեսական աճին նպաստելու նպատակով իրականացվելու է ուղղակի հարկերի բեռի նվազեցում՝ ի հաշիվ անուղղակի հարկերի: Դա թույլ կտա բարձրացնել տնտեսության մրցունակությունը, ինչի արդյունքում հեռանկարային զարգացման տեսանկյունից կարևոր՝ արտահանելի հատվածում, կաճեն շահութաբերությունը և ներդրումների իրականացման խթանները»[105]:

Անուղղակի հարկումը շահավետ լուծում է համարվում արտաքին ազդեցությունների նկատմամբ, հիմնականում այն պատճառով, որ անուղղակի հարկման ավելացումը ենթադրում է գների աճ, որը հանգեցնում է սպառման նվազեցման, ինչպես նաև այն նվազեցնում է կառավարության կողմից հարկաբյուջետային քաղաքականության կոռեկտ չկիրառման հետևանքով առաջացած բացասական հետևանքները[106]:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխությունների կատարման արդյունքում 2020թ.-ին նվազեցվեց շահութահարկի դրույքաչափը՝ 20 տոկոսից անցում կատարվեց 18 տոկոսի, եկամտային հարկի պրոգրեսիվ հարկման համակարգից անցում կատարվեց համահարթ դրույքաչափի, որը տարեցտարի նվազեցնելով 2023 թվականին հասցվեց է 20 տոկոսի:

2021-2026թթ. ՀՀ կառավարության ծրագրի «Հարկաբյուջետային քաղաքականություն» բաժնում սահմանվել է հարկային քաղաքականության հիմնական բովանդակությունը, ըստ որի՝ այն պետք է լինի նպաստավոր բիզնես միջավայրի մրցունակության համար, միևնույն ժամանակ՝ ապահովի պետական բյուջեով սահմանված հարկային եկամուտները: Բացի այդ,

---

[105] ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարության 08.02.2019թ.-ի N 65–Ա որոշմամբ հաստատված:

[106] Helbling, T. Back to Basics. What Are Externalities? What Happens when Prices Do Not Fully Capture Costs. Finance & Development (2010), 47, 48-49.

կարևորվում է այնպիսի միջավայրի ձևավորումը, որը ներդրողների տեսանկյունից կլինի ընկալելի, արդար և կանխատեսելի[107]:

Այս առումով հարկ է անդրադառնալ հարկման դրույքաչափերի հավասարակշռության գաղափարին՝ ինչը ծառայելու է երկարաժամկետ հեռանկարում պետության կողմից ՀՆԱ-ի աճի ապահովման գործընթացի համար:

Այսպես, 20-րդ դարի 50-ականների սկզբին Ջոն Նեշը ձևակերպեց իր հայտնի «**Նեշի հավասարակշռության**» հայեցակարգը՝ ոչ անտագոնիստական խաղերում, որը հետագայում դարձավ խաղերի ամբողջ տեսության համար առանցքային: Համաձայն այս հայեցակարգի՝ «*Կոնֆլիկտի մասնակիցները պետք է օգտագործեն օպտիմալ ռազմավարություն, որը հանգեցնում է կայուն հավասարակշռության ստեղծմանը. խաղացողների համար ձեռնտու է պահպանել այս հավասարակշռությունը, քանի որ ցանկացած փոփոխություն կվատթարացնի նրանց դիրքը*»[108]:

Ստորև ներկայացվող հարկման դրույքաչափերի հավասարակշռության գաղափարի հիմքում վերաձևակերպվել է հենց այս հայեցակարգային սկզբունքը, ըստ որի՝ **«Կոնֆլիկտի մասնակից կողմերը երբ ձգտում են «առավելագույն օգուտ» ստանալ, առավելապես կայուն կհամարվի այն ընդհանուր արդյունքի նվազագույնը, որից առավել կողմերից ոչ մեկ չի կարող օգուտ ստանալ՝ առանց մյուսների ռազմավարությունների փոփոխության»**:

Այսուամենայնիվ, **անհրաժեշտ է ընտրել հարկային դրույքաչափերի ռազմավարություններում ՀՀ ՊԵԿ-ի *օգուտի* նվազագույն կետերը, որոնք կհամարվեն տնտեսվարող սուբյեկտի *վնասի* նվազագույն կետեր, ինչպես նաև՝**

---

[107] 2022-2025 թվականների հարկային եկամուտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 12.08.2022թ.-ի N 919-Լ որոշում:

[108] Вартанов С. А., Ивин Е. А., Прикладная теория игр для экономистов. – МГУ им. М.В.Ломоносова - Вологда: Вол.НЦ РАН, 2020., էջ 12:

տնտեսվարող սուբյեկտի օգուտի առավելագույն կետերը, որոնք կհամարվեն ՀՀ ՊԵԿ-ի *վնասի* առավելագույն կետեր:

2023 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներում առանձին հարկատեսակների մասնաբաժիններն են. ԱԱՀ՝ 35.6%, շահութահարկ՝ 14.9%, եկամտային հարկ՝ 25.7%, սոցիալական վճար՝ 4.2%, շրջանառության հարկ՝ 2.4%: Անհրաժեշտ է ընդգծել, որ վերոնշյալ մասնաբաժիններն օգտագործվելու են ներկայացվող տարբեր հարկատեսակների դրույքաչափերի ռազմավարություններից որոշակի ընտրանք իրականացնելու նպատակով:

Ի դեպ, սկզբունքայնորեն ընդունվել է, որ ներկայումս ՀՀ-ում գործող հարկման դրույքաչափերը ոչ օպտիմալ ծանրաբեռնվածություն են ստեղծում տնտեսվարող սուբյեկտի համար, իսկ պետության տեսանկյունից՝ նշված իրավիճակը ծնունդ է տալիս նաև հարկերի անհավաքագրելիության առկա խնդրին: Այդ նկատառումից ելնելով՝ ստորև կառուցվել են հարկման ծանրաբեռնվածության երեք խմբեր՝ ներկայումս ՀՀ-ում գործող հարկման դրույքաչափերից **նվազման միտում արձանագրող միջակայքերով ռազմավարություններ** (բացառություն են կազմում շրջանառության հարկի նոր դրույքաչափերը, որոնք կիրառվելու են 2025թ.-ից): Այսուամենայնիվ, **1-ին խմբում**՝ շահութահարկի դրույքաչափի միջակայքն է [16-19] տոկոսը, ներկայումս գործող 18 տոկոսի դիմաց, ԱԱՀ-ի միջակայքն է [18-20] տոկոսը, ներկայումս գործող 20 տոկոսի դիմաց (այսինքն այս խմբում նվազագույն միագումարային դրույքաչափը կազմում է՝ 18+16=34 տոկոս), **2-րդ խմբում**՝ եկամտային հարկի դրույքաչափի միջակայքն է [17-20] տոկոսը, ներկայումս գործող 20 տոկոսի դիմաց, սոցիալական վճարի դրույքաչափի միջակայքն է [3-5] տոկոսը, ներկայումս գործող 5 տոկոսի դիմաց, իսկ **3-րդ խմբում**՝ դրույքաչափերի միջակայքն է [առևտրից շրջ.հարկ-2, արտադրությունից շրջ.հարկ-1.5, այլ գործ. շրջ.հարկ-2, հանրային սննդից շրջ.հարկ-2.5 ստորին սահմանից 2025թ.-ից գործող առևտրից շրջ.հարկ-10, արտադրու-

թյունից շրջ.հարկ-7, այլ գործ. շրջ.հարկ-10, հանրային սննդից շրջ.հարկ-12 վերին սահման] տոկոսները:

Ընդունվել է նաև, որ **հարկերի նշված դրույքաչափերի ստորին սահմաններից ցածր դրույքաչափերով ձևավորված հարկման ծանրաբեռնվածությունն աննպատակահարմար է** ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճի պլանավորման տեսանկյունից, ինչպես և, հաշվի առնելով այն համեմատական տվյալները, որոնց համադրման դեպքում ակնառու է դառնում, որ հիմնականում աշխարհի ոչ մի զարգացած կամ զարգացող երկրում հարկման համապատասխան դրույքաչափերից ավելի նվազ շեմ չի գործում:

Ըստ ձեռնարկատիրական գործունեության հարկման ընդհանուր համակարգում շահութահարկի և ԱԱՀ-ի միասնական հարկման դրույքով ծանրաբեռնվածության մի շարք զարգացած երկրների և Հայաստանի համեմատական տվյալների՝ ծանրաբեռնվածության ամենացածր ցուցանիշն ունի Ճապոնիան՝ 33 տոկոս, որից հետո՝ Գերմանիան՝ 38 տոկոս և Հայաստանը նույն չափով՝ 38 տոկոս (շահութահարկը 18 տոկոս, ԱԱՀ-ն 20 տոկոս): Այլ երկրներում ձեռնարկատիրական գործունեության հարկման դրույքով ծանրաբեռնվածությունը կազմում է, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում՝ 45 տոկոս, ԱՄՆ-ում՝ 45 տոկոս, Ֆրանսիայում 45 տոկոս, Կանադայում՝ 53 տոկոս, Իտալիայում՝ 46 տոկոս և այլն[109]:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում միասնական ընդհանուր հարկման համակարգին (շահութահարկի և ԱԱՀ-ի) անցման վերաբերյալ գոյություն ունեցող հիմնական խնդիրներից մեկը հարկային հաշվառման, մասնավորապես՝ շահութահարկի հաշվարկման համար պահանջվող մասնա-

[109] Մամիկոնյան Կ., Մելքոնյան Ա., Հարությունյան Ա., Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հետաձգված հաշվառման մեխանիզմի կիրառման հիմնավորումը (փորձագիտական կարծիք), ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուր» ՊՈԱԿ-ի «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», համար 11. 2024, էջ՝ 79:

գիտական (պրոֆեսիոնալ) կարողությունների ներգրավման հարցն է, ինչը խնդրահարույց է հատկապես փոքր կազմակերպությունների պարագայում: Ընդ որում, հարկման այլընտրանքային համակարգերի, այդ թվում՝ շրջանառության հարկի համակարգի ներդրման անհրաժեշտությունը հիմնավորվել է նաև նշված հանգամանքով: Իսկ ԱԱՀ-ի հետ կապված՝ հարկ է նշել, որ 20% ստանդարտ դրույքաչափը ԵԱՏՄ տարածքում ամենաբարձրն է և կիրառվում է Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսում և Հայաստանում: Ինչ վերաբերում է շրջանառության հարկին, ապա հիմնական խնդիրը վերաբերում է հարկման այն սկզբունքին, թե **տնտեսվարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեությունից շրջանառության ո՞ր շեմը պետք է բաժանարար գիծ ընդունել ԱԱՀ-ի և շահութահարկի ընդհանուր համակարգի և շրջանառության հարկի պարզ համակարգի միջև**:

Այդուամենայնիվ, ստորև ներկայացվող **հարկման ծանրաբեռնվածության 1-ին խմբում ՀՀ-ում շահութահարկի և ԱԱՀ-ի միագումարային հարկման դրույքի ստորին սահմանն ընդունվել է 34 տոկոսը (Շահութահարկ-16, ԱԱՀ-18 նվազագույն դրույքաչափերի միագումար), քանի որ ըստ Ա. Լաֆերի՝ օպտիմալ դրույքաչափն արդեն իսկ սկսվում է եկամուտների հարկման 35 տոկոսից** (Լաֆերի կորի վերաբերյալ որոշ վերլուծություններ քննարկվել են ստորև):

Հաջորդիվ ներկայացվել է հարկման դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների առաջին խումբը:

Աղյուսակ 3

Տնտեսվարող սուբյեկտի շահութահարկի և ԱԱՀ-ի դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների խումբ

		Դրույքաչափեր	***Վնաս > 36.5****	***Օգուտ < 36.5***
1	1	*Շահութահարկ-16, ԱԱՀ-20*		36
	2	Շահութահարկ-16, ԱԱՀ-19		35
	3	Շահութահարկ-16, ԱԱՀ-18		34

	4	Շահութահարկ-17, ԱԱՀ-20	37	
	5	Շահութահարկ-17, ԱԱՀ-19		36
	6	Շահութահարկ-17, ԱԱՀ-18		35
	7	Շահութահարկ-18, ԱԱՀ-20	38	
	8	Շահութահարկ-18, ԱԱՀ-19	37	
	9	Շահութահարկ-18, ԱԱՀ-18		36
	10	Շահութահարկ-19, ԱԱՀ-20	39	
	11	Շահութահարկ-19, ԱԱՀ-19	38	
	12	*Շահութահարկ-19, ԱԱՀ-18*	37	
	ԸՆԴԱՄԵՆԸ		**226**	**212**

Ընդամենը արժեք / ռազմավարությունների թիվ՝ 438/12 = 36.5: Ստացված միջին ցուցանիշից բարձրը կհամարվի վնաս, իսկ ցածրը՝ օգուտ:

1-ին խմբում ընտրվել են *վնասի* սյունակի 4, 8 և 12 տողերը, իսկ *օգուտ* սյունակից 1, 5 և 9 տողերը: Հաշվի առնելով, որ հարկային եկամուտների մուտքերում ԱԱՀ-ի մասնաբաժինն ավելի շատ է քան շահութահարկինը, վերցվել է ընտրվածներից միագումարային ՀՀ ՊԵԿ-ի *օգուտում* (*վնաս* սյունակում) ԱԱՀ-ի ցածր դրույքաչափով տողը, այսինքն՝ 12 տողը, իսկ տնտեսվարող սուբյեկտի *օգուտում՝* ԱԱՀ-ի բարձր դրույքաչափով տողը, այսինքն՝ 1 տողը: «Հավասարակշռության 50%» սկզբունքի համաձայն՝ խմբում *ընդհանուր օգուտի նվազագույն արժեքը* կկազմի՝ (37+36)×50%=36.5 տոկոս:

Անհրաժեշտ է արձանագրել, որ «Հավասարակշռության 50%» սկզբունքի համար ընդունված հիմքերի վերաբերյալ ներկայացված է ստորև:

Հաջորդիվ ներկայացվում է հարկման դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների երկրորդ խումբը:

Աղյուսակ 4

Տնտեսվարող սուբյեկտի եկամտային հարկի և սոցիալական վճարի դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների խումբ

		Դրույքաչափեր	Վնաս > 22.5*	Օգուտ < 22.5
2	1	Եկամտային հարկ 20, սոց.վճար 5	25	
	2	Եկամտային հարկ 20, սոց.վճար 4	24	
	3	Եկամտային հարկ 20, սոց.վճար 3	23	
	4	Եկամտային հարկ 19, սոց.վճար 5	24	
	5	Եկամտային հարկ 19, սոց.վճար 4	23	
	6	*Եկամտային հարկ 19, սոց.վճար 3*		22
	7	*Եկամտային հարկ 18, սոց.վճար 5*	23	
	8	Եկամտային հարկ 18, սոց.վճար 4		22
	9	Եկամտային հարկ 18, սոց.վճար 3		21
	10	Եկամտային հարկ 17, սոց.վճար 5		22
	11	Եկամտային հարկ 17, սոց.վճար 4		21
	12	Եկամտային հարկ 17, սոց.վճար 3		20
		ԸՆԴԱՄԵՆԸ	**142**	**128**

Ընդամենը արժեք / ռազմավարությունների թիվ՝ 270/12 = 22.5: Սպացված միջին ցուցանիշից բարձրը կհամարվի վնաս, իսկ ցածրը՝ օգուտ:

Վերը ներկայացված 2-րդ խմբում ընտրվել են *վնասի* սյունակի 3, 5 և 7 տողերը, իսկ *օգուտ* սյունակից 6, 8 և 5 տողերը: Հաշվի առնելով, որ հարկային եկամուտների մուտքերում եկամտային հարկի մասնաբաժինն[110] ավելի շատ է քան սոցիալական վճարինը, վերցվել է ընտրվածներից միագումարային ՀՀ ՊԵԿ-ի *օգուտում* (*վնաս* սյունակում) եկամտային հարկի ցածր դրույքաչափով տողը, այսինքն՝ 7 տողը, իսկ տնտեսվարող սուբյեկտի *օգուտում՝* եկամտային հարկի բարձր դրույքաչափով տողը, այսինքն՝ 6 տողը: «Հավասարակշռության 50%» սկզբունքի

[110] Krajňák M., Evaluation the impact of the personal income tax reform in the Czech Republic in 2021 on effective tax rate and tax progressivity. Journal of Tax Reform. 2021;7(2):134–145. (URL:https://doi.org/10.15826/jtr.2021.7.2.094).

համաձայն՝ խմբում *ընդհանուր օգուտի նվազագույն արժեքը* կկազմի՝ (23+22)×50%=22.5 տոկոս:

Հաջորդիվ ներկայացվում է հարկման դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների երրորդ խումբը:

Աղյուսակ 5

Տնտեսվարող սուբյեկտի շրջանառության հարկի դրույքաչափերով ծանրաբեռնվածության ռազմավարությունների խումբ

		Դրույքաչափեր	***Վնաս > 24.3****	***Օգուտ < 24.3***
3	1	Առևտրից շրջ.հարկ - 10	39	
		Արտադրությունից շրջ.հարկ- 7		
		Այլ գործ. շրջ.հարկ - 10		
		Հանրային սննդից շրջ.հարկ -12		
	1	Առևտրից շրջ.հարկ - 9	34	
		Արտադրությունից շրջ.հարկ- 6		
		Այլ գործ. շրջ.հարկ - 9		
		Հանրային սննդից շրջ.հարկ -10		
	2	Առևտրից շրջ.հարկ - 8	30	
		Արտադրությունից շրջ.հարկ- 5		
		Այլ գործ. շրջ.հարկ -8		
		Հանրային սննդից շրջ.հարկ -9		
	3	*Առևտրից շրջ.հարկ - 7*	26.5	
		Արտադրությունից շրջ.հարկ- 4.5		
		Այլ գործ. շրջ.հարկ -7		
		Հանրային սննդից շրջ.հարկ -8		
	4	*Առևտրից շրջ.հարկ - 6*		23
		Արտադրությունից շրջ.հարկ- 4		
		Այլ գործ. շրջ.հարկ - 6		
		Հանրային սննդից շրջ.հարկ -7		
	5	Առևտրից շրջ.հարկ - 5		19.5
		Արտադրությունից շրջ.հարկ - 3.5		
		Այլ գործ. շրջ.հարկ - 5		

		Հանրային սննդից շրջ.հարկ - 6		
	6	Առևտրից շրջ.հարկ - 4		16
		Արտադրությունից շրջ.հարկ - 3		
		Այլ գործ. շրջ.հարկ - 4		
		Հանրային սննդից շրջ.հարկ - 5		
	7	Առևտրից շրջ.հարկ - 3		12.5
		Արտադրությունից շրջ.հարկ - 2.5		
		Այլ գործ. շրջ.հարկ - 3		
		Հանրային սննդից շրջ.հարկ - 4		
	8	Առևտրից շրջ.հարկ -2.5		10
		Արտադրությունից շրջ.հարկ - 2		
		Այլ գործ. շրջ.հարկ - 2.5		
		Հանրային սննդից շրջ.հարկ - 3		
	9	Առևտրից շրջ.հարկ -2		8
		Արտադրությունից շրջ.հարկ - 1.5		
		Այլ գործ. շրջ.հարկ - 2		
		Հանրային սննդից շրջ.հարկ - 2.5		
	ԸՆԴԱՄԵՆԸ		**129.5**	**89**

Ընդամենը արժեք / ռազմավարությունների թիվ՝ 218.5/9 = 24.3: Ստացված միջին ցուցանիշից բարձրը կհամարվի վնաս, իսկ ցածրը՝ օգուտ:

3-րդ խմբում ընտրվել են *վնասի* սյունակից 3 տողը, իսկ *օգուտ* սյունակից 4 տողը:

Հաշվի առնելով, որ հարկային եկամուտների մուտքերում շրջանառության հարկում առևտրից շրջանառության հարկի մասնաբաժինն ավելի շատ է քան մյուս ուղղությունները, վերցվել է ընտրվածներից միագումարային ՀՀ ՊԵԿ-ի *օգուտում* (*վնաս* սյունակում) առևտրից շրջանառության հարկի ցածր դրույքաչափով խումբը, այսինքն՝ 3 տողը, իսկ տնտեսվարող սուբյեկտի *օգուտում՝* առևտրից շրջանառության հարկի բարձր դրույքաչափով խումբը, այսինքն՝ 4 խումբը: «Հավասարակշռության 50%» սկզբունքի համաձայն՝ խմբում *ընդհանուր*

օգուտի նվազագույն արժեքը կկազմի՝ (26.5+23)×50%=24.75 տոկոս:

Ինչպես վերը նշվեց, Ջոն Նեշի հայտնի «Նեշի հավասարակշռության» հայեցակարգային սկզբունքի համաձայն անհրաժեշտ է ընտրել հարկային դրույքաչափերի ռազմավարություններում ՀՀ ՊԵԿ-ի *օգուտի* նվազագույն կետերը, որոնք կհամարվեն տնտեսվարող սուբյեկտի *վնասի* նվազագույն կետեր, ինչպես նաև՝ տնտեսվարող սուբյեկտի օգուտի առավելագույն կետերը, որոնք կհամարվեն ՀՀ ՊԵԿ-ի *վնասի* առավելագույն կետեր:

Այս տրամաբանությամբ հաջորդ փուլում անհրաժեշտ էր, մասնավորապես՝ հարկման ծանրաբեռնվածության 1-ին խմբում Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի և ԱԱՀ-ի միագումարային հարկման դրույքի ստորին սահմանն ընդունել (Շահութահարկ-16, ԱԱՀ-18 նվազագույն դրույքաչափերի միագումար): Այս պարագայում, քանի որ ըստ Ա. Լաֆերի՝ օպտիմալ դրույքաչափն արդեն իսկ սկսվում է եկամուտների հարկման 35 տոկոսից, ապա **շահութահարկի և ԱԱՀ-ի միագումարային հարկման դրույքի ստորին սահմանն ընդունվել է 34 տոկոսը**:

Այստեղ հարկ է նշել, որ վերոնշյալ «հավասարակշռության 50%» սկզբունքն իսկզբանէ ևս ընկած է Ա. Լաֆերի հարկման պրոգրեսիվության և բյուջեի հարկային եկամուտների միջև կախվածության գաղափարի հիմքում, որը հայտնի «Լաֆերի կոր»[111] անվանմամբ: Համաձայն վերջինիս՝ որքան բարձր են հարկման սահմանային դրույքները, այնքան հարկ վճարողների կողմից հարկերից խուսափելու արդյունքում ընդլայնվում է տնտեսության ստվերային հատվածը[112]: **Այս հիպոթեզի էությունն այն է, որ բյուջե գանձման սահմանային դրույքը եկամտի գումարից պետք է հավասար լինի 30 տոկոսի, իսկ օպտիմալ**

---

[111] Laffer A., Meiselman D. The Phenomenon of Worldwide Inflation. American Enterprise Institute for Public Policy Re, 1975. 218 p.

[112] Laffer A., Moore B.S. and Tanous P.J., The End of Prosperity: How Higher Taxes will Doom the Economy – if We Let it Happen. New York, Threshold Editions. 2008.

դրույքաչափը տատանվի 35-ից 40 տոկոսի սահմաններում[113]: **Հարկ է նշել նաև, որ ըստ Յու. Անանիաշվիլիի և Վ.Պապավայի հետազոտությունների՝ իրականում այն տնտեսությունների համար, որոնցում միջին հարկային դրույքաչափի փաստացի արժեքը գերազանցել է 30%-ը, լիովին թույլատրելի է, որ օպտիմալ համարվի հարկային 35-37 տոկոսանոց դրույքաչափը**[114]:

Եկամուտների գանձման 40-50 տոկոս դրույքաչափի պայմաններում բյուջեի մուտքերի աճը սկսում է դանդաղել, իսկ երբ դրույքաչափը բարձրանում է 50 տոկոսից բարձր, որն անվանվել է «արգելված գոտի», նկատվում է ոչ միայն բյուջեի մուտքերի, այլև խնայողությունների և ներդրումների կտրուկ նվազում: Սա նշանակում է, որ մինչև 50 տոկոս հարկման դրույքաչափի դեպքում բյուջեի մուտքերը մեծանում են, իսկ նշված սահմանաչափը գերազանցելը՝ հանգեցնում է հարկերի թերհավաքագրման՝ նույնիսկ հարկային հարաբերությունների սուբյեկտների հարկային բեռի ավելացման պայմաններում[115]:

Լաֆերի[116] կորը էմպիրիկորեն հաստատվել է ԱՄՆ-ում վերջին 100 տարիների ընթացքում առնվազն երեք անգամ՝ Հարդինգ-Կուլիջի հարկային բարեփոխման ժամանակ (1920-ականների կեսերին), նախագահ Քենեդու օրոք հարկային դրույքաչափերի նվազման ժամանակ (1960-ականների կեսերին), ինչպես նաև նախագահ Ռոնալդ Ռեյգանի հարկային բարեփոխման ժամանակ[117] (1980-ականների սկզբներին): Այսինքն

---

[113] Кравченко И.А., Налоговые реформи 80-х годов в США, социально-экономический аспект, М., НИФИ, 1989, ст. 9-10.

[114] Ананиашвили Ю., Папава В., Налоги и макроэкономическое равновесие, Лафферо-кейнсианский синтез, Стокгольм, 2010, ст. 104.

[115] Боброва А.В., Налоговое бремя в предпринимательстве, Вестник ЮУрГУ, № 22, 2012.

[116] Laffer A. The Laffer curve: past, present, and future / A. Laffer // Backgrounder. The Heritage foundation. - 2004. - Vol. 1765.

[117] Laffer A. B., A Special Introduction, in President Ronald Reagan's Initial Actions Project. New York, Threshold Editions. 2009.

Լաֆերի կորի գործողությունը բարելավում է հենց երկրի տնտեսական աճի ցուցանիշը, բացի ԱՄՆ-ից նաև Միացյալ Թագավորությունում 1980-ական թվականներին, Իռլանդիայում 1990-ական թվականներին և այլն:

Փաստորեն, համաձայն վերոնշյալ տեսության կողմնակիցների, հարկերի համապատասխանաբար ցածր դրույքաչափերը նպաստում են հարկերի հավաքագրմանը, ձեռնարկատիրական գործունեության ընդլայնմանը և ներդրումային ակտիվության աճին[118]: Սակայն, նրանց ընդդիմախոսները փաստում են, որ հարկային բեռի մակարդակի իջեցումն իմաստ ունի միայն տնտեսվարող սուբյեկտների շարունակական հարկային ազատականացման, նրանց աջակցման և արտադրական գործունեության խթանման համար, այլ ոչ թե երկրի բյուջեն համալրելու նպատակով, քանի որ հետագայում այդ թուլացումները ոչ մի դեպքում չեն կարող ապահովել հարկային եկամուտների համարժեք աճ[119]:

Ինչևիցե, ընդհանրացման արդյունքում ստացվել են խմբերում *վնասի* և *օգուտի* նվազագույն ու առավելագույն հետևյալ ցուցանիշները.

Աղյուսակ 6

Հարկման դրույքաչափերով ծանրաբեռնվածության խմբերում վնասը և օգուտը

Խմբեր	ՏՆՏ. ՍՈՒԲՅԵԿՏ		ՀՀ ՊԵԿ	
	Վնաս	***Օգուտ***	***Վնաս***	***Օգուտ***
1	37	36	36	37
2	23	22	22	23
3	26.5	23	23	26.5

[118] Becsi Z. The Shifty Laffer Curve // Federal Reserve Bank of Atlanta. Economic review. 2000. Vol. 85, No. 3. P. 53–64. (URL:https://www.researchgate.net/publication/5025629_The_shifty_Laffer_curve).

[119] Графическая интерпретация кривой лаффера с учетом налоговой «Миграции», Какаулина, Экономическая теория, Вестник УрФУ. Серия экономика и управление. 2017. Том 16. № 3. С. 336–356.

ԸՆԴ.	**86.5**	**81**	**81**	**86.5**
ԸՆԴԱՄԵՆԸ	**167.5**		**167.5**	

Այսպիսով, վերջնական փուլում ընտրվել են երեք խմբերից յուրաքանչյուրի համար ստացված *ընդհանուր օգուտի նվազագույն արժեքներին* համապատասխանող այն ռազմավարությունները, որոնց դեպքում դրույքաչափերի ՀՀ ՊԵԿ-ի *օգուտը* տնտեսվարող սուբյեկտի *օգուտից* նվազագույնն է՝ հաշվի առած պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների մեջ առանձին հարկերի մասնաբաժինները.

– ***1**-ին* խմբի դեպքում վերցվել է ընտրված ռազմավարություններից ԱԱՀ-ի ցածր դրույքաչափով տողը, այն է՝ «**Շահութահարկ – 19 տոկոս, ԱԱՀ – 18 տոկոս**»:

– ***2**-րդ* խմբի դեպքում վերցվել է ընտրված ռազմավարություններից եկամտային հարկի ցածր դրույքաչափով տողը, այն է՝ «**Եկամտային հարկ – 18 տոկոս, սոցիալական վճար - 5 տոկոս**»:

– ***3**-րդ* խմբի դեպքում վերցվել է ընտրված ռազմավարություններից առևտրից շրջանառության հարկի ցածր դրույքաչափով խումբը, այն է՝ «**առևտրային գործունեությունից շրջանառության հարկ – 6 տոկոս, արտադրական գործունեությունից շրջանառության հարկ – 4 տոկոս, այլ գործունեությունից շրջանառության հարկ – 6 տոկոս, հանրային սննդի գործունեությունից շրջանառության հարկ – 7 տոկոս**»:

Այսպիսով, ինչպես վերը նշվեց, Հայաստանի Հանրապետությունում գործող բիզնեսի հարկման տարբեր դրույքաչափերը ոչ օպտիմալ ծանրաբեռնվածություն են ստեղծում տնտեսվարող սուբյեկտների համար, և հետևաբար, պետության տեսանկյունից՝ նշված իրավիճակը ծնունդ է տալիս նաև հարկերի անհավաքագրելիության խնդրին: Վերը ներկայացվածի գործնական նշանակությունը կայանում է, հատկապես՝ ձեռնարկատիրական գործունեության հարկման օպտիմալ ծանրաբեռնվածությունը որոշելու մեջ:

§ 7. Ընկերությունների կապիտալում ֆիզիկական անձանց մասնակցությունից ստացված շահաբաժինները հարկումից ազատելու հայեցակետերը

Շահույթի կրկնակի հարկման անհամաչափությունը վերաբերում է այն իրավիճակին, երբ շահույթը հարկվում է կրկնակի՝ տարբեր մակարդակներում, ինչը հանգեցնում է հարկային բեռի անհամաչափ բաշխմանը՝ թե՛ ընկերությունների և թե՛ կապիտալում մասնակցություն ունեցող ֆիզիկական անձանց միջև:

Շահույթի կրկնակի հարկման անհամաչափության իրավիճակի չեզոքցման ուղղությամբ աշխատում են *հարկման արդարության, ներդրումների խթանման, հարկային չեզոքության, կրկնակի հարկման և միջազգային անհամաչափությունների նվազեցման* առանցքային տեսությունները, որոնց տրամաբանության սահմաններում գործարկվող մեխանիզմները (հարկային վարկերը, հարկման իմունիզացիան և նվազեցված դրույքաչափերը) աջակցում են և՛ արդար հարկային համակարգերի ձևավորմանը և՛ միջազգային տնտեսական համագործակցության ամրապնդմանը՝ թույլ տալով խուսափել հարկային բեռի կուտակումից և խթանելով կապիտալի հոսքերի համաչափ վերաբաշխումը:

«**Կրկնակի հարկման իմունիզացիա**» տերմինը սովորաբար վերաբերում է այն մեխանիզմներին կամ պայմանավորվածություններին, որոնք խուսափում են կամ նվազեցնում են կրկնակի հարկումը: Այս դեպքում պետք է ընդունել նաև, որ կրկնակի հարկումը տեղի է ունենում, երբ նույն եկամուտը հարկվում է երկու կամ ավելի անգամ տարբեր իրավասություններում, օրինակ՝ նույն երկրի կամ տարբեր երկրների հարկային մակարդակներում:

Կրկնակի հարկման իմունիզացիայի նպատակն է նվազեցնել կամ վերացնել այդ կրկնակի հարկումը: Այս համակարգը կարող է տարբեր ձև ընդունել՝ կախված երկրի հարկային

օրենսդրությունից: Ընդհանուր առմամբ կիրառվում են կրկնակի հարկման իմունիզացիայի հետ կապված երեք հիմնական մեխանիզմներ.

1. **Հարկային վարկ** (tax credit). այս մեխանիզմի դեպքում բաժնետերերին տրվում է հարկային վարկ այն հարկի համար, որն ընկերությունն արդեն իսկ վճարել է շահույթահարկի տեսքով: Այսպիսով, բաժնետերերը կարող են նվազեցնել իրենց անձնական եկամտահարկը՝ օգտվելով այդ վարկից:
2. **Հարկից ազատում** (tax exemption). այս դեպքում շահաբաժիններն ամբողջությամբ կամ մասամբ ազատվում են ֆիզիկական անձանց եկամտահարկից:
3. **Հարկի նվազեցված (կրճատված) դրույքաչափ** (reduced tax rate). որոշ երկրներում շահաբաժինները հարկվում են կրճատված դրույքաչափով, ինչը նաև թույլ է տալիս մեղմացնել կրկնակի հարկումը:

Համընդհանուր իմունիզացիայի նպատակն է ապահովել, որ ֆիզիկական անձանց կամ ընկերությունների ստացած եկամուտը կրկնակի և ավել անգամ չհարկվի: Այս նպատակին հասնելու համար տարբեր երկրներ կնքում են կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրեր (Double Taxation Avoidance Agreements, DTAAs), որոնք նախատեսում են որոշակի մեթոդներ, ինչպես, օրինակ՝ հարկման իրավասությունների բաշխումը, վարկի մեթոդը, կամ զուտ արտոնությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարության և մի շարք երկրների կառավարությունների միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնգրեր են կնքվել, մասնավորապես՝ Դանիայի Թագավորության, Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության, Իրանի Իսլամական Հանրապետության, Ռումինիայի կառավարութան, Ինդոնեզիայի, Հնդկաստանի, Հունգարիայի, Հունաստանի,

Իտալիայի, Ղազախստանի, Լիբանանի, Լիտվիայի, Լատվիայի հանրապետությունների և այլ երկրների միջև[120]:

Ֆիզիկական անձանց ընկերությունների կապիտալներում մասնակցությունից, մասնավորապես՝ բաժնեմասնակցությունից, փայամասնակցությունից և բաժնետոմսերում ներդրումից ստացած շահաբաժինների (շահութաբաժինների) եկամտային հարկով հարկման իրավիճակը սկզբունքայնորեն կապված է այն հանգամանքի հետ, որ դրանք հաճախ ենթակա են կրկնակի հարկման: Շահաբաժինները, որոնք ընկերությունները վճարում են բաժնետերերին, արդեն հարկվում են կորպորատիվ մակարդակում: Սա հանգեցնում է կրկնակի հարկման երևույթի. նախ հարկվում է ընկերության մակարդակում, ապա այդ նույն միջոցներից եկամտային հարկ է պահվում ֆիզիկական անձանցից, երբ նրանք ստանում են շահաբաժիններ: Շահաբաժինները եկամտային հարկից ազատելը կօգնի վերացնել կապիտալի այս կրկնակի հարկումը, ինչն էլ ներդրումները կդարձնի ավելի գրավիչ:

Ջեյմս Միռլիսն[121] իր «An Exploration in the Theory of Optimum Income Taxation» հոդվածում ներկայացնում է օպտիմալ եկամտահարկման տեսության կարևորագույն սկզբունքները: Նրա կարծիքով կապիտալի հարկման բարձր դրույքաչափերը, որոնք սահմանվում են ներդրումներից ստացված եկամուտների կամ շահաբաժինների վրա, կարող են նվազեցնել ընդհանուր առմամբ ներդրումային գրավչությունը, քանի որ ներդրողներն այս դեպքում կպահանջեն ավելի բարձր եկամտաբերություն՝ հարկումից

---

[120] ՀՀ կառավարության և մի շարք երկրների կառավարությունների միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնգրեր (ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք. URL:https://minfin.am/hy/page/krknaki_harkman_hamadzaynagrer/):

[121] James Mirrlees, «An Exploration in the Theory of Optimum Income Taxation» (1971). Բրիտանացի տնտեսագետ, նեոքեյնսականության ներկայացուցիչ Ջեյմս Միռլիսը 1996թ.-ին արժանացել է Նոբելյան մրցանակի տնտեսագիտության ոլորտում՝ իր տեղեկատվական ասիմետրիային վերաբերող հետազոտությունների համար:

առաջացած կորուստները փոխհատուցելու համար, կամ՝ ընդհանրապես կխուսափեն ներդրումներից: Վերջին իրավիճակը կարող է նվազեցնել տնտեսության մեջ ներդրումների մակարդակը, ինչը երկարաժամկետ հեռանկարում կդանդաղեցնի տնտեսական աճը:

Հարկ է նշել, որ կրկնակի հարկումը քննարկվող իրավիճակի դեպքում կարող է առաջանալ երկու հարկման մակարդակներում.

1. **Ընկերության (կորպորատիվ) մակարդակով**. ընկերությունը, որը մասնակցին վճարում է շահաբաժին, ընկերության մակարդակում՝ որպես ընկերության շահույթի մաս արդեն իսկ հարկել և պետական բյուջե վճարել է շահութահարկ (Հայաստանի պարագայում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18%):
2. **Ֆիզիկական անձանց մակարդակով**. երբ ֆիզիկական անձը ստանում է շահաբաժին, այն հարկվում է որպես եկամուտ (ՀՀ-ում ֆիզիկական անձանց կողմից ստացված շահաբաժինների համար ներկայումս գործում է 5% եկամտային հարկի դրույքաչափը):

Այսինքն ստացվում է, որ այս իրավիճակներում շահաբաժինը, որն արդեն հարկվել է ընկերության մակարդակում շահութահարկի տեսքով, մեկ անգամ ևս հարկվում է ֆիզիկական անձի եկամուտների հարկման ժամանակ, ինչը փաստորեն կարող է դիտվել որպես **կրկնակի հարկում**:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի[122] 149-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է հետևյալ դրույթը՝ «…. *հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում նաև՝ …. 4) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի*

[122] Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, ընդունված է 04.10.2016թ.-ին (համարը ՀՕ-165-Ն), ուժի մեջ է 01.01.2018թ.-ից:

թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց», իսկ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթի համաձայն՝ «*Հարկման բազան որոշելու նպատակով սույն հոդվածի 1-ին մասով սահմանված եկամուտները չեն համարվում նվազեցվող եկամուտներ (չեն նվազեցվում համախառն եկամտից), եթե՝ …. 4) ստացվում են որպես շահաբաժին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների*»: ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «*Շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով Օրենսգրքի 149-րդ հոդվածով սահմանված նվազեցումները*»: Ինչպես նաև հարկ է մեջբերել 159-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթը. «*Շահաբաժինների տեսքով ստացվող եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ նույն կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում ներդրված գումարը՝ ներդրման չափով, բայց ոչ ավելի, քան շահաբաժիններից պետական բյուջե վճարված հարկի գումարները, պետական բյուջեից փոխհատուցվում է Կառավարության սահմանած կարգով*» (ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից): Հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիների ստացած շահաբաժինների՝ եկամտային հարկով հարկմանը վերաբերող ՀՀ հարկային օրենսգրքի դրույթը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածներին վերագրվող (այդ ժամանակահատվածների գործունեության արդյունքում ստացվող) շահույթներից՝ որպես շահույթի բաշխում մասնակցի ստացած շահաբաժինների վրա:

Ինչ վերաբերում է շահույթի բաշխմանը, այսինքն՝ ընկերության որդեգրած յուրատեսակ շահութաբաժնային քաղաքականությանը, ապա Ռ.Բրեյլիի և Ս.Մայերսի կարծիքով, այն

մտնում է ֆինանսների տեսության չլուծված խնդիրների առաջին տասնյակի մեջ: Համաձայն նրանց դիրքորոշման, պետք է մեկուսացնել շահութաբաժնային քաղաքականությունը ֆինանսական կառավարման այլ խնդիրներից: Եվ այս պարագայում զուտ խնդիրը կկայանա նրանում, թե շահութաբաժնային քաղաքականության փոփոխություններից ինչպիսի՞ արդյունավետություն կարելի է սպասել՝ հաշվի առնելով ընկերության կապիտալի բյուջետավորումը, փոխառությունները, բաժնետոմսերի նոր թողարկումները, որպեսզի պարզ դառնա, թե ինչ կերպ է շահութաբաժնային քաղաքականությունն ազդում ընկերության շուկայական արժեքի վրա[123]:

Հայրենական և արտասահմանյան տնտեսագիտական տարբեր գրականությամբ շահութաբաժինների վճարումների վերաբերյալ ներկայացված դրույթները հիմնականում հանգում են այն ձևակերպմանը, որ ընկերությունն իրավասու է իր հայեցողությամբ որոշելու շահութաբաժինների վճարման հարցը, այսինքն՝ օրենսդրությունը ընկերությանը շահութաբաժինների վճարում չի պարտադրում, այլ ընդհակառակը, ընդունել է որոշակի սահմանափակում, որով արգելում է ընկերությանը հայտարարել (որոշում ընդունել) շահութաբաժինների վճարման մասին:

Ինչպես հայտնի է, շահութաբաժնային քաղաքականության հարցերի վերաբերյալ ընդարձակ գիտական քննարկումների առիթ հանդիսացավ Մ.Միլլերի և Ֆ.Մոդիգլիանիի համատեղ հոդվածը, որում հեղինակները ցույց են տվել, որ կատարյալ շուկայի պայմաններում ընկերության արժեքը կախված չէ շահութաբաժնային վճարումների ընտրությունից, այլ՝ բաժնետերերի բարեկեցությունից: Նրանց կարծիքով՝ ընկերության կողմից շահույթի գեներացման հնարավորության որոշումը ավելի շատ կախված է վերաներդրումային քաղաքականության արդյունավետությունից, այլ ոչ թե շահույթի բաշխման առանձնա-

[123] Brealey–Meyers: Principles of Corporate Finance, Seventh Edition. The McGraw–Hill Companies, 2003, էջ 433:

հատկություններից: Այլ խոսքերով, շահութաբաժնային քաղաքականությունն ընկերության շուկայական արժեքի վրա ազդող գործոն չէ, որից հետևել է, որ շահութաբաժինները պետք է հաշվարկվեն (հայտարարվեն) մնացորդային սկզբունքով՝ ընդունելի ներդրումային նախագծերի ֆինանսավորումից հետո: Իսկ բաժնետերերը կարող են ստեղծել իրենց սեփական շահութաբաժինները՝ կանխիկ փողի անհրաժեշտությունից ելնելով վաճառել իրենց բաժնետոմսերը: Այս մոտեցումը հայտնի է որպես շահութաբաժինների անվերաբերելիության տեսություն (Dividend Irrelevance Theory)[124]:

Վերոնշյալի համատեքստում ընկերության կապիտալում մասնակցությունից ֆիզիկական անձանց ստացած շահաբաժինները եկամտային հարկով հարկումից ազատելն արդեն իսկ ենթադրում է կարևոր տնտեսական հայեցակարգ, որն իհարկե ուղակիորեն կապված է կապիտալից ստացվող եկամուտների հարկային բեռի օպտիմալացման հետ: Հիմնարար տնտեսագիտության տեսանկյունից այս պնդումը կարելի է դիտարկել արդյունավետ ռեսուրսների բաշխման և ներդրումների խթանման տեսությունների միջոցով: Շահաբաժինները ֆիզիկական անձանց համար հարկից ազատելը կարող է խթանել հատկապես արժեթղթերի շուկայում ներդրումների աճը: Այս իմաստով, տրամաբանական է, որ հարկային բեռի նվազումը մեծացնում է ներդրումների զուտ եկամտաբերությունը, ինչն էլ դրանք դարձնում է ավելի գրավիչ ներդրողների համար: Իր հերթին՝ ներդրումների աճը նպաստում է ընկերությունների կապիտալի աճին, ինչը կարող է հանգեցնել տնտեսական ակտիվության աճի և ռեսուրսների բաշխման արդյունավետության բարձրացման:

Հարկ է նշել նաև, որ ներդրումներից ստացվող եկամուտների հարկման նվազեցումը կարող է երկարաժամկետ հեռանկարում հանգեցնել պետական բյուջեի եկամուտների ավելացման՝

[124] M.H.Miller, F.Modigliani. Dividend Policy, Growth, and the Valuation of Shares // Journal of Business, October 1961, p. 411-433.

հարկային բազայի ընդլայնման հաշվին: Լաֆերի կորի համատեքստում՝ ավելորդ հարկումը հանգեցնում է տնտեսական ակտիվության նվազման և, հետևաբար, հարկային մուտքերի կրճատման: Ֆիզիկական անձանց ստացած շահաբաժինները հարկումից ազատելը, ընդհակառակը, կարող է խթանել տնտեսական աճը և երկարաժամկետ հեռանկարում բարձրացնել պետական եկամուտները անուղղակի հարկերի և ընդլայնված հարկային բազայի միջոցով:

Ըստ Ա. Լաֆերի՝ օպտիմալ դրույքաչափն արդեն իսկ սկսվում է եկամուտների հարկման 35 տոկոսից: Եկամուտների գանձման 40-50 տոկոս դրույքաչափի պայմաններում բյուջեի մուտքերի աճը սկսում է դանդաղել, իսկ երբ դրույքաչափը բարձրանում է 50 տոկոսից բարձր, որն անվանվել է «արգելված գոտի», նկատվում է ոչ միայն բյուջեի մուտքերի, այլև խնայողությունների և ներդրումների կտրուկ նվազում[125]:

Լաֆերի կորը[126] էմպիրիկորեն հաստատվել է ԱՄՆ-ում վերջին 100 տարիների ընթացքում առնվազն երեք անգամ՝ Հարդինգ-Կուլիջի հարկային բարեփոխման ժամանակ (1920-ականների կեսերին), նախագահ Քենեդու օրոք հարկային դրույքաչափերի նվազման ժամանակ (1960-ականների կեսերին), ինչպես նաև նախագահ Ռեյգանի հարկային բարեփոխման ժամանակ (1980-ականների սկզբներին): Այսինքն Լաֆերի կորի գործողությունը բարելավում է հենց երկրի տնտեսական աճի ցուցանիշը, բացի ԱՄՆ-ից նաև Միացյալ Թագավորությունում 1980-ական թվականներին, Իռլանդիայում 1990-ական թվական-ներին և այլն:

Տրամաբանորեն, այն երկրները, որոնք խրախուսում է ձեռնարկությունների զարգացումը՝ տեսության մեջ ներդրումների դիվերսիֆիկացման, և այդպիսով տնտեսության աճն ապահովելու

---

[125] Налоговое бремя в предпринимательстве, А.В. Боброва, Вестник ЮУрГУ, № 22, 2012.

[126] Laffer A. The Laffer curve: past, present, and future / A. Laffer // Backgrounder. The Heritage foundation. - 2004. - Vol. 1765.

նպատակով, կարող են կիրառել հարկային արտոնություններ կամ հատուկ իրավական կարգավորումներ, որոնք նվազեցնում են շահաբաժինների հարկման դրույքաչափերը:

Այսպիսով, ամփոփելով «ֆիզիկական անձանց ստացած շահաբաժինները եկամտային հարկով հարկումից ազատելը»՝ որպես թեզ, այն կարելի է հիմնավորել հետևյալ առանցքային հարկաբյուջետային և սոցիալ-տնտեսական տեսանկյուններից:

1. **Կապիտալի կրկնակի հարկումը**: Բաժնետոմսերից ստացված շահաբաժինները ծագում են ընկերության տնտեսական գործունեության արդյունքում գեներացված շահույթից, որը նախապես արդեն հարկվել է շահութահարկով: Եթե այս շահաբաժինները ևս հարկվեն ֆիզիկական անձանց մակարդակում եկամտային հարկով, դա կառաջացնի կապիտալի կրկնակի հարկում, որը նվազեցնում է ներդրողների շահութաբերությունը: Նման կրկնակի հարկումը կարող է հանգեցնել այնպիսի հիմնարար տնտեսական խեղաթյուրումների, ինչպիսիք են ներդրումների նվազումը և տնտեսական աճի դանդաղումը:

2. **Կապիտալի կուտակումները**: Երբ կուտակված շահույթը չի վերաներդրվում, այսինքն սահմանված կարգով կանոնադրական կապիտալում բաժնեմասնակցությունը չի ավելացվում, սակայն և՝ չի էլ բաշխվում բաժնեմասնակցության սկզբունքով ներդրող ֆիզիկական անձանց միջև՝ շահաբաժինների հարկումից խուսափելու նպատակով, առաջանում է գլխավորապես փոքր և միջին ընկերություններում կապիտալի կուտակումներ:

3. **Ներդրումների թափանցիկությունը**: Շահաբաժինների եկամտային հարկով հարկումից ազատելն ապահովում է ընկերությունների բաժնետոմսերում ներդրումների թափանցիկությունը և բաժնետերերի շահերի պաշտպանությունը: Սա տնտեսական առումով կարևոր գործիք է, քանի որ շահաբաժինների ժամանակին վճարումը թույլ է տալիս իրականացնել կապիտալի արդյունավետ և արդարացի բաշխումը՝ զարգացնելով ֆինանսական շուկաները:

4. **Ներդրումների խթանման ռիսկի գործոնը**: Բաժնետոմսերը, ի տարբերություն ավանդների կամ պարտատոմսերի, կրում են ավելի մեծ ռիսկեր: Բաժնետոմսի սեփականատերը կարող է կորցնել իր ներդրումը՝ առանց որևէ եկամտի ապահովման, եթե ընկերությունը շահույթ չի ստանում: Ներդրումների խթանման առումով այդ ռիսկի առկայության պայմաններում շահաբաժինների հարկումը կարող է անհամաչափ լինել՝ նվազեցնելով ֆիզիկական անձանց մոտիվացիան՝ ներդրումներ կատարելու թեև ավելի ռիսկային, սակայն և պոտենցիալ ավելի եկամտաբեր բաժնետոմսերում:

Փաստորեն, ֆիզիկական անձանց կողմից ընկերության կապիտալում կատարված ներդրումներից ստացած շահաբաժինների հարկումը կարող է վնասել ներդրումային միջավայրին՝ նվազեցնելով տնտեսական աճի հնարավորությունները, խեղաթյուրելով կապիտալի բաշխումը և խոչընդոտելով բարձր ռիսկի և բարձր եկամտաբերությամբ ներդրումների կայացմանը: Այսպիսով, հարկային քաղաքականությունը, որը ֆիզիկական անձանց համար շահաբաժիններն ազատում է եկամտային հարկից, ոչ միայն վերացնում է կրկնակի հարկման հետ կապված անիրատեսությունը, այլև խթանում է տնտեսական աճը՝ ներգրավելով երկարաժամկետ ներդրումներ և ամրապնդելով ընկերության ֆինանսական կայունությունը:

Շարունակելով միտքը՝ հարկ է նշել, որ ֆիզիկական անձանց ընկերության կապիտալում մասնակցությունից ստացված շահաբաժինների հարկումից ազատումը կարելի է դիտարկել նաև տնտեսագիտական լրացուցիչ ասպեկտների և մեխանիզմների հարթության մեջ, որոնք ուժեղացնում են այս հարկման քաղաքականության օգտին արտահայտված փաստարկները:

– Նախ պետք է նկատել, որ շահաբաժինների հարկումը բացասաբար է անդրադառնում մասնավոր խնայողությունների վրա: Կապիտալում ներդրումների դիմաց ստացված եկամուտների բարձր դրույքաչափով հարկումը ֆիզիկական անձանց համար շարժառիթներ չի ստեղծում իրենց խնայողություններն ուղղել

ներդրումների իրականացման: Շահաբաժինների հարկումից ազատումը նպաստում է մասնավոր խնայողությունների մակարդակի բարձրացմանը, ինչն, ըստ տնտեսագիտության նեոկլասիկ տեսության, նպաստում է տնտեսության մեջ կապիտալի ծավալի աճին: Եվ վերջիվերջո, այն կարող է նպաստել արտադրողականությանը և երկարաժամկետ տնտեսական աճին:

– Շահաբաժինների հարկման բարձր դրույքաչափերը կարող են ներդրողներին մղել կապիտալի թաքցման մեխանիզմների կիրառման (օրինակ՝ օֆշորային սխեմաների իրականացման): Վերջինս բերում է ստվերային տնտեսության աճին և ֆինանսական հոսքերի թափանցիկության նվազման: Հատկանշական է, որ շահաբաժինների եկամտահարկից ազատումը նպաստում է կապիտալի դուրսբերմանը տնտեսության ստվերային ոլորտից՝ երկարաժամկետ հեռանկարում նպաստելով մակրոտնտեսական կայունությանը:

– Ժամանակակից հարկային համակարգերում տարբեր կիրառական մոտեցումներ են ներդրվում շահաբաժինների հարկման հարցում: Այն երկրները, որտեղ շահաբաժինները կամ ամբողջությամբ ազատված են հարկումից, կամ հարկվում են նվազեցված դրույքաչափով, ցուցաբերում են ավելի բարձր ներդրումային ակտիվություն: Որոշ երկրներ օգտագործում են «կրկնակի հարկման իմունիզացիայի», և հարկային վարկերի համակարգերը՝ այսպիսով ներդրողների հարկային բեռը նվազեցնելու և դրական ազդակներ հաղորդելու օտարերկրյա ներդրումների ներգրավման գործընթացին, ինչն իր հերթին արտացոլում է երկրի տնտեսական քաղաքականության և ներդրումային միջավայրի առանձնահատկությունները:

Հարկային վարկի տրամադրումը հիմնված է այն սկզբունքի վրա, որ հարկերը պետք է գանձվեն մեկ անգամ՝ ուղղակի շահույթի գեներացման փուլում, այլ ոչ թե կրկնակի՝ նաև շահութաբաժնի բաշխման փուլում: Հարկ է նշել, որ հարկային վարկի տրամադրման մեխանիզմը սովորաբար գործում է հետևյալ կերպ. եթե ընկերության շահույթն արդեն իսկ հարկվել է

շահութահարկով, ապա ֆիզիկական անձի կողմից ստացվող շահաբաժինը կարող է կամ լրացուցիչ չհարկվել, կամ ֆիզիկական անձին կարող է տրամադրվել հարկային վարկ (tax credit), որը հավասար է ընկերության վճարած շահութահարկին[127]: Բացի այդ, հարկային վարկի համակարգը հաճախ համադրվում է բաժնետիրական մասնակցության չեզոքության (shareholder neutrality) և հարկային ազդեցության չեզոքության (tax neutrality) սկզբունքների հետ, որոնց նպատակն է երաշխավորել, որպեսզի բաժնետերերը չկրեն ավելի ծանր հարկային բեռ: Մյուս կողմից, հարկային վարկերի տրամադրումը հիմնվում է նաև շահույթի կրկնակի հարկման անհավասարության մեղմացման (mitigation of double taxation disparity) տեսության վրա, որի շրջանակներում պետություններն իրականացնում են իրավական և տնտեսական միջամտություններ՝ ներդրողներին արդարացի հարկային միջավայր տրամադրելու նպատակով[128]:

Ստորև բերվել են որոշ երկրների օրինակներ, որոնք կիրառում են հատուկ մոտեցումներ շահաբաժինների հարկման հարցում:

Հոնկոնգում, Մալազիայում, Սաուդյան Արաբիայում, Բրազիլիայում շահաբաժիններն ազատված են ֆիզիկական անձանց եկամտահարկից և ոչ մի կերպ չեն հարկվում, ինչը հատուկ գրավչություն է հաղորդում ներդրումային միջավայրին: Այս մոտեցումը մեծացնում է կապիտալի հոսքերը՝ խթանելով ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրումները[129]:

Էստոնիան և **Լատվիան** ևս առանձնանում են՝ ազատված լինելով ֆիզիկական անձանց ստացած շահաբաժինների հարկումից, ինչը կապված է այդ երկրների հատուկ հարկային համակարգերի հետ, որտեղ հարկը գանձվում է շահույթի

---

[127] Աղբյուրներ՝ Musgrave R. A., "Tax Policy in a Global Economy" The American Economic Review (1996).

[128] Avi-Yonah R. S., "Globalization, Tax Competition, and the Future of Taxation" Harvard Law Review (2000).

[129] Աղբյուրը՝ URL:https://www.gov.hk/en/residents/taxes/profits/index.htm.

բաշխման պահին: Ընկերության շահույթի տարեկան հարկման փոխարեն հարկերը կիրառվում են միայն այն դեպքում, երբ շահույթը բաշխվում է բաժնետերերի միջև: Եթե բիզնեսը տվյալ տարում շահույթ է ստանում, սեփականատերերը կարող են որոշում կայացնել՝ ներդնելու այդ շահույթը բիզնեսի զարգացման մեջ՝ առանց հարկ վճարելու: Սա համարժեք է նոր ներդրումների ամբողջական արժեքի ապահովմանը: Էստոնիայում այս համակարգը գործարկվում է 2000 թվականից, իսկ Լատվիայում՝ 2018 թվականից[130]:

Սինգապուրում շահաբաժինները չեն հարկվում ֆիզիկական անձանց մակարդակում, եթե դրանք ստացվում են Սինգապուրի «միամակարդակ հարկման» կորպորատիվ հարկման համակարգում գործող ռեզիդենտ ընկերություններից: Սա նպատակ ունի խուսափել կրկնակի հարկումից և խթանել ներդրումները՝ դյուրացնելով շահաբաժինների հասանելիությունը ֆիզիկական անձանց համար: Սակայն որոշ բացառություններ, ինչպիսիք են անշարժ գույքի ներդրումային ֆոնդերի շահաբաժինները, հարկվում են՝ ելնելով իրավական կարգավորման անհրաժեշտությունից[131]:

Կիպրոսում ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար շահաբաժինների հարկման դրույքաչափը կազմում է 0%: Այսինքն, անկախ այն բանից, թե շահաբաժինները ստացվում են Կիպրոսում թե արտերկրում, Կիպրոսի հարկային ռեզիդենտ ֆիզիկական անձինք (եթե ֆիզիկական անձը Կիպրոսում գտնվում է 183 օր կամ ավելի) ազատված են ստացած շահաբաժինների հարկումից: Սակայն գործում է պաշտպանության հատուկ վճար (Special Contribution for Defence), որը կազմում է 17%՝ Կիպրոսում

---

[130] Աղբյուրներ՝ URL:https://taxfoundation.org/blog/estonia-tax-system-latvia-tax-system/, URL:https://taxsummaries.pwc.com/estonia/corporate/taxes-on-corporate-income.

[131] Աղբյուրը՝ URL:https://www.iras.gov.sg/taxes/individual-income-tax/basics-of-individual-income-tax/what-is-taxable-what-is-not/dividends.

ստացված շահաբաժինների համար և 30%՝ արտերկրից ստացվածների համար[132]:

Ավստրալիայում գործում է «franking credits» համակարգը, որը թույլ է տալիս բաժնետերերին ստանալ հարկային վարկեր՝ կապված շահաբաժիններից ստացված եկամուտների հետ: Վերջինս նվազեցնելով ներդրողների հարկային բեռը՝ խթանում է ներքին և արտաքին ներդրումները[133]:

ԱՄՆ-ում շահաբաժինների հարկումն իրականացվում է «հարկային վարկերի» մեխանիզմով: Գործարկված համակարգը թույլ է տալիս որոշակիորեն նվազեցնել շահաբաժինների կրկնակի հարկումը՝ առաջարկեով հարկային վարկեր կորպորատիվ հարկի և ֆիզիկական անձանց եկամտահարկի համար (դրույքաչափը՝ 0%-20%)[134]:

Կանադայում ներդրված է «կրկնակի հարկման իմունիզացիա» մեխանիզմ, որի շրջանակներում ներդրողներին տրամադրվում են հարկային վարկեր՝ կապված ընկերության մակարդակում արդեն իսկ վճարված հարկի հետ (դրույքաչափը՝ 15%-33%)[135]:

Մեծ Բրիտանիայում կիրառվում է «կրկնակի հարկման իմունիզացիա», որը նվազեցնում է կրկնակի հարկման ազդեցությունը շահաբաժինների հարկման քաղաքականության վրա: Տեղական ներդրողները կարող են օգտվել որոշակի արտոնություններից, ինչն ապահովում է ներդրումների համար

---

[132] Աղբյուրներ՝ URL:https://estateofcyprus.com/tax-on-dividends-in-cyprus/, URL:https://www.deloitte.com/cy/en/services/tax/perspectives/cyprus-tax-facts-2024.html.

[133] Աղբյուրը՝ URL:https://www.ato.gov.au/search-results#q=franking%20credits.

[134] Աղբյուրը՝ URL:https://www.irs.gov/site-index-search?search=tax+credits&field_pup_historical_1=1&field_pup_historical=1.

[135] Աղբյուրը՝ URL:https://www.canada.ca/en/services/taxes/child-and-family-benefits.html.

բավականին բարենպաստ պայմաններ (դրույքաչափը՝ 7.5%-39.35%)[136]:

Այսպիսով, վերը բերված երկրների օրինակները ցույց են տալիս, որ շահաբաժինների հարկման մեղմ մոտեցումները կարող են մեծացնել ներդրումային ակտիվությունը և մեծացնել հատկապես օտարերկրյա ներդրողների հետաքրքրությունը[137]:

Ուկրաինայում, օրինակ, ֆիզիկական անձանց համար շահաբաժիններն ամբողջությամբ ազատված չեն եկամտային հարկից: Դրանք ներառում են եկամտային հարկի 18% դրույքաչափ և ռազմական դրույթով կիրառվող հատուկ վճար՝ 1.5% դրույքաչափ, ինչը հանրագումարում կազմում է 19.5% հարկային պարտավորություն ֆիզիկական անձանց համար: Սակայն, որոշ դեպքերում, օրինակ, երբ շահաբաժինները ստացվում են ոչ ռեզիդենտ իրավաբանական անձից, հարկման կանոնները կարող են տարբերվել: Իսկ կրկնակի հարկման կանխարգելման տեսանկյունից Ուկրաինայի և որոշ երկրների միջև կան միջազգային պայմանագրեր, որոնք օգնում են խուսափել կրկնակի հարկումից: Սա նշանակում է, որ եթե շահաբաժինների աղբյուրը գտնվում է երկրում, որտեղից հարկային պայմանագիրը սահմանում է ավելի ցածր հարկային բեռ, Ուկրաինայում հարկային բեռը կարող է կարգավորվել այդ համաձայնագրով[138]:

Մի շարք Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրներ (OECD) հարկային արտոնություններ կիրառելու նպատակով սահմանում են չափանիշներ, որոնք նպատակաուղղված են ներդրումների իրականացման կարևորության (ռազմավարական մասնակցության)

---

[136] Աղբյուրը՝ URL:https://www.gov.uk/search/all?keywords=double+taxation+immunity&order=updated-newest.

[137] Աղբյուր՝ URL:https://taxsummaries.pwc.com/, URL:https://www.oecd.org/en.html.

[138] Ուկրաինայի Հարկային օրենսգիրք (Tax Code of Ukraine (with changes and additions, introduced by the Laws of Ukraine (Vidomosti Verkhovna Radi of Ukraine (ВВР), 2011, № 13-14, № 15-16, № 17, article 112)), 170-րդ հոդված:

որոշմանը: Այդ չափանիշների թվում են, առաջին հերթին, շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալում նվազագույն մասնակցության չափի և բաժնետոմսերը պահելու (չվաճառելու) ժամկետի պահանջները:

Որոշ երկրներում կիրառում են նաև շահաբաժիններ վճարող ընկերությունում ներդրումների արժեքի ցուցանիշը. օրինակ, Բելգիայում շահաբաժինների հարկումից ազատման համար նվազագույն ներդրումը պետք է կազմի 2.5 միլիոն եվրո՝ անկախ ընկերության մեջ մինչ այդ մասնակցության չափից, մինչդեռ Լյուքսեմբուրգում և Շվեյցարիայում մասնակցության նվազագույն 10% չափի այլընտրանքային պայմանով՝ համապատասխանաբար թույլատրվում է ներդնել 1.2 միլիոն եվրո կամ 1 միլիոն շվեյցարական ֆրանկ[139]:

Ի դեպ, հետաքրքիր և հեռանկարային է Ինդոնեզիայի փորձը, որտեղ արտասահմանից ստացված շահաբաժինները կարող են ազատվել հարկումից, եթե ստացված միջոցները որոշակի ժամկետում վերաներդրվեն ազգային տնտեսության մեջ: Նման մոտեցումը, հեռանկարում, կարող է ոչ միայն ներգրավել օտարերկրյա ներդրումներ, այլև խթանել ազգային տնտեսության իրական հատվածի զարգացումը[140]:

Հատկանշական են նաև մի շարք այլ երկրների օրինակներ, որոնց պարագայում շահաբաժիններն հարկվում են եկամտային հարկով:

Աղյուսակ 1

Շահաբաժինների եկամտային հարկով հարկման դրույքաչափերը զարգացած և զարգացող մի շարք երկրներում[141]

---

[139] Полежарова Л.В., Разу С.Б., Устранение экономического двойного налогообложения дивидендов.
ЭКОНОМИКА. НАЛОГИ. ПРАВО / Т. 15, № 2’2022:

[140] Полежарова Л.В., Методология налогообложения и налогового администрирования транснациональных
компаний и бенефициаров. Монография. М.: Кнорус; 2022. 400 с.

[141] Աղբյուրներ՝ URL:https://www.oecd.org, URL:https://taxsummaries.pwc.com,

Երկիրը	*Հարկի դրույքաչափը*
Իռլանդիան	51%
Դանիա	42%
Ֆրանսիա	30%-34%
Գերմանիա	26.38%
Ֆիլիպիններ	10%-25%
Ճապոնիա	20.32%
Հարավային Աֆրիկա	20%
Ինդոնեզիա	10%-20%
Թուրքիա	15%
Ռուսաստան	13%-15%
Արգենտինա	7%-13%
Չինաստան	10%
Հնդկաստան	10%
Մեքսիկա	10%
Սլովակիա	7%
Նորվեգիա	5.2%
Հունաստան	5%
Հայաստան	5%

Շահաբաժինների հարկումից ազատելու դեմ առավել հաճախակի բերվող փաստարկներից մեկն այն է, որ այս մոտեցումը կարող է նպաստել եկամուտների անհավասարության խորացմանը, քանի որ բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները սովորաբար ունենում են ավելի մեծ կապիտալ ներդրումներ բաժնետոմսերում: Այդուհանդերձ, հարկումից ազատելու քաղաքականությունը կարող է նաև խթանել միջին խավի

URL: https://home.kpmg/xx/en/home/services/tax.html,
URL:https://www.dits.deloitte.com.

մասնակցությունը ներդրումային գործընթացներին՝ հնարավորություն տալով ավելի լայն շերտերի ներգրավվածությանը: Ներդրումային հնարավորությունների հասանելիության ընդլայնումը կարող է նպաստել կապիտալից ստացվող եկամուտների ավելի հավասարաչափ բաշխմանը, ինչը երկարաժամկետ հեռանկարում կնվազեցնի եկամուտների անհավասարությունը: Սակայն այսպիսի միջոցառումները պետք է լրացվեն համալիր հարկային քաղաքականությամբ, որը նպատակաուղղված կլինի ընդհանուր անհավասարության կրճատմանը՝ այլ հարկման մեխանիզմների միջոցով:

Շահաբաժինները հարկումից ազատելու կարևոր հետևանքներից մեկը կարող է լինել կորպորատիվ կառավարման արդյունավետության բարձրացումը: Երբ շահաբաժինները չեն հարկվում եկամտային հարկով, ընկերության կապիտալում մասնակցություն ունեցող ֆիզիկական անձինք ավելի շատ մոտիվացիա են ունենում պահանջելու, որ ղեկավարությունը շահույթը բաշխի շահաբաժինների ձևով՝ այլ ոչ թե այն վերաներդնի պակաս արդյունավետ նախագծերում: Այս մոտեցումը նպաստում է կապիտալի առավել արդյունավետ բաշխմանը ընկերության ներսում: Տրամաբանորեն, այն ընկերությունները, որոնք ընտրել են շահաբաժինների պարբերաբար բաշխման քաղաքականություն և վերջինիս համաձայն բաշխում են ստացված շահույթները, սովորաբար կարող են ունենալ ավելի բարձր թափանցիկության և հաշվետվողականության մակարդակ ներդրողների նկատմամբ:

Այսպիսով, **շահաբաժինների եկամտային հարկից ազատումը ոչ միայն խթանում է ներդրումները, այլև նպաստում կորպորատիվ կառավարման բարելավմանը, ինչպես նաև ապահովում կապիտալից ստացվող եկամուտների ավելի արդար բաշխմանը**:

Ներկայացվածի վերլուծության արդյունքում առանձնացվել են այն հիմնական գործոնները, որոնք ազդեցություն կարող են

ունենալ տվյալ երկրի տնտեսությունում շահաբաժինների հարկման յուրօրինակ քաղաքականության ընդունման վրա:

– **Տնտեսական զարգացման մակարդակ**: Տնտեսական առաջընթացի աստիճանը զգալի ազդեցություն ունի հարկային քաղաքականության ձևավորման վրա: Զարգացած տնտեսություններում կիրառվում են ավելի խորը զարգացած հարկային համակարգեր, որոնք ներառում են շահաբաժինների հարկումը՝ ապահովելով պետական բյուջեի համալրումն ու ներդրումների հոսքի խթանումը:

– **Ներդրումային միջավայրի ռիսկային բաղադրիչը**: Այն երկրներում, որտեղ ներդրումային միջավայրը կայուն է և հավասարակշռված, պետությունները հաճախ կիրառում են շահաբաժինների հարկման բարենպաստ պայմաններ, նպաստելով կապիտալի ներհոսքին և տնտեսական զարգացմանը: Եվ հակառակը՝ ավելի ռիսկային ներդրումային միջավայրերում շահաբաժինների հարկումը կարող է խստանալ՝ ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներ ստեղծելու նպատակով:

– **Հասարակության բարեկեցության մակարդակ և սոցիալական համաչափություն**: Բարձր կենսամակարդակ ունեցող երկրներում շահաբաժինների հարկման մեղմ պայմանները կարող են կիրառվել որպես սոցիալական զարգացման գործիք: Ներդրումների խթանումն աջակցում է տնտեսական բազմազանությանը և բարեկեցությանը, ինչը նպաստում է պետական քաղաքականության սոցիալական բաղադրիչի ամրապնդմանը:

– **Սոցիալական հավասարության ապահովման մեխանիզմներ**: Որոշ երկրներում հարկային քաղաքականությունը կառուցվում է սոցիալական հավասարության սկզբունքների հիման վրա: Շահաբաժինների հարկումը կամ դրա բացակայությունը կարող են նպաստել հասարակության մեջ ռեսուրսների բաշխման արդարացիությանը կամ նպաստել սոցիալական ծրագրերի ֆինանսավորմանը՝ հիմնվելով հանրային համախմբման տեսությունների վրա:

Վերոգրյալի կիզակետում, ընկերությունների ֆինանսական հաշվետվություններում արտացոլված կապիտալի չհիմնավորված կուտակումների խնդիրը, այլընտրանքային ներդրումային ուղղությունների սահմանափակ լինելու պայմաններում, ստացված շահույթի բաշխման (շահաբաժինների վճարման) և կանոնադրական կապիտալում վերաներդրման գործառնությունների սահմանված կարգով չփաստաթղթավորման հետևանքով առաջացած տնտեսական հետևանքների առումով, ներկայիս հարկային իրավական կարգավորումների պայմաններում արդիական է դառնում հատկապես դատական **ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների** իրականացման տեսանկյունից: Ընկերության կապիտալում մասնակցություն ունեցող ֆիզիկական անձանց վճարված շահաբաժինները հարկելուց (հարկը պահելուց) խուսափելը կարող է դառնալ իրավական կարգավորումների խախտման հիմք, որի հետևանքով էլ, հատուկ բնույթի հարցերի առաջադրմամբ, կարող են նախաձեռնվել և իրականացվել ֆինանսատնտեսագիտական փորձաքննություններ՝ քրեական վարույթներին, ինչպես նաև սնանկության դատական վարույթներին օժանդակման պարագայում՝ անվճարունակության հատկանիշների պարզման միջանկյալ ապացուցողական բազայի ապահովման նպատակով:

Ֆինանսատնտեսագիտական փորձագիտական հետազոտություններում վերոնշյալ խնդրի պարզման մեթոդաբանության առնչությամբ քննարկումները կարևոր են, քանի որ կապիտալի արդյունավետ և նպատակային վերաներդրումն անմիջականորեն ազդում է ինչպես ընկերության պարտավորությունների մարման հնարավորությունների և ֆինանսական կայունության բացահայտման, այնպես էլ՝ բաժնետերերի շահերի պաշտպանության և կազմակերպության հետագա զարգացման նպատակների վրա:

Փորձագիտական հետազոտություններում մեթոդաբանության կիրառման վերաբերյալ քննարկումները պետք է առնչվեն, մասնավորապես՝

– ընկերության ֆինանսական վիճակի վերլուծությանը՝ ներառյալ ըստ տարիների ստացված շահույթի կառուցվածքի և կուտակման դինամիկայի ուսումնասիրությանը,

– շահույթի բաշխման քաղաքականության վերլուծությանը՝ շահույթի հետագա ներդրման հնարավորությունները պարզելու առումով, և

– տնտեսական հետևանքների գնահատմանը՝ կուտակված կապիտալի չկառավարման հետ կապված հնարավոր բացասական ազդեցության դիտարկման և կազմակերպության «իրական անվճարունակության» հատկանիշների որոշման նպատակով:

Այսպիսով, վերոնշյալ հարցերի քննարկումը կարևոր է մեթոդաբանության ընտրության և կիրառման համապատասխան փուլերում՝ ապահովելով ֆինանսական վերլուծության իրականացման որակը և փորձագիտական հետազոտությունների արդյունքների հուսալիությունը: Սակայն և, փորձագիտական կարծիքի ենթատեքստում հարկ է հնչեցնել հետևյալ հարցը՝ այս պարագայում որքանո՞վ է արդարացված հարկային քաղաքականության շրջանակներում իրավական կարգավորումների ուժով ընկերությունների և ֆիզիկական անձանց հանդեպ պատասխանատվության միջոցների ոչ համարժեք սահմանումն ու կիրառումը՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության ներկայիս զարգացման մակարդակի, սոցիալ-տնտեսական իրավիճակի և համարժեք հարկային քաղաքականության իրագործման շարունակական բարելավման պայմաններում:

§ 8. Անկանխիկ դրամարկղային գործառնությունների ոլորտում խնդիրները և իրավական կարգավորումների փոփոխությունների անհրաժեշտությունը

Դրամարկղային գործառնությունների փորձագիտական հետազոտությունների հիմնական մեթոդական խնդիրներին բնորոշ են՝ տվյալների հավաքագրման և մշակման խնդիրները, վերլուծական գործիքների անբավարարությունը, նորմատիվային կարգավորումների հստակեցման անհրաժեշտությունը, մարդկային գործոնի ազդեցությունը և այլն:

Դրամարկղային գործառնությունների ընթացքը ենթակա է մարդկային միջամտական սխալների, որոնք հնարավոր չէ լիովին բացահայտել՝ առանց արդի տեխնոլոգիական միջոցների: Վերջին հաշվով, ցանկացած համակարգում կա մարդկային գործոնի ազդեցության ռիսկ, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ գործառնությունների օբյեկտիվության համար: Օրինակ, տվյալների հավաքագրման համակարգերում հնարավոր են կրկնօրինակներ կամ անճշտություններ, որոնք խախտում են տվյալների ամբողջականությունը, իսկ ավանդական գործիքները չեն ապահովում բավարար ճշգրտություն և հաճախ չեն համապատասխանում ժամանակակից տեխնոլոգիաների պահանջներին: Եվ, ընդհանուր առմամբ, կանխիկ հոսքերի կառավարումը դեռևս չի բավարարում լիարժեք թափանցիկության պահանջներին, ինչը հանգեցնում է կոռուպցիոն ռիսկերի, և բացի այդ՝ գործող նորմատիվների ու կանոնակարգերի որոշ դրույթների պահանջներ արդեն իսկ հետ են մնացել ժամանակակից տնտեսական իրականությունից:

Անկանխիկ շրջանառության խթանումը սովորաբար հիմնավորվում է **ֆիսկալ թափանցիկության, կոռուպցիայի նվազեցման, ստվերային տնտեսության կրճատման** հայտնի սկզբունքներով: Նշված սկզբունքների բովանդակության շրջանակներում անկանխիկ գործարքները (վճարումները)՝ հեշտացնում են հաշվետվողականությունն ու ֆինանսական հոսքերի վերահսկումը

(նպաստում են հարկերի հավաքման արդյունավետության բարձրացմանը), նվազեցնում են կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ խոցելիությունը (քանի որ յուրաքանչյուր գործարք կրում է վերահսկման և հետագծելիության հստակ մեխանիզմներ), և վերջապես, անկանխիկ տնտեսության աճը նպաստում է ստվերային տնտեսության կրճատմանը՝ դարձնելով տնտեսության բոլոր սուբյեկտների գործունեությունն առավել թափանցիկ:

Անկանխիկ գործառնությունների իրականացման գործընթացը, չնայած իր բազմաթիվ առավելություններին, ունի նաև որոշակի բացասական կողմեր, դրանցից հիմնականներն են՝

– անձնական և ֆինանսական տվյալների անվտանգության և գաղտնիության հարցերը (այս առումով կիբերանվտանգության միջոցառումները միշտ պետք է բարձր մակարդակի վրա լինեն),

– բանկերի և վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված անկանխիկ գործառնությունների համար գանձվող միջնորդավճարներն ու հավելյալ ծախսերը (ինչը կարող է ծանրաբեռնել օգտատերերին),

– արժութային տարբերությունները և փոխանակման միջնորդավճարները (սրանք կարող են էական ազդեցություն ունենալ գործարքի գումարի վրա):

– գործարքների կեղծման ռիսկերի առաջացումը (բավարար հսկողական մեխանիզմների բացակայության պայմաններում՝ վճարման իրական աղբյուրի կամ վաճառողի ապրանքի (ծառայության) իրական շուկային համակցված լինելու տեղեկատվությունը ստուգելու անհնարինության դեպքում),

– մարդկանց որոշակի խմբերի ներգրավման դժվարությունները (հատկապես տարեցները և տեխնոլոգիական հմտություններ չունեցողները),

– անկանխիկ համակարգերի նկատմամբ վստահությունը (վերջինս արտահայտվում է մարդկանց որոշակի խմբերի անկանխիկ տնտեսությանը ներգրավման դժվարություններով, քանի որ կանխիկ գործարքների դեպքում դրանք ավելի հեշտ են վերահսկելի),

– ֆինանսական և բանկային ծառայությունների մատչելիության խնդիրը (մասնավորապես՝ գյուղական համայնքներում և ցածր եկամուտ ունեցող բնակչության շրջանում դեռևս կարող են լինել բանկային և վճարահաշվարկային ծառայությունների հասանելիության որոշակի սահմանափակումներ), և վերջապես՝

– չհստակեցված իրավական կարգավորումները (անկանխիկ գործառնությունների ոլորտում օրենսդրության բացերը հաճախ առաջացնում են չհստակեցված կամ անհամաչափ իրավական կարգավորումներ, որոնք վերաբերում են անկանխիկ գործառնություններ իրականացնողների շրջանակին, թույլատրելի չափերին, անվտանգությանը և այլն):

Վերը բերված բացասական կողմերը ցույց են տալիս, որ անկանխիկ գործառնությունները, չնայած իրենց արդյունավետությանն ու կատարման արագությանը, ունեն նաև որոշակի ռիսկեր, որոնք կարող են նշված համակարգի համար խտրական լինել: Եվ հետևաբար, անհրաժեշտ է նշված ռիսկերը հաշվի առնել տնտեսական կյանքում անկանխիկ գործառնությունների լայնորեն կիրառումից առաջ:

Անկանխիկ գործառնությունների ոլորտում չհստակեցված իրավական կարգավորումները խնդիրներ են առաջացնում շատ երկրներում՝ կապված ինչպես գործառնությունների ապահովության, այնպես էլ տվյալների պաշտպանության ու հետագա վերահսկողության հարցերի հետ:

Հնդկաստանում անկանխիկ վճարումների խթանման նախաձեռնությունները նպատակ ունեն ներառել ավելի մեծ թվով քաղաքացիների ֆինանսական համակարգում՝ զարգացնելով թվային տնտեսության ներուժը և նվազեցնելով կանխիկ շրջանառության ծավալները: Հատկապես 2016թ.-ի «դեմոնետիզացիայի» միջոցառումները, որոնք ուղղված էին բարձր արժեք ունեցող թղթադրամների շրջանառությունից դուրսբերմանը, ստիպեցին հանրությանը արագորեն անցնել անկանխիկ վճարային համակարգերի: Այդուհանդերձ, հատկապես երկրի գյուղական շրջաններում բնակչությունը բախվում է տեխնոլոգիական և

իրավական խոչընդոտների, որոնք սահմանափակում են թվային վճարային տեխնոլոգիաների կիրառումը և բացասաբար անդրադառնում անձնական տվյալների անվտանգության և իրավական պաշտպանության վրա[142]:

Չինաստանը խթանում է անկանխիկ վճարումները, մասնավորապես՝ «թվային յուանի» ներդրմամբ: Միևնույն ժամանակ սահմանափակում է կրիպտոարժույթների օգտագործումը՝ տեղական թվային արժույթի համակարգի աջակցմամբ: Սակայն այստեղ ևս բաց են մնում տվյալների պաշտպանության հարցերը և քաղաքացիների՝ իրենց ֆինանսական գործարքների նկատմամբ իրավունքների անխոչընդոտ իրացումը, հատկապես՝ քաղաքացիների վարքագիծը վերահսկող սոցիալական գնահատման համակարգի զարգացման պայմաններում[143]:

ԱՄՆ-ում չկան համընդհանուր կարգավորումներ, որոնք հստակորեն կարգավորում են անկանխիկ գործառնությունների գործընթացները բոլոր նահանգներում: Շատ նահանգներ ունեն իրենց սեփական օրենքները, որոնք կարող են տարբեր կերպ անդրադառնալ կրեդիտային քարտերի և էլեկտրոնային դրամապանակների բազաներում անձնական տվյալների պահպանությանը: Այսպիսով, ԱՄՆ-ում անկանխիկ գործարքների տարածումը խրախուսվում է, սակայն դրա հետ կապված մի շարք իրավական հարցեր մնում են չլուծված, հատկապես կիբեռանվտանգության և տվյալների պաշտպանության տեսանկյունից[144]:

---

[142] Աղբյուրը՝ URL:https://www.ibanet.org/article/FDA1D6FA-E429-447E-BE90-C868EC42BBE7

[143] Աղբյուրը՝ URL:https://lawpath.com.au/blog/what-are-the-privacy-implications-of-a-cashless-society, URL:https://abmagazine.accaglobal.com/global/articles/2021/dec/business/cashing-in-on-going-cashless.html.

[144] Աղբյուրը՝ URL: https://www.ibanet.org/article/FDA1D6FA-E429-447E-BE90-C868EC42BBE7.

Ռուսաստանը ձեռնամուխ է եղել անկանխիկ գործարքների խթանմանը, սակայն այստեղ առանձնահատուկ մարտահրավեր են բերում տվյալների պաշտպանության և միջազգային փոխանցումների սահմանափակումները: Տվյալների պաշտպանության օրենսդրության համաձայն՝ միջազգային ընկերությունները պարտավոր են պահպանել ռուսաստանցիների անձնական տվյալները միայն Ռուսաստանի սերվերներում, ինչը սահմանափակում է միջազգային ընկերությունների հետ համագործակցությունը և մեծացնում իրավական հակասությունների ռիսկը: Միևնույն ժամանակ ռուսական օրենսդրությունը դեռևս չի սահմանում ճշգրիտ կարգավորումներ կրիպտոարժույթներով և վիրտուալ ակտիվներով կատարվող գործարքների վերաբերյալ, ինչի պատճառով վիրտուալ հաշիվների օգտատերերը տարբեր իրավական հարցերի առաջ են կանգնում, վերջիվերջո նաև դատավարական գործընթացների դեպքում[145]:

Ճապոնիայում աննախադեպ աճ է գրանցվում անկանխիկ վճարումների ոլորտում՝ մեծապես կենտրոնանալով նորարարական տեխնոլոգիաների, այդ թվում՝ անկանխիկ վճարումների վրա (հատկապես QR կոդեր և թվային դրամապանակներ): Սակայն, տվյալների պաշտպանության, ինչպես նաև բլոկչեյն և արհեստական բանականության ոլորտներում կարգավորման բացերը դժվարացնում են նորարարական տեխնոլոգիաների կայուն զարգացումը: Տվյալների պաշտպանության խիստ և հստակեցված կանոններ չկան, ինչը կարող է խնդիրներ առաջացնել՝ անձնական տվյալների գաղտնիության և խարդախությունների կանխարգելման հարցերում[146]:

Եվրամիությունում (ԵՄ) թեև գործում է PSD2 (Payment Services Directive 2) կարգավորումը՝ կապված վճարային

---

[145] Aleksandr P. Alekseenko, «Russian Legal Policy Regarding Digitalization», Amurcon 2020: International Scientific Confer.. 10.15405/epsbs.2021.06.03.7. (URL:https://www.europeanproceedings.com/article/10.15405/epsbs.2021.06.03.7).

[146] Աղբյուրը՝ URL:https://lawpath.com.au/blog/what-are-the-privacy-implications-of-a-cashless-society.

ծառայությունների հետ, այնուամենայնիվ կան տարբերություններ անդամ երկրներում տվյալների պաշտպանության ու անվտանգության չափանիշների իրականացման հարցերում: Բացի այդ, եվրոպական որոշ երկրներում տեխնոլոգիական զարգացումներն առաջ են անցնում օրենսդրական փոփոխություններից, ինչն առաջացնում է իրավական անորոշություն, օրինակ՝ արհեստական բանականության կիրառումը վճարային համակարգերում, որի համար դեռևս հստակ կանոնակարգեր չկան: ԵՄ-ում անկանխիկ գործարքների զարգացումը կարգավորվում է մի շարք ստանդարտներով, որոնք հիմնականում ուղղված են ֆինանսական հաստատությունների և սպառողների պաշտպանությանը: Սակայն, անկանխիկ գործարքների ընդհանուր տարածման հետևանքով մեծանում է պահանջարկը տվյալների պաշտպանության նկատմամբ, իսկ կիբեռանվտանգության սպառնալիքները շարունակում են մնալ գլխավոր խնդիրներից մեկը[147]:

Հայաստանի Հանրապետությունում մինչև 18.01.2022թ.-ին ընդունված «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը, մեծ հաշվով դրամարկղային գործառնությունների վերաբերյալ իրավական կարգավորումները սևեռված էին կազմակերպություններում ապրանքների և ծառայությունների իրացման կամ ձեռք բերման գործարքների դիմաց վճարման պարագայում կանխիկ դրամի՝ դրամարկղ մուտքի և դրամարկղից ելքի գումարային սահմանափակումների (օրական և ամսական կտրվածքներով) և դրանց ժամկետային միջակայքերի վրա:

«Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 2022թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտնելով՝ կարգավորվել է ՀՀ տարածքում ապրանքների և գույքի օգտագործման ու օտարման դիմաց, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման գործարքների դիմաց, աշխատավարձերի, կրթա-

[147] Simon Fuller, «Digital finance: shift towards ‘cashless society’ raises legal and policy questions», (URL:https://www.ibanet.org/).

թոշակների, կենսաթոշակների, նպաստների, փոխառությունների, ներկայացուցչական ծախսերի, գործուղման նպատակով կատարվող անկանխիկ ձևով վճարումների, ինչպես նաև անկանխիկ գործառնությունների հետ կապված այլ հարաբերությունները: Օրենքը տարածվում է ՀՀ տարածքում փաստացի վճարում նախատեսող (փաստացի վճարված) գործարքների վրա:

Հարկ է նշել, որ քննարկվող թեմայի շրջանակներում չհստակեցված իրավական կարգավորումների խնդրից անմասն չի մնացել նաև վերոնշյալ օրենքը:

Այսպես. «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի[148] 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է հետևյալ հիմնական հասկացությունը և վերջինիս իմաստը. «***անկանխիկ ձևով գործառնություն (վճարում)***՝ *կանխիկ կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) բանկային հաշվին, կամ անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում, որն ուղղված է (փոխանցվում է) շահառուի (վճար ստացողի) էլեկտրոնային փողի հաշվին: Ընդ որում, անկանխիկ եղանակով նախաձեռնած վճարում է համարվում նախաձեռնողի բանկային կամ էլեկտրոնային փողի հաշվից կատարված վճարումը (փոխանցումը).*

Նշված դրույթում հստակեցված չէ, մասնավորապես՝ «…. **Կանխիկ** …. **եղանակով նախաձեռնած վճարում** ….» ձևակերպումը, ինչը հիմնականում տարակարծիքության տեղիք է տալիս՝ կասկածի տակ դնելով հիշյալ օրենքում ամրագրված «*անկանխիկ ձևով վճարումների և անկանխիկ գործառնությունների*» վերաբերյալ հիմնարար սկզբունքները:

Ի դեպ, **էլեկտրոնային փողը**՝ ըստ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով[149] սահմանված նշանակության.

---

[148] «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենք (ընդունված 18.01.2022, ՀՕ-12-Ն):

[149] «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունված 24.11.2004, ՀՕ-150-Ն):

«.... թողարկողի նկատմամբ դրամական պահանջ արտահայտող դրամական արժեքն է, որը՝

- պահվում է էլեկտրոնային սարքի վրա,

- թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժողությունը չի կարող ավելի փոքր լինել, քան թողարկված էլեկտրոնային փողի արժեքը,

- ընդունվում է որպես վճարամիջոց թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից»:

Այսպիսով, փաստ է, որ էլեկտրոնային սարքի վրա պահվող վերոնշյալ վճարամիջոցի հետ կապված տեխնոլոգիաների զարգացումը նոր հնարավորությունների պահանջ է թելադրում վերահսկողության, հաշվետվողականության և ընթացակարգերի իրականացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այդուհանդերձ, գործող մեթոդների ներդրման գործընթացը հաճախ չի հասցնում բավարարել արդի պահանջներին, ինչն արտահայտվում է առաջացած մեթոդաբանական և տեխնոլոգիական վերահսկողական մեխանիզմների խնդիրներով, որոնք էլ դառնում են խոչընդոտ դրամարկղային գործառնությունների արտացոլման ճշգրտության ու թափանցիկության համատեքստում: Եթե բանկային հաշիվներում արտացոլված տեղեկատվության անճշտության դեպքում, նկատի ունենալով մարդկային գործոնը, պատասխանատվություն է կրում ֆինանսական հաստատությունը, ապա օնլայն բանկինգով կամ բջջային հավելվածներով **վճարահաշվարկային համակարգերի դեպքում վճարային գործիքներով գործարքի կատարման ճշգրտության ապահովումը կախված է հենց շահառուի կողմից վճարման գործառնության ճիշտ իրականացումից**:

Նույն՝ «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է հետևյալ դրույթը. «*Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից 2022 թվականի հուլիսի 1-ից 300,000 Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող .... գործարքների, եթե դրանց մի կողմը ֆիզիկական*

անձ է, դիմաց վճարումը և վճարի ստացումն իրականացվում են անկանխիկ ձևով՝ անկախ վճարման կարգից, ….: ***Բացառություն են կազմում նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից մանրածախ առևտրում սահմանված կարգով դուրս գրված՝ ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվով ձևակերպված ապրանքների ձեռքբերման գործարքները, որոնց դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը չի կիրառվում***»:

ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվով ձևակերպված ապրանքների ձեռքբերման գործարքների վերաբերյալ վերոնշյալ դրույթի կիրառության մասով ՀՀ հարկային օրենսգրքի 386-րդ հոդվածով ևս սահմանված է նույնաբովանդակ պահանջ. «*3) մանրածախ առևտրում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման յուրաքանչյուր գործարքի դիմաց անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձից կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը սահմանվում է 3 միլիոն դրամ (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը),* ***իսկ եթե մանրածախ առևտրում ապրանքների մատակարարման համար սահմանված կարգով դուրս է գրվում ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվ, ապա այդ գործարքների դիմաց Հայաստանի Հանրապետության տարածքում կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափը չի կիրառվում***»[150]*:*

Պետք է նկատել, որ վերոնշյալ դրույթը հակասում է տնտեսությունում անկանխիկ շրջանառության խթանման հիմնական սկզբունքներին, որոնք ուղղված են վճարումների թափանցիկության բարձրացմանն ու հաշվետվողականությանը: Տվյալ դեպքում կանխիկ դրամի ընդունման օրենսդրական բացառությունը կարող է նվազեցնել ստվերային տնտեսության դեմ

[150] ՀՀ հարկային օրենսգրքի (ընդունված 04.10.2016թ.-ին, ուժի մեջ է 01.01.2018թ.ից) 386-րդ հոդված:

պայքարի արդյունավետությունը, քանի որ կանխիկ վճարումների նկատմամբ վերահսկողությունն անհամեմատ ավելի բարդ է, այն առումով, որ կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափի բացառությունը որոշակի պայմաններում կարող է խոչընդոտ հանդիսանալ ֆիսկալ կարգապահության և ֆինանսական վերահսկման նպատակների հասանելիության համար, հատկապես երբ խոսքը վերաբերում է օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից իրականացվող այնպիսի գործարքներին, որոնք կարող են դառնալ աուդիտորական վերահսկողության կամ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական փորձագիտական հետազոտությունների առարկա: Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կատարած կանխիկ վճարումները կարող են հեշտությամբ դուրս մնալ հարկային ընդհանուր կարգավորման, մասնավորապես՝ պարտավորությունների հաշվառման համապատասխան մեխանիզմներից, ինչն էլ կարող է բարդացնել այդ գործարքների վերահսկումը:

Հակառակ տեսանկյունից, ինչպես ՀՀ-ում, այնպես էլ մի շարք երկրներում, մասնավորապես՝ ՌԴ-ում, կանխիկ վճարումների առավելագույն սահմանափակում նույնպես չի կիրառվում այն դեպքերում, երբ օտարերկրյա պետությունների քաղաքացիները ձեռք են բերում ապրանքներ՝ հետագայում ԱԱՀ-ի վերադարձի նպատակով («Tax Free» համակարգով): Սա թույլ է տալիս, որ այդ անձինք վճարեն կանխիկ՝ անկախ գումարի չափից, եթե նրանք բավարարում են ԱԱՀ-ի վերադարձի համար անհրաժեշտ պայմանները, ինչպիսին է ապրանքի արտահանումը ՌԴ տարածքից որոշակի ժամկետներում: Այդպիսի բացառություն սահմանված է հաճախորդների հարմարավետության ապահովման նպատակով, հաշվի առնելով, որ օտարերկրյա այցելուները կարող են նախընտրել կանխիկով վճարել կամ չունենալ տեղական բանկային հաշիվ[151]:

[151] Статья 169.1 Налогового кодекса Российской Федерации.

Սակայն, օրինակ՝ Բելառուսի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների կողմից «Tax Free» համակարգում իրականացվող գնումների նպատակով կանխիկ վճարումների բացառիկ պայման չի գործում այնպիսի սկզբունքով, ինչպես ՀՀ-ում և ՌԴ-ում: Անկանխիկ վճարումների համար օտարերկրյա պետությունների քաղաքացիներին առաջարկվում են իրականացնել հավելյալ տեխնոլոգիական միջոցառումներ և թույլատրել վճարելու թե՛ կանխիկ, թե՛ անկանխիկ ձևով: Այսպիսով՝ առևտրային կետերը օտարերկրյա քաղաքացիներին կարող են խրախուսել իրականացնելու անկանխիկ վճարումներ՝ ֆինանսական վերահսկելիության և գործարքների թափանցիկության ապահովման նպատակով[152]:

Պետք է համաձայնել, որ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից մանրածախ առևտրում սահմանված կարգով դուրս գրված՝ ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշվով ձևակերպված ապրանքների ձեռքբերման գործարքների դեպքում ՀՀ տարածքում կանխիկ դրամով գումարի ընդունման առավելագույն չափ չկիրառելը (չսահմանելը) կարող է հանգեցնել ֆիսկալ կարգապահության և վերահսկման նպատակների չիրագործման: Այս պարագայում անհրաժեշտ են իրավական կարգավորման առավել ճկուն մեխանիզմներ, մասնավորապես՝ օտարերկրյա քաղաքացիներին առաջարկել իրականացնելու հավելյալ տեխնոլոգիական միջոցառումներ և թույլատրել վճարելու թե՛ կանխիկ, թե՛ անկանխիկ ձևով:

Այսպիսով, մեթոդաբանական և տեխնոլոգիական վերահսկողական մեխանիզմների խնդիրները, որոնք էլ դառնում են խոչընդոտ դրամարկղային գործառնությունների արտացոլման ճշգրտության ու թափանցիկության համատեքստում, արդիական կարող են լինել բոլոր տնտեսություններում: Եվ փաստորեն, վերը

---

[152] Постановление Совмина РБ от 08.01.2013 № 13 "О некоторых вопросах организации работы по возврату налога на добавленную стоимость в случае вывоза товаров за пределы таможенной территории Евразийского экономического союза".

բերված օրինակներում գերիշխող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ կիբեռանվտանգության սպառնալիքները, անձնական տվյալ-ների գաղտնիությունը և խարդախությունների կանխարգելումը, վիրտուալ հաշիվների օգտատերերի տարբեր իրավական հարցերը դատավարական գործընթացների դեպքում, քաղաքացիների՝ իրենց ֆինանսական գործարքների նկատմամբ իրավունքների ճիշտ և անխոչընդոտ իրացումը և, ընդհանուր առմամբ, տեխնոլոգիական և իրավական խոչընդոտները, որոնք սահմանա-փակում են թվային վճարային տեխնոլոգիաների կիրառումը և բացասաբար անդրադառնում անձնական տվյալների անվտան-գության ու իրավական պաշտպանության վրա, պետք է լինեն պետության համար առաջնային լուծում պահանջող վերահսկման մեխանիզմների ներդրման փաթեթներում:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:
2. ՀՀ հարկային օրենսգիրք (ընդունված 04.10.2016թ., ուժի մեջ է 01.01.2018թ.-ից):
3. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք:
4. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք:
5. «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենք:
6. «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք:
7. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք:
8. «Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենք (ընդունված 18.01.2022թ.):
9. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունված 24.11.2004թ.):
10. «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» ՀՀ կառավարության 1998 թվականի մարտի 27-ի N 209 որոշում:
11. «ՀՀ-ում գնահատման ստանդարտները, ինչպես նաև գնահատողի վարքագծին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի 24-ի N 1355-Ն որոշում:
12. «Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 09.11.2010 թ.-ի որոշումը, որով սահմանվել է ԲՏՀԴ-ն 12%:
13. ՀՀ վճռաբեկ դատարանի 27.03.2008թ.-ին թիվ 3-241(ՎԴ) քաղաքացիական գործով կայացված որոշումը:
14. «Եվրասիական տնտեսական միության մասին» 29.05.2014թ.ի պայմանագրի անբաժանելի մաս՝ «Ապրանքների արտահանման ու ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայու-

թյունների մատուցման ժամանակ անուղղակի հարկերի գանձման և դրանց վճարման նկատմամբ վերահսկողության կարգի մասին» 18-րդ հավելված:
15. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, 2021 -2023թթ. հունվար-դեկտեմբերին (www.armstat.am):
16. ՀՀ պետական եկամուտների գործունեության 2020-2023 թվականների տարեկան հաշվետվություններ:
17. ՀՀ ՊԵԿ գործունեության 2023թ.-ի տարեկան հաշվետվություն:
18. Տեղեկատվության ստացման դիմումի ՀՀ ՊԵԿ հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության 17.09.2024թ.-ի թիվ 1/4-3/59010-2024 պատասխան գրություն:
19. ՀՀ ՊԵԿ գործունեության 2022-2023թ.-ի տարեկան հաշվետվություններ, «ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ»:
20. ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարության 08.02.2019թ.-ի N 65–Ա որոշմամբ հաստատված:
21. ՀՀ կառավարության և մի շարք երկրների կառավարությունների միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին համաձայնագրեր (ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայք.(URL:https://minfin.am/hy/page/krknaki_harkman_hamadzaynagrer/):
22. ՌԴ քաղաքացիական օրենսգիրք (մասնավորապես՝ 395, 809 և 811 հոդվածներով սահմանված նորմատիվ դրույթներ):
23. ԲՀ քաղաքացիական օրենսգիրք (մասնավորապես՝ 366 և 762 հոդվածներով սահմանված նորմատիվ դրույթներ):
24. Ձեռնարկատիրական գործունեություն և ֆինանսներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Կարեն Հովհաննեսի Մամիկոնյան.- Եր.: 2019.- 138 էջ:

25. Մամիկոնյան Կ.Հ., Փորձագիտություն և ակտիվների գնահատում /Ուսումնամեթոդական ձեռնարկ: Երևան - 2023. - 223 էջ:
26. Կարեն Մամիկոնյան, Վարկային պայմանագրի խախտման հետևանքները և հարցերը ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում / Դատական իշխանություն, ապրիլ-հունիս 2022 4-6 (274-276):
27. Մամիկոնյան Կ., Գալստյան Է., Բիզնեսի հոգեբանություն. կամ՝ ձեռնարկատիրության վարման նոր կանոններ տնտեսական հանցագործությունների կանխարգելման համատեքստում / ՀՀ ԳԱԱ «փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», համար 10. 2023, էջ՝ 122:
28. Մամիկոնյան Կ., Մելքոնյան Ա., Հարությունյան Ա., Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ի հետաձգված հաշվառման մեխանիզմի կիրառման հիմնավորումը (փորձագիտական կարծիք), ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուր» ՊՈԱԿ-ի «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես», համար 11. 2024, էջ՝ 79:
29. Արդյունավետ հարկային քաղաքականության մշակման և իրականացման խնդիրները, Ա.Գ.Սաֆարյան / Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի գիտական տեղեկագիր, N2 2013:
30. Տ. Մամիկոնյան, Հարկատեսակների կշիռը բյուջեի եկամուտների ձևավորման գործընթացում (URL: https://orbeli.am/hy/post/1152/2023-06-26/Հարկատեսակների+կշիռը+բյուջեի+եկամուտների+ձևավորման+գործընթացում/):
31. 2022-2025 թվականների հարկային եկամուտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 12.08.2022թ.-ի N 919-Լ որոշում:
32. Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) աշխատանքային փաստաթուղթ 2018, «Ստվերային տնտեսությունները ամբողջ

աշխարհում. ի՞նչ սովորեցինք մենք վերջին 20 տարիների ընթացքում»:
33. «ԼՈՒՅՍ հիմնադրամ», ՀՀ ստվերային տնտեսության գնահատումը հարկային համակարգի տեսանկյունից, 15 հունիսի 2020: Մովսիսյան Քնքուշ, « ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման արդի հիմնախնդիրները» - սեղմագիր 2024:
34. Փոլ Ա. Սամուելսոն, Ուիլյամ Դ. Նորդհաուս, Տնտեսագիտություն, II, Միկրոտնտեսագիտություն – Եր., «Ապոլոն», 1996, 464 էջ, /Հայաստանի ամերիկյան համալսարան/:
35. Налоговый кодекс Российской Федерации (НК РФ) (принят 05.08.2000 N 117-ФЗ, ред. от 29.10.2024).
36. Постановление Совмина РБ от 08.01.2013 № 13 "О некоторых вопросах организации работы по возврату налога на добавленную стоимость в случае вывоза товаров за пределы таможенной территории Евразийского экономического союза".
37. Александрова Е.А., Подходы к расчету и оценке налоговой нагрузки / Экономический журнал 4 (52), ст. 38-53.
38. Мамиконян К.О., Вопросы методологии финансово-экономической экспертизы: Методическое пособие - Ер.: авт. изд., 2022.- 115 с.:
39. Егорова М.С., Вестник науки Сибири / 2013. № 3 (9) (URL:http://sjs.tpu.ru).
40. Федотова Г.В., Сибагатулина Л.М., Кооперация и интеграция в агропромышленном комплексе / Финансовая аналитика: проблемы и решения, 29 (2016) 14–22 (URL:http://fin-izdat.ru/journal/fa/).
41. Федеральный закон "Об обществах с ограниченной ответственностью" (с изм. и доп., вступ. в силу с 01.09.2024).
42. Романенко Е.В., Малое предпринимательство в омской области / Российское предпринимательство, 2008, № 11 (1).

43. Актуальные вопросы развития местного самоуправления в России и за рубежом. Сборник статей / Под ред. А.В. Мадьяровой и др.– М., 2009. – 380 с.
44. Ильин А.В., Налог на добавленную стоимость: экономическая сущность и механизм определения /Макроэкономический анализ: методы и результаты/ Вестник Новосибирского государственного университета, 2003/.
45. Брызгалин А.В. Налоговая оптимизация: принципы, методы, рекомендации, арбитражная практика. Москва, 2006, Ęǫ 22:
46. Психология бизнеса. Теория и практика : учебник для магистров / под общ. ред. Н. Л. Ивановой, В. А. Штроо, Н. В. Антоновой. — М. : Издательство Юрайт, 2017. — 509 с. Щербатых Ю. В. Психология предпринимательства и бизнеса: Учебное пособие. — СПб.: Питер, 2008. — 304 с.
47. Коммерческая деятельность: Учебник / Ф. Г. Панкратов, Н. Ф. Солдатова. — 13-е изд., перераб. и доп. — М.: Издательско-торговая корпорация «Дашков и К°», 2012. — 500 с.
48. Кирина Л. С., Горохова Н. А. Налоговый ме-неджмент в организациях. М.: Издательство Юрайт, 2014.
49. Дробот Е.В., Макаров И.Н.,Оценка факторов и стрессоров теневой экономики: мировой опыт / Теневая экономика № 1'2021 (Январь–март).
50. Вартанов С. А., Ивин Е. А., Прикладная теория игр для экономистов. – МГУ им. М.В.Ломоносова - Вологда: Вол.НЦ РАН, 2020., Ęǫ 12:
51. Кравченко И.А., Налоговые реформи 80-х годов в США, социально-экономический аспект, М., НИФИ, 1989, ст. 9-10.
52. Ананиашвили Ю., Папава В., Налоги и макроэкономическое равновесие, Лафферо-кейнсианский синтез, Стокгольм, 2010, ст. 104.
53. Боброва А.В., Налоговое бремя в предпринимательстве, Вестник ЮУрГУ, № 22, 2012.

54. Графическая интерпретация кривой лаффера с учетом налоговой «Миграции», Какаулина, Экономическая теория, Вестник УрФУ. Серия экономика и управление. 2017. Том 16. № 3. С. 336–356.
55. Налоговое бремя в предпринимательстве, А.В. Боброва, Вестник ЮУрГУ, № 22, 2012.
56. Полежарова Л.В., Разу С.Б., Устранение экономического двойного налогообложения дивидендов. ЭКОНОМИКА. НАЛОГИ. ПРАВО / Economics, taxes & law Т. 15, № 2'2022.
57. Полежарова Л.В., Методология налогообложения и налогового администрирования транснациональных компаний и бенефициаров. Монография. М.: Кнорус; 2022. 400с.
58. Tax Code of Ukraine (with changes and additions, introduced by the Laws of Ukraine (Vidomosti Verkhovna Radi of Ukraine (BBP), 2011, № 13-14, № 15-16, № 17, article 112).
59. Business Psychology in Practice: Edited by PAULINE GRANT, Whurr Publishers 2005.
60. Thinking, Fast and Slow (Hardcover) by Daniel Kahneman (shelved 19 times as business-psychology) published 2011.
61. McKenna, Eugene F., Business psychology and organizational behaviour : an introductory text / Eugene McKenna. 2012 Psychology Press (2020– 6th ed).
62. Brealey–Meyers: Principles of Corporate Finance, Seventh Edition. The McGraw–Hill Companies, 2003.
63. James Mirrlees, «An Exploration in the Theory of Optimum Income Taxation» (1971).
64. Voskanyan M.A., Galstyan A.G. Assessment of the Impact of Fiscal Policy on Economic Growth in the Republic of Armenia. Finance: Theory and Practice. 2023;27(4):104–117 (URL:https://doi.org/10.26794/2587-5671-2023-27-4-104-117).
65. Mose N., Do fiscal transfers foster regional economic growth? Financial Internet Quarterly. 2021;17(1):19–27. (URL:https://doi.org/10.2478/fiqf-2021–0003).

66. Vintilă G., Gherghina S.C., Chiricu C.S. Does fiscal policy influence the economic growth? Evidence from OECD countries. Economic Computation and Economic Cybernetics Studies and Research. 2021;55(2):229–246. (URL:https://doi.org/10.24818/18423264/55.2.21.14).
67. Desislava G. Stoilova, Tax Structure and Economic Growth: New Empirical Evidence from the European Union / Journal of Tax Reform. 2024;10(2):240–257. (URL: https://doi.org/10.15826/jtr.2024.10.2.167).
68. Kutasi G., Marton A., The Optimal Tax Structure from GDP-growth Perspective. Revista Finanzas y Política Económica. 2024;16(1):121–143. (URL:https://doi.org/10.14718/revfinanzpolitecon. v16.n1.2024.6).
69. Zhang J., Zhang J., How Does Social Security Affect Economic Growth? Evidence from Cross-Country Data. Journal of Population Economics. 2004;17(3):473–500. (URL: https://doi.org/10.1007/s00148-004-0198-x).
70. Nguyen M.L.T., Hang N.P.T., Bui T.N., Ho H.T., Thai T.D., The relationship between tax revenue and economic growth: an empirical study in Vietnam. Afro-Asian Journal of Finance and Accounting. 2023;13(4):434–451. (URL:https://doi.org/10.1504/AAJFA.2023.132957).
71. Pradhan R.P., Arvin M.B., Nair M.S., Hall J.H., The dynamics between financial market development, taxation propensity, and economic growth: a study of OECD and non-OECD coun¬tries. Quality and Quantity. 2022;56(3):1503–1534. (URL:https://doi.org/10.1007/s11135-021-01192-w).
72. Bogachov S.V., Vishnevsky V.P., Gurnak A.V., Nekliudova V.D. Modern Tax Trends and Economic Growth in a Turbulent World: Insights from Developed and Developing Economies. Journal of Tax Reform. 2024;10(1):63–83. (URL:https://doi.org/10.15826/jtr.2024.10.1.157).

73. Balasoiu N., Chifu I., Oancea M. Impact of Direct Taxation on Economic Growth: Empirical Evidence Based on Panel Data Regression Analysis at the Level of EU Countries. Sustainability. 2023;15(9):7146. (URL:https://doi.org/10.3390/su15097146).
74. Mirrlees J., "An Exploration in the Theory of Optimum Income Taxation", 1971.
75. Emerging from the shadows The shadow economy to 2025 (ACCA-report 2017 – London,) (URL:https://www.accaglobal.com/gb/en/technical-activities/technical-resources-search/2017/june/emerging-from-the-shadows-the-shadow-economy-to-2025.html):
76. Helbling, T. Back to Basics. What Are Externalities? What Happens when Prices Do Not Fully Capture Costs. Finance & Development (2010), 47, 48-49.
77. Laffer A., Meiselman D. The Phenomenon of Worldwide Inflation. American Enterprise Institute for Public Policy Re, 1975. 218 p.
78. Krajňák M., Evaluation the impact of the personal income tax reform in the Czech Republic in 2021 on effective tax rate and tax progressivity. Journal of Tax Reform. 2021;7(2):134–145. (URL:https://doi.org/10.15826/jtr.2021.7.2.094).
79. Laffer A., Moore B.S. and Tanous P.J., The End of Prosperity: How Higher Taxes will Doom the Economy – if We Let it Happen. New York, Threshold Editions. 2008.
80. Laffer A. B., A Special Introduction, in President Ronald Reagan's Initial Actions Project. New York, Threshold Editions. 2009.
81. Becsi Z. The Shifty Laffer Curve // Federal Reserve Bank of Atlanta. Economic review. 2000. Vol. 85, No. 3. P. 53–64. (URL:https://www.researchgate.net/publication/5025629_The_shifty_Laffer_curve).
82. Laffer A. The Laffer curve: past, present, and future / A. Laffer // Backgrounder. The Heritage foundation. - 2004. - Vol. 1765.
83. Miller M.H., F.Modigliani. Dividend Policy, Growth, and the Valuation of Shares // Journal of Business, October 1961.

84. Laffer A. The Laffer curve: past, present, and future / A. Laffer // Backgrounder. The Heritage foundation. - 2004. - Vol. 1765.
85. Musgrave R. A., "Tax Policy in a Global Economy" *The American Economic Review* (1996).
86. Avi-Yonah R. S., "Globalization, Tax Competition, and the Future of Taxation" Harvard Law Review (2000).
87. Aleksandr P. Alekseenko, «Russian Legal Policy Regarding Digitalization», Amurcon 2020: International Scientific Confer.. 10.15405/epsbs.2021.06.03.7. (URL:https://www.europeanproceedings.com/article/10.15405/epsbs.2021.06.03.7).
88. Simon Fuller, «Digital finance: shift towards cashless society' raises legal and policy questions», (URL:https://www.ibanet.org/).

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների
համակարգման բաժնի պետ,
տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների
բաժնի փորձագետ:

КАРЕН ОГАНЕСОВИЧ МАМИКОНЯН
кандидат экономических наук, доцент,
начальник отдела координации научных исследований
и технического апробирования,
эксперт отдела экономических и бухгалтерских экспертиз
Национального бюро экспертиз Республики Армения.

KAREN H. MAMIKONYAN
Ph.D in Economics, Associate Professor,
Head of the Scientific Research and Technical Testing
Coordination Department,
Expert of the Department of Economic and Accounting Expertise
of National Bureau of Expertises of the Republic of Armenia.

ԲԻԶՆԵՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մենագրություն

ԵՐԵՎԱՆ 2024
Հեղինակային հրատարակություն

Չափսը՝ 60x84 * 1/16:
Ծավալը՝ 9 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 300: